ԵՂՇ ԱՂԱՆԳՈՅՆ

ԼՈՒԹԵՐԻ ԵՒ ԿԱԼՎԻՆԻ

ԵՒ

ՀՐԱՀԱՆԳ ԶՕՐԱՒՈՐ

ՅՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

1847

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966

2(09)

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅՆ

ԼՈՒԹԵՐԻ ԵՒ ԿԱԼՎԻՆԻ

ԵՒ

ՀՐԱՀԱՆԳ ԶՕՐԱՒՈՐ

ՅՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՏԷԼԱՑՕՐԵԱՅ

ԳԱՂՂԻԱՅԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՅԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՓԱՐԻԶՈՒ

ԱՀԽԱՏԱՍԻՐԵԱԼ Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ



Գրադ
863

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

1847

ՀԱՅԿ ՍՍՌ Գ. ԱԼԻՇԱՆԻ ԱՆՎԱՆ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՒ ԵՂԲՕՐ ՆՈՐԱ ՊԱՐՈՆ ԲԱՂՏԱՍԱՐԱՅ ՆԵՓԻՍԵԱՆՑ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ 'ի կարիս օտարին ձեռն տալ պարտ և արժան իցէ, քանիցն առաւել ընտանւոյն. և եթէ արկածից օտար ժողովրդոց կարեկից լինել գեղեցիկ իցէ, սեպհական ազգին ոչ կարեկցութիւն լոկ, այլ և գօտէպինդ վառել առ 'ի զարկածն կարձել, անհրաժեշտ պարտք իցեն:

Նախաշաւիղ բանիս 'ի ճահ պատահեսցէ այժմ վիճակի Ազգիս 'ի բազմավանդ ժամանակիս, յորում դարձեալ աւասիկ փորձի և չարչարի եկեղեցի Հայաստանեայց. յորժամ դարձեալ օտարուսումունք վերաբուսան յազգին, ոչ յազգէն՝ այլ յօտարաց այլալեզուաց և այլակրօնից. որք իբրև

արածութիւն յաւուրս մեր առ հասարակ Ճարակին 'ի նորօրինակ շշուկ մահու։

Քանզի ուր Արևելք սակաւուք ամօք յառաջ միշտ տարևոր սրածութեամբն զբաղում բիւրաւորս 'ի ծննդոց իւրոց տեսանէր շեղջաշեղջ դիակնացեալս 'ի քաղաքս քաղաքս՝ 'ի Ճիչ և 'ի գոյժ դառնութեան, և մինչդեռ վայրիկ մի ոգի առեալ 'ի մահագոյժ հարուածոյն սրածութեան, խնդայր առ ժամանակ մի 'ի խնամոց Տէրութեանն քառասնօրեայ պահակերութեամբն, անդուստ չար ևս յաջորդեալ սրածութիւն՝ հոգւոցն սատակիչ, և յարևմտից ընդ արևելս ընթացեալ, նաև 'ի մերում ազին այսօր Ճարակ դտանէ՝ զբաղումս յորդւոց նորա յոգիս առհասարակ դիակնացուցեալ։

Եւ զի՞նդ ազգասիրի աչք ոչ Ճնշեսցեն արտասուս, տեսեալ զի արք օտարք և տարաշխարհք առ 'ի մէնջ և անծանօթք 'ի լսելիս հայորերոյն, արք՝ ամենայն օտարոտի ուսմամբք լցեալք՝ Լութեր և Կալվին և նոցուն արբանեակք՝ սպրդեալք յազգին, արք մոլորահեաք և ինքնաձեռնադրելի քարոզիչք, ոխերիմք հանդիսացեալք միանգամայն ընդդէմ ամենայն դաւանութեանց Կաթողիկէ եկեղեցւոյ և աստուածաւանդ քարոզութեան հաւատոյ մերոյ սրբոյ Լուսաւորչին, ոչ միայն ծանուցան անծանօթքն, այլ և համարձակ որոմնացանք ապակա-

նագործք հաւատացելոց՝ գնան աւադիկ շրջին մե-
ծաքայլք ընդ արևելս՝ յետ միանգամ բոցակիզելոյ
զարևմուտս, և յետ տեսանելոյ այժմ յաւուրս մեր
յԵրոպա զվատել օր ըստ օրէ և զնայտառակել
սափատուտ քարոզութեան իւրեանց, 'ի դառնալ
անդ ստէպ ստէպ յիւրեանցայնոց անսի՝ մանաւանդ
յիմաստնոցն և յերևելեաց՝ անդրէն յուղղափառ
հաւատս 'ի ծոց Հռովմէական կաթողիկէ եկեղե-
ցւոյ։ Քանզի սոքա իբրու «Վերանորոգել» զան-
փոփոխելի հաւատ սրբոյ Եկեղեցւոյ և զքրիստո-
սաւանդ կարգ վարուց նորա՝ խաբանօք համբա-
ւելով, սակայն միանգամայն զամենայնն՝ որպէս
գործեն յարևելս աւադիկ՝ բառնան 'ի միջոյ։

Ոյր աղագաւ և 'ի տեղեաց տեղեաց յազգէս բո-
ղոքարկուք սրտառուչք յաճախեցին առ մեզ գրովք
և բանիւք՝ ձեռն 'ի գործ անդանդաղ յօգն հասա-
նել գայթակղելոց որդւոց ազգին, և դարման՝ ան-
յապաղ տանել կարևոր պիտոյից այսոցիկ։

Վասն որոյ և յետ այլոց մատենից կարևորաց 'ի
նոյն՝ ընծայելոց Յովհաննէս յաշխարհիկ բարբառ,
աւասիկ և զմատեան զՏրլաֆիօրեայ ժողովրդապետի
'ի Լիոն զկորովաբան Վարդապետին Գաղղիացւոյ
ընդդէմ հերձուածոյն Լութերեանց տամք թարգ-
մանաբար։ Բայց զայս 'ի գրոց բարբառ ըստ հասարակ
փափաքանաց, որ և մերոցս իսկ սիրելի ախորժա-

կայ՝ միշտ 'ի ծոլկի պահել զհոյակապ լեզուն յամենայն ազգ մատենագրութեան։

Այլ սակաւուք խօսեցեալ վասն մատենից, սա ոչ միայն անգամին յարմատոց անտի իլէ զաղանդն, այլև յամենայն մասունս ուղղափառութեան հաստատմամբ և անսասանելի գործէ զհաւատացեալս։ Եւ է աքանչելի կնիք սեպհական Տրդատայ, առաջին՝ հանճարարուեստ անզուգական ոճ կարգի մատենագրութեանն, որով իբրև ոսն առ ոսն հրաշապէս յինքն գլխովին ածեալ յանկուցանէ զմոլորեալն։

Եւ երկրորդ անգամ՝ անվանելի ձեռնարկքն, որովք ոչ վայր թաքստեան և ոչ տեղի փախստեան թողու ինչ մոլորելոյն։

Եւ հանդերձէ զամենայն հեշտալուր, քաղցր և ամոք, և լի օծութեամբ առաքելական հոգւոյն, 'ի վեցեակ Տրամախօսութիւնս Նորաղանդի և Ուղղափառ Վարդապետի։ Տրամախօսութիւնք ոչ կեղծեալք, քան թէ ճշմարտութեամբ հանդիպեալք, որպէս և է իսկ իմաստասիրել 'ի պատմութենէ առաջին Տրամախօսութեանն։

Ոչք միանգամ 'ի լոյս ընծայեցին տպագրութեամբ զայս մատեան յԻտալիա 'ի Հռոմ, նախ յամին 1819 'ի լեզու գաղղիական, և երկրորդ՝ յամին 1821, յիտալականն, զայս կնքեցին արժանապէս վասն մատենից, եթէ «Յարձանագրութիւնս հա-

„ աստոյ՝ որ ընդ ժամանակս ժամանակս 'ի վեր ե-
„ լեն 'ի Գաղղիա, մի յառաւել հրաշակերտիցն է
„ սա անշուշտ։ Մատեան հաւատոյ ուղղափառու-
„ թեան դժուարաւ յոյժ գտցես, որ այնչափ ա-
„ ղուեստիւ աշխատասիրեալ ի՛ցէ և այնչափ գեղեց-
„ կակարգ ոճով յերիւրեալ ի՛ցէ։ Ընդ յստակա-
„ տես պարզութեան բարբառոյն՝ որ զլսելիսն յափշ-
„ տակէ, հրաշասցիս 'ի սմա և ընդ կորովութիւն
„ փաստաբանութեանն՝ որ զմիտսն գերէ „։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ա.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հիմնարկութիւն եկեղեցւոյ. Հաստատութիւն նորա. Կարգ տեսչութեանն 'ի խնդիրս հաւատոյ ընդդէմ հերձուածողաց, և ըստ մասնեայ՝ 'ի վեշտասաներորդ դարուն ընդդէմ Լութերի և Կալվինի և արբանեկաց նոցա:

ՆՈՐԱՂԱՆԴ ԿԱԼՎԻՆԱԿԱՆ ԱՌ ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՆ

ՀԱՍԵԱԼ գամ առ քեզ, տէր, անարկեան վստահութեամբ, և ակն ունիմ եթէ ժողովեսցես զիս բարեգթութեամբդ:

Ծնեալ եմ 'ի Օվիցցերա 'ի սահմանս Կալվինականաց, և են ամիսք ինչ յորմէ հետէ բնակիմ աւադիկ 'ի Գաղղիա՝ աստ 'ի Լիոն քաղաքի. և ժամանակս ձիգս հաստատեալ եմ առնել զընակութիւն իմ 'ի սմա 'ի պատճառս գործոց վաճառականութեան

իմոյ, և կեանս իմն խաղաղաւէտս կամիմ վարել 'ի քաղաքիս յայսմիկ։

Այն արդեօք աւուրք ոչ բազումք, յորմէ հետէ ծանեայ զի պատանի ոմն 'ի Օլիցցերայ յիմոյն սեպհական թաղէ, զորմէ և հանապազ լուեալ իսկ էր իմ բանս բարեաց, դարձաւ և ընկալաւ զուղղափառ հաւատն՝ զոր կոչէք. յորում դու ինքնին վարժեցեր զնա, և դու ինքն հանդերձեցար առնուլ զգաւանութիւն ճշմարտութեանն 'ի նմանէ և զհրաժեշտն յաղանդոյն իւրմէ։

Իմ երբէք չէր տեսեալ զայն հանդէս հոգևորական. հետաքննութիւն սաստիկ ձգեաց զիս 'ի տեսութիւն այնր, և առընթերակայ եղէ ես արարողութեանն այնմիկ հանդերձ բազում կրօնակիցք բարեկամաք իմովք։

Եւ արդ խոստովանիմ անկեղծութեամբ զի այլ յայլմէ եղէ ես 'ի տեսանել անդ զայդ հանդէս. մանաւանդ յորժամ և բազմամբոխ ժողովուրդք հանդիսացնին խուռն ընթացեալք յակնիս կային անդաւնօր։ Յորժամ և նորահաւատդ այդ պատանի իմն երբեմն կրօնակիցս և ծանօթ՝ երևէր ինձ բոլորապտուղ նուիրեալ զանձն 'ի լուր աստուածապատգամ վարժից քոց և քարոզութեան, անպատմելի մխիթարութեամբ ցնծացեալ 'ի հոգին։ Եւ ես ինքնին յայնժամ ըստ իմոյ բաւականին ուշն ուշով ունկն դնէի բանից քոց։

Եւ տեսի յայնժամ զի կէաք յորոց անդր կային 'ի լուր քարոզութեանդ, խոցեալք 'ի սիրտ արտասուս բազում հեղուին. իսկ և ես յայնժամ, ոչ գիտեմ, առիմ հարեալ 'ի հոգի և ստիպեալ, ոչ կարէի զուսպ ունել զարտասր աչաց իմոց։

Իսկ 'ի մէջ այլոց բանից քոց քաջիկ ևս միտ եդի

ես քեզ, յորժամ մեծապէս պարզութեամբ և քաջայայտս Ճառէիր, եթէ զիարդ Ռոմերեանք և Կալվինեանք յուրաստ լինելով զհեղինակութենէ Եկեղեցւոյ 'ի սահմանել որոշել զինդիրս հաւատոյ, և ոչ ընդունելով այլ կանոն 'ի սահման հաւատոյ բայց զգիրս սուրբս, զոր այր այր 'ի նոցանէ մեկնէ և թարգմանէ ըստ կամի և ըստ լուսոյ բանին իւրոյ, պարտք անհրաժեշտք իցեն նոցա քննել և յուզել գէթ միանգամ ընդ ժամանակ կենաց իւրեանց, եթէ արդեաք շաւիղ նոցա և վարդապետութիւն նոցա իցէ Ճշմարտապէս հիմնեալ 'ի գիրս սուրբս. և թէ արդեաք Ճշմարտութիւնն ոչ գտանիցի. յեկեղեցւոջէ ուղղափառաց միացեալ ընդ Հռոմայ, եթէ 'ի բազմագունակ ժողովս և յընկերութիւնս մարդկան՝ որք հերձեալք որոշեցան 'ի նմանէ։ Քանզի և 'ի վախճանի յայս գեղեցիկս կնքեցեր զբանդ, եթէ « Ա՞ղորութիւնն » բազմադիմակ է և փոփոխի մինչ իսպառ. իսկ Ճշ» մարտութիւնն մի է և 'ի միում ժամանակի միան» գամայն յերկուս հետս կաղալ ոչ ունի։ Զիք ապա » իրաւունք, եթէ մարդ հաստատութեամբ դիցէ 'ի » մտի գտանել զՃշմարտութիւնն յընկերութեանն » յայնմիկ՝ յորում ծնեալ իցէ, միայն վասն այնորիկ՝ » զի անդ ծնեալ իցէ »։

Զայս լուեալ իմ, տէր, մտախորհ այնուհետև լինէի եթէ պարտ է ինձ ուրեմն առնել զքննութիւն զայս. այլ բարէ, ասէի ես ցանձն իմ, զիարդ մարթացայց 'ի գլուխս հանել զայն։ Ո՞չ առանիկ այսօրինակ քննութեան առուրց բազմաց պէտք իցեն, և պայքարաց բազմաց, և մատենից ևս բազմաց առընթեր եղելոց։ Բայց թէպէտ և կայցեն ևս, միթէ մարթ ինչ իցէ ինձ աներկեան խնդալ եթէ Ճշգրտիւ 'ի ցերայ հա-

սեալ իցէ իմ բուն և հարազատ իմաստից բանից սուրբ գրոց 'ի խնդիրս, յորս 'ի բազմահոլով դարուց հետէ պայքարեցին արք գերահամբաւք։

Որչափ ինչ մտախորհ լինէի, այնչափ և առաւել իբրու 'ի ցանց անել մատնէի 'ի խորհրդեան իմում. և բնաւ իսկ ամենևին ոչ գիտէի ուստ ուստեք պարտ իցէ սկիզբն առնել մեծիս այսմիկ հետաքննութեանս և գերագունի՝ յորմէ կախեալ կայ յաւիտենական փրկութիւն։

Մեծապէս յայնժամ ամբոխեալ և խռովեալ 'ի յոյզս մտաց իմոց, իբրու խթանաւ ոմանք վարեցաւ անձն իմ գալ առ քեզ և 'ի քէն խնդրել զօրինակ քննութեանն։ Քաջ իսկ երևեցար դու ինձ իբրև այր ուսեալ և ներհուն և նախանձայոյզ ճշմարտութեան։

Ընդեօք մնրթ իցէ ինձ, տէր, աներկևան ակն ունել եթէ շնորհեսցես ինձ աւուրս ինչ տրամախսօս լինել և պայքարել մեզ ընդ միմեանս, և նպաստամատոյց ինձ լինել յայս վիճակ կենաց իմոց, յորում տատանիմ՝ ես աւադիկ իբրև 'ի ծով բազմածուփ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒՂՂԱՓԱՌ

Օրհնեալ է Աստուած։ 'Նորա են շնորհքն որ ազդեցին 'ի սիրտ քո, և նորա է աջ զօրութեան որ առաջնորդեաց քեզ։ Պարտ է ուրեմն զմարգարէին այժմ կրկնել քեզ զբանն, « Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր » . Սղմ. 94։ 'Նա ինքն աւադիկ կամի զփրկութիւն քո, և հրաւիրանաւ կոչէ զքեզ խնդրել զճանապարհն անստերիւր որ միայն բաւական իցէ յապահովել զփրկութիւն քո։ Մի դու երբէք անտես արասցես զճշմարիտ երջանկու-

թեամբդ։ Ես կ եկ առիս բարեկամ. որ անձուկ յոյժ է ինձ առնուլ ժողովել զքեզ առաւել քան զիրեն քս, որով խնդրես մերձենալ առիս։

Այո, մտադիւրագոյնս մտցուք ընդ քեզ 'ի տրամախօսութիւն և 'ի պայքար քննութեան վասն աստուածային խնդրոյս։ Սահմանեսցուք մեզ 'ի զրուցատրութիւն աւուրս և ժամն որչափ ինչ դիպողագոյնք մեզ իցեն։ Ահա ես ճշգրիտ ըստ ժամադիր պահուն գտայց առ քեզ, և դու անթերի ըստ ժամուն գայցես առիս։

Այլ կանուխ աւադիկ քեզ բարեկամ ազդ առնեմ, չեն ինձ կամք երբէք, և հնարիմացութիւն չառնում յանձն առ 'ի տիրել ճոխաբար իմովքս ճառիւք 'ի վերայ ոգւոյդ և մտաց և կամաց քոց։

Ես քեզ մեկին և պարզ առաջի եղից զճշմարտութիւնն յայտնիս և անկոուելիս։ Զրուցատրեսցուք փաստիւք. և դու ինքնին ապա դատաստան արասցես, զինչ պարտ իցէ խորհել վասն այնոցիկ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Բարի է բանդ. և այժմն իսկ 'ի ժամէս յայսմանէ սկիզբն արասցուք տրամախօսութեանս։ Այլ գիտեմ ոչ՝ եթէ և քեզ քաջադէպ իցէ ժամն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ես կարի իսկ քաջ. մտադիւրագոյնս այժմն սկիզբն արասցուք. քանզի և ինձ չիք ինչ այլ նախապատիւ քան զայս պիտառնութիւն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Դու ինքնին տէր յաւուր հանդիսին այնորիկ 'ի հրաժարեցուցանել անդ յաղանդոյն իւրմէ զեկամուտն քո զիմն քաղաքակից երբեմն Կալվինական, ասացեր մեկին՝ եթէ Եկեղեցի ուղղափառաց ընդ տիեզերս միացեալ ընդ Հռովմայ՝ է միակ ճշմարիտ Եկեղեցի Յիսուսի Քրիստոսի. և թէ՝ վասն այսորիկ ոչք միանգամ 'ի Նորաղանդից ծնան արտաքոյ Նորա, պարտին միանգամ գիմել 'ի գիրկ Նորա իբրու հարազատ մօր և միանալ ընդ Նմա. քանզի և Նախնեաց և հարց Նոցա որ ծնան 'ի Նմա՝ չէր պարտ թողուլ լքանել զնա։ Թռուի ինձ եթէ այս էր հիմն և հաստատութիւն գոգցես ողջոյն հրահանգաց և քարոզութեան քո։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այո՛, քաջ 'ի վերայ հաւեր։ Այս է իսկ այս խընդիր կարևոր յոյժ և նախասլատիս, զոր հանդերձեալ է մեր 'ի քնին առնուլ 'ի միասին։ Այլ առ 'ի կարգ գեղեցիկ տալ ճառիս, անդստին յառաջին տրամախոսութենէ աստի տաց քեզ ծանօթութիւն ընդհանուր յաղագս կերպարանին՝ զոր ետ Քրիստոս եկեղեցւոյ իւրում 'ի հիմնարկելն զնա, և յաղագս վիճակին՝ յորում եկաց նա անդստին 'ի հիմնարկութենէն մինչև յաւուրս մեր։

Ճառ արկից քեզ ոչ զումպէտից ինչ, այլ որ անցք և դէպք լցեն եկեղեցւոյ՝ առհասարակ հոչակեալք և ստոյգք և հաստատք, ծանուցեալք միապէս և ընկալեալք եթէ յուղղափառաց և եթէ 'ի Նորաձայն

քարոզչացդ, և որք առեալ ածցեն զմեզ 'ի հետաքրն-
նութիւն պայքարեալ խնդրոյն՝ որ ընդ մեզ և ընդ
եղբարս ձեր հերձեալս, որոյ և կորուստն դառնապէս
ցաւ է մեզ հանապազ։

Ա.յլ մինչև խօսեալ իմ յաղագս ուղղափառու-
թեան, հարցանեմ ցքեզ, իցե՞ս դու Ճշմարտապէս
սիրող և հետևող քրիստոնէական Կրօնին. և հաս-
տատութեամբ հաւատացեալ է՞ քո ոգին՝ զոր միանգամ
ուսուցանեն մեզ գիրք սուրբք. գիրք՝ զոր խոստովանի
և դաւանի համարձակաձայն բարբառով ընկերութիւն
աղանդոյդ, յորում ծնար դու և սնար և հրահան-
գեցար։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Այս կարի քաջ սիրող եմ քրիստոսեան Կրօնիս, և
եմ իսկ ես Ճշմարտապէս քրիստոնեայ. քանզի և ու-
սանիմք իսկ և վերծանեմք և դաւանեմք՝ որպէս և
դուք՝ զհանգանակն առաքելական. և ես 'ի բոլոր
սրտէ հաւատացեալ եմ 'ի նոյն։ Այս եթէ մինչև ցարդ
մնասուս ինչ և այլ դաւանեմ զհաւատոյ՝ զոր ինձ 'ի
տիս տղայութեան իմոյ ուսուցին և յորս նոքին իսկ
մեր եղբարք այլաձայնք են 'ի հաւատոյն ձերմէ, վասն
այսորիկ դաւանիմ՝ քանզի կարծեմ լինել Ճշմարիտս։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ա.յլ արդ 'ի քնին առցուք զամենայնն. սակայն և
կարգաւ յառաջ խաղացցուք։ Այս առաջին՝ բացցուք
մեզ առաջի զԱ.ստուածային սուրբ, որ ուսուցանէ մեզ
յաղագս կերպարանին՝ զոր ետ Քրիստոս եկեղեցւոյ
իւրում։

Որպէս Աստուծոյ էջ յերկնից 'ի յերկիր 'ի փրկութիւն ազգի մարդկան։ Նա եկն նա առ մարդիկ հիմն արկանել Կրօնի՝ որ միայն բաւական է առաջնորդել մարդկան 'ի յերկինս, և որ հանդերձեալ է յաւերժանալ մինչև 'ի կատարած աշխարհի։

Իսկ 'ի քարոզութիւն Կրօնիս այսորիկ ընտրեաց առաքեալս և աշակերտս, և առաքեաց զնոսա աւետարանել յընդհանուր տիեզերս. և կամեցաւ զի հաւատացեալքն աստուածային Կրօնիս եղիցին մարմին մի. և զայն մարմին ստեղծեալ յընդհանուրս՝ կոչեաց նա Եկեղեցի իւր։

Ո՞չ արդեաք այս իցէ յոր և դու վարժեցար, և դու ինքնին հաւատաս։

ՆՈՐԱՂԱՆԴԻՆ

Այո՛, այլ զինչ այսի կամիցիս զհետ բերել։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ողէ դու բարեկամ՝ հետևեայ ինձ. ես քեզ չասացից ինչ որ ոչն իցէ այնպէս պարզ և մեկին և ճշմարիտ, որպէս զոր արդէն 'ի մանկութենէ լուեալ իսկ իցէ քո։ Այս եկեղեցի որպէս և հաւատքն զոր նայն դաւանի՝ պարտի յաւերժանալ մինչև 'ի կատարած աշխարհի։

Այսպէս չէր 'ի դէպ Քրիստոսի տեառն մերոյ հանապազ անձամբ յերևանի կառավարել զեկեղեցի իւր, և հանապազ կենակից մարդկան լինել 'ի վերայ երկրի։ Պարտ էր նմա յետ հեղլոյ զարիւն իւր 'ի փրկութիւն մարդկան համբառնալ յերկինս և նստել

աստուածային մարմնովն ընդ աջմ Հօր Աստուծոյ։ Իսկ և առաքեալքն նորա և աշակերտքն զորս ընտրեաց լինել վարդապետս եկեղեցւոյ իւրոյ, ընդ մահու պարտեաք գրաւեալ էին և նոքա։

Հարկ էր ուրեմն և այլոց վարդապետաց յաջորդել նոցա դարուց 'ի դարս, և մինչև 'ի կատարած աշխարհի հանդիսացուցանել զայն մասն եկեղեցւոյն Քրիստոսի, որ կոչի « Եկեղեցի վարդապետող »։

Այս դասակարգութիւն դեղեցիկ զորոյ և բանն ինքնին ապացուցանէ զկարևորութիւնն՝ կարգեաց և յայտնապէս պատուիրեաց ինքնին փրկիչն աստուածային իշխանութեամբ առաքելոցն սրբոց մինչև համբարձեալ յերկինս, երևելով նոցա զաւուրս քառասուն յետ յարութեանն իւրոյ։ Ասաց և ետ նոցա զաստուածային զայս առաքելութիւն. « Որպէս առաքեաց, ասէ, զիս Հայր իմ և ես առաքեմ զձեզ »։

Իսկ 'ի պահուն յորում ծածկելոց էր նա յաչաց նոցա ելանելով յերկինս ուստի էջն, պատգամ մանրամասին կարդայր նոցա աստուածաբար զվերջին զնոր հրամանս, և իբրու կնիք անդրժելի 'ի թուղթ աստուածառաք իշխանութեան նոցա՝ զնոյն մատնէհարեալ ասէր. « Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս » և յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր և ես առա» քեմ զձեզ։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք զա» մենայն հեթանոս. Մկրտեցէք զնոսա յանուն Հօր » և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ուսուցէք նոցա պա» հել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ա» հաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև » 'ի կատարած աշխարհի »։

Ահաւասիկ քեզ հանդէս և կերպարան հրաշափառ հիմնարկութեան եկեղեցւոյն Քրիստոսի։ Եւ նշանախնդ

Գրադ. 863

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

մի ոչ անցցէ 'ի բանիցն Աստուծոյ։ Աւասիկ թողում ես զձեզ, ասէ. և ընդ իմ առաքեմ զձեզ. և զայս առաքելութիւն տամ ես ձեզ զօրութեամբ գերագոյն իշխանութեանն զոր առի յերկինս և յերկրի։ Այս առաքեմ զձեզ, և միանգամայն առաքեմ ընդ ձեզ առհասարակ և զառաքեալսն առ 'ի ձէնջ և 'ի ձերոց յաջորդաց։ Բանզի այս եկեղեցի՝ զոր ես հիմնարկեմ, և զոր՝ որպէս ասացի « Դրունք դժոխոց մի՛ յաղթահարեսցեն », պարտի անդուլութեամբ կալ մնալ մինչև 'ի կատարած աշխարհի. քանզի ես ինքնին հանապազ հովանի կացեալ իսկ եմ նմա զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Իսկ զինչ այդ նոր ինչէ առաջի մեր. քանզի զնոյն և մեք դաւանեմք ճշմարտութեամբ. և թէպէտ և ինքնին տէրն չէր բացայայտեալ անստուտ բանիւքն, զոր յառաջ բերեր, անյերկուանալի է միաձակ հաստատութեան եկեղեցւոյ իւրոյ մինչև 'ի կատարած աշխարհի։ Բանզի ինքնին Քրիստոս ելոյծ զՀին օրէնսն՝ որ ստուերք էին և նմանութիւնք. ելից կատարեաց զամենայն մարգարէութիւնսն, որ նպատակ առաջի իւրեանց ունէին միայն զխոստացեալ Մեսիայն և զփրկութիւն ազգի մարդկան։ Ուր պարտ ուրեմն այնուհետև ակնկալեալ սպասել այլում օրէնսդրի և փրկչի։ Այկեղեցւոյ Քրիստոսի պարտ է կալ մնալ յարաժամ, ըստ որում և մարգարէքն գլխովին նախաձայնեցին։ Այս անշուշտ նաև մեր եկեղեցիք և ընկերութիւնք « Վերանորոգիչք » անուանեալքդ՝ ոչինչ մարթասցին այլոցան առ 'ի ձէնջ խորհել ինչ 'ի մասինդ յայդմիկ։ Այլ

չիմանամ տակաւին, զինչ ինչ հանդերձեալ լցէ քո զՀետ բերել 'ի Ճառիս այսի ընդդէմ վարդապետութեան մերոյ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Վաղ ընդ փոյթ տեսանիցես զայդ, այլ զՀետ կարգի իրացդ յուշիկ ընթացսուք։

Արդ ուրեմն հիմնարկեցաւ եկեղեցի Քրիստոսի. ինքն էլ յերկինս և առաքեաց զՀոգին սուրբ 'ի յերկիր. և առաքեալքն սուրբք սկիզբն առնեն 'ի գործ վարել զՀրամանս երկնաւոր վարդապետին։

Յետ քարոզելոյ զՀաւատս աւետարանին Յերուսաղէմ՝ և ընդ ամենայն Հրէաստան, երթեալ աւետարանեն զնոյն և ամենայն ազգաց Հեթանոսաց և մինչմուխս ևս լինին մինչև 'ի ծագս երկրի։ Օծութիւնն աստուածային սուրբ Հոգւոյն սփռեալ ծաւալի յամենայն 'ի սիրտս ունկնդրաց. եռանդն երկնաւոր շնչէ կենագործէ զնոսա. յոգնահոյլ բազմութիւն մարտիրոսաց յամենայն սեռէ և յամենայն հասակէ վկայութիւն անշուշտ ընծայէ ճշմարտութեանն՝ զոր յայտնեաց Աստուածորդին։ Արհամարհեալ ընթադրեն նոքա զամենայն տանջանս և զդառնակսկիծ չարչարանսն. քաջայինդ արութիւն ոգւոյն նոցա՝ գերագոյն քան զմարդկան՝ նշան յաղթութեան կանգնէ 'ի վերայ մոլեգնութեան չարաշուք դահճայն. և նոքա անպատում ցնծութեամբ՝ իւրեանց իսկ վարդագոյն արեամբն իբրու անջինջ մատնեհարաւ կնքեն զճշմարտութիւն հաւատոյն իւրեանց,

Ո այս՝ և բիւրս իմն հրաշից սքանչելագործեն առաքեալքն սուրբք՝ զանունն աստուածահրաշ կար-

դայեալ միայն զՀեղինակին հաւատոյ, զոր յանձին կալան քարոզել և հրատարակել ընդ տիեզերս։ Նշանք աբանչելեացն առհասարակ փայլատակեն յընդհանուրս։ Պատգամք անսուտք Յիսուսի Քրիստոսի 'ի գլուխս ելանեն անվրէպ։ Լսէ և դառնայ աշխարհ. և եկեղեցի սփռեալ տարածի ընդ ամենայն երկիր։

Այլ սակայն անդստին 'ի հիմնարկութենէն դէպք քանիցս պատահեցին 'ի դարս որ զկնի։ Այս աստուածային Կրօն՝ որ ուսուցանէ մարդկան կռուել և ընդ բռամբ զկիրսն նուաճել, ոչինչ արմատաքի խլէ զսերմանն։ Օդրուն երկնից բանայ մեզ առաջի այս եկեղեցի, յորդորէ՝ զի հոգևոր իմն բռնաբարութեամբ յափշտակեսցուք զնա, իբրև նահատակք քաջք հանապազօր պատերազմեալ։

Մարդիկ՝ որ դառնան լինին քրիստոսնեայք, պարտին հանապազ գեր 'ի վերոյ կրկին հանդիսանալ, և դձախողակ յօժարութիւնս իւրեանց յաղթահարել։ Բայց է զի երևեցան 'ի նոսա հոգիք ապստամբք և խստապարանոց և 'ի կարծիս իւրեանց յամառեալք. որք առ հպարտութեան կամ այլ ինչ ծածուկ պատճառաց 'ի վէգ և 'ի պայքար մտին սաստկապէս։ Այս եկեղեցի յաւուրց անտի ծննդեան իւրոյ վիշտս բազումս և չարչարանս կրեաց 'ի նոցանէ։

Այս ահաւասիկ Գործք առաքելոց 'ի գլ. 8. 'ի դէմս ածեն մեզ։ Սիմոն ոմն մոգ դարձեալ 'ի հաւատս՝ անդէն վաղվաղակի 'ի մոլորութիւն անհնարին անկանէր. քանզի համարեցաւ ընչիւք ստանալ զպարգևս Հոգւոյն սրբոյ, և ապա եկեալ հատանէր նա 'ի Հռովմ մարտ դնել կռուել յայտնապէս ընդդէմ քարոզութեան սրբոյն Պետրոսի, որ և հրապարակագոյժ խայտառակեաց զնա անդանօր։

Եւ Դիոտրեփէս աստիճանաւորեալն պատուով եկեղեցի Քրիստոսի՝ այնչափ յաւակնեցաւ մինչև ոչ ընդունել զառաքեալն սուրբ զՅոհաննէս, և յանդգնեցաւ ևս հանել յեկեղեցւոյն զայնոսիկ՝ որ աշակերտեալն էին վարդապետութեան նորա. ՃԻ. թղթ. Յոհ:

Եւ 'ի ժամանակաց անտի որք միանգամ հակառակէին վարդապետութեան առաքելոյն՝ անուն ընկալան զՀերետիկոսի և զՀերձուածողի. իբրու որ դիմամարտ եկեղեցւոյ ունիցին քարոզութիւն:

Իբրև ճշմարիտ թշնամիս Յիսուսի Քրիստոսի ունէին զնոսա առաքեալքն սուրբք, և սուրբն Պաւղոս գրելով առ Տիտոս Կրետացւոյ եպիսկոպոս, ասէր: « Յառնէ հերձուածողէ յետ միանգամ և երկիցս » խրատելոյ, հրաժարեայց. գիտասցիր զի թիւրեալ է » այնպիսին և մեղանչէ, անձամբ զանձն դատապար- » տեալ »:

Օնոյն և սուրբ առաքեալն Յովհաննէս. « Եթէ » ոք, ասէ, եկեսցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս » ոչ ունիցի զոր ընկալայք, մի ընկալջիք զնա 'ի տուն » ձեր և մի ողջոյն տայջիք նմա: Եւ եթէ ոք ողջոյն » տայցէ նմա, կցորդ լիցի չարեաց գործոց նորա »:

Իսկ ապա յետ այնորիկ յաճախեաց յոյժ թիւ հերձուածողացդ, զի և 'ի դարուն երկրորդի երանելին Երանոս եպիսկոպոս այսր մերոյն քաղաքի Լիոնի 'ի գիրս Հերձուածոցն 'ի դիմի հարեալ վանէ զբազմահոյլս նոցա, ըստ որում Կերինթոսն էր և Եբիոն և Բասիլիդէս և Մարկիոն և Կարպոկրատէս և Վնոստիկեանք: Իսկ և 'ի դարս որ զկնի յարեան 'ի նոցանէ և այլք բազումք:

Եւ արդ զինչ գործեցին առաքեալքն սուրբք և որ յետ նոցա եպիսկոպոսունք 'ի մերժել զթշնամիս

ճշմարտութեանն և 'ի սնդել կհաւատացեալսն 'ի Քրիստոս։ Ի գիրս Գործոց առաքելոցն ընթեռնումք եթէ 'ի լինել հերձուածոց կարծեաց վասն կարևորութեան պահպանութեան օրինադրելոցն 'ի Յոսիսէ, ժողով գումարեցին Յերուսաղէմ Առաքեալք և երիցունք. և յետ հարցափորձի քննութեան ընդ միմեանս ժամն ձիգս՝ սահմանեցին վասն կարևոր խնդրոյն և արարողութեանն այնմիկ։ Իսկ որ քաջիկ մտադրութեան է արժանի 'ի գործ ժողովոյն այնորիկ, այնչափ իմն աներկևանութեամբ վստահք էին ժողովականքն յանսուտ խոստումն երկնաւոր վարդապետին իւրեանց, եթէ ինքնին Հոգին սուրբ առաջնորդ և ներշնչող է սահմանի որոշման նոցա, մինչև յայտնաբարբառ զնոյն հրատարակել 'ի ժողովական թղթին իւրեանց և ասել. « Հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի՛ ինչ » աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն 'ի կարևորացս » յայտոցիկ », և զայլն ևս։

Եւ ապա այս առաջին ժողով եկեղեցւոյ եկաց անստերիւր նախատիպ օրինակ և այլ ամենայն ժողովոց եկեղեցւոյ՝ որ զկնի։

Յամենայն իսկ 'ի դարս 'ի վեր բուսան յեկեղեցւոջ հերձուածք այլ և այլք, և բուսցին ևս հանապազ. ըստ որում նախաձայնեաց Առաքեալն. ա. Կոր. 11. « Բայց և հերձուածք եղիցին 'ի ձեզ. զի որ ընտիրքն լիցեն 'ի ձեզ՝ երևեսցին »։

Եւ եպիսկոպոսունք յաջորդեալք առաքելոցն զայն ինչ գործեցին՝ զոր միանգամ ցուցին նոցա իւրեանց վարդապետք. գումարեցան 'ի ժողով, 'ի քնին առին զինդիրսն՝ որ պատճառք կացին հերձուածոցն և երկպառակութեան կարծեացն։

Եւ գումարէին այս ժողովք է՛ զի միայն յեպիսկո-

պոսաց գաւառացն՝ յորս 'ի վեր բուսեալ էր մոլորու-
թիւնն, և յայնժամ կոչէին՝ ժողովք մանաւորք. իսկ
է զի յորժամ հերձուածն ճարակէր 'ի բազում կող-
մանս եկեղեցւոյն, ժողովէին յայնժամ 'ի Միւնհոդոս
համաշխարհական, և կոչէին այնոքիկ՝ ժողովք ընդ-
հանրականք։ Բայց ըստ անխոտոր սովորութեան եկե-
ղեցւոյ 'ի դարս իւրաքանչիւր՝ յայսօրինակ ժողովս
քահանայապետն Հռովմայ հրաւէր առաքեալ գու-
մարէր զամենայն եպիսկոպոսունս եկեղեցեաց՝ իբրև
զլուխ եկեղեցւոյ 'ի պաշտամանէն յաջորդութեան
առաքելապետին սրբոյն Պետրոսի։ Նա է տեսանել
զայս յամենայն վաւերական արձանագրութիւնս եկե-
ղեցական պատմութեան։ Նա այս եպիսկոպոսունք հա-
սեալք գումարէին է զի բազմագոյնք թուով և է զի
նուազք ըստ տանելոյ հանգամանաց ժամանակին։
'Ստեալք 'ի քնին առնուին, հետազօտէին ճշգրտիւ
զինդիրն. և առընթերակաց իւրեանց ունելով զՀոգին
սուրբ ըստ նախ խոստմանն Քրիստոսի, սահմանէին
և դատակնիք ևս 'ի վերայ կապէին նզովիւք չափ 'ի
բաց հատեալ 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ զայնոսիկ՝
որք յողն կացեալ ոչ հպատակէին անկեղծ հաւատով
սահմանի վճռոյն իւրեանց։

Այս օրինակ դէպք ետուն 'ի դարուն չորրորդի
'ի պատճառս հերձուածոյն Արիոսի որ ժխտէր զաս-
տուածութիւն Բանին. ուստի և նզովեալ դատա-
պարտեցաւ յամին 323. 'ի տիեզերական ժողովոյն
'Նիկիոյ։ 'Նոյնպէս ապա և սակս հերձուածոյ ժանտին
'Նեստորի, որ դատապարտեցաւ յընդհանուր ժողովոյն
Նփեսոսի յամին 431։ Նա զայսօրինակ ապա և զայլ
ևս հերձուածս դատապարտեաց եկեղեցի, որ 'ի վեր
բուսան յայլ և այլ դարս Նկեղեցւոյ։

Ընդ զնոյն օրինակ՝ զոր կալաւ եկեղեցի անդստին 'ի սկզբանէ առ ամենայն հերձուածս, զնոյն երկրորդեաց և 'ի դարուն վեշտասաներորդի վասն հերձուածոյն Լուտերի և Կալվինի, զորոց ժամ է մեզ զարդիս խօսել։

Մարտինոս Լուտերոս ծնաւ 'ի Գերմանիա 'ի ծոց ուղղափառ Եկեղեցւոյ, յանձին կալաւ կեանս միանձնական 'ի կարգի սրբոյն Աւգոստինոսի, եկաց վարժապետ աստուածաբանութեան, քարոզեաց և զհամբաւի հարաւ յեռանդնոտ ոգւոյն և 'ի ճարտարաբանութենէն։ Բայց նախանձ ընդդէմ բերեալ՝ զի հայրապետն Հռովմայ ընտրեաց զԳոմինիկեան միանձունս նախապատիւ արարեալ զնոսա քան զմիանձունս իւրոյ կրօնին 'ի հրատարակել անդ քարոզութեամբ շնորհաբաշխութիւնս եկեղեցւոյ՝ զոր 'Ներողութիւնք կոչեն աստուածաբանք, ապերասան գտեալ 'ի կիրս ըստ տնկակցից բուսոյ բարուցն, նախադասութիւնս իմն աստուածաբանականս 'ի դուրս ժայթքեաց ընդդէմ վարդապետութեան եկեղեցւոյ. զորս և դատապարտեաց Պ. Լեոնդիոս Ի. քահանայապետ Հռովմայ։

Ի գլխաւոր աշակերտս նորա էին Մելանթոն և Բուկերոս ծնեալք իբրու զվարդապետն իւրեանց յուղղափառ Եկեղեցւոջ։ Յաև Կալվին և Օուինկլիոս ընդհետ ընթացան շաւղացն Լուտերի. բազում մասամբք յանձին կալան զմոլորութիւնս նորա, յորս յաւելին և ինչ ինչ նոր։ Եւ քանզի 'ի խնդիրս չէին միաձայնք ընդ միմեանս, ուստի և աղանդս զանազանս 'ի վեր երևեցուցին նոքա. որք և արագ արագ ճարակեալ սփռեցան 'ի կողմանս կողմանս Եւրոպայ։

Եւ ահաւասիկ քեզ պատճառ մեծի և աշխարհաքարոզ ժողովոյն Տրիդենտոյ. ուրանօր 'ի բազմահոյլ

եպիսկոպոսաց և վարդապետաց և աստուածաբանից՝ բազմահանդէս տարազու առընթեր կալով և դեսպանաց արքայից և նոցուն իսկ նորաղանդիցն՝ մեծապէս ճշդութեամբ կրկին և երեքկին քննեցան և պայքարեցան և դատապարտեցան մոլորութիւնք բազմագլուխք հերձուածողացդ այդոցիկ։

Այն դէպք ուրեմն ետուն յեկեղեցւոջ 'ի պատճառս հերձուածոցն Լուսերի և Պաւղինի, որ ինչ 'ի վաղ ժամանակաց հանապազ դիպեալ էր 'ի պատճառս հերձուածողաց։ Բանզի և նոցուն աղանդապետք և առաջնորդք առհասարակ ծնեալ էին 'ի ծոց ճշմարիտ եկեղեցւոյ, զոր և ճանաչէին իւրեանց մայր և դայեակ. այլ փոխանակ հոգատակելոյ զանձինս հրամանի նորա ապստամբք եղեն 'ի նմանէ, և հնարեցին իւրեանց աղանդս և հերձուածս զանազանս. և խնամով կալան և պահեցին զայն մասունս հաւատոյ միայն՝ ընդ որ ինքեանք հաճեցան։ Ընտրեցին անձանց ինքնիշխանք հովիւս նորս և վարդապետս. և մուծին փոփոխութիւնս 'ի պաշտօնն աստուածային, յաղօթս հասարակաց, և 'ի մատակարարութեան խորհրդոց։ Ուսուցին և քարոզեցին վարդապետութիւնս ընդդիմամարտս վարդապետութեան կաթողիկէ եկեղեցւոյ, սահմանադրութիւնս նորս. զորս և ըստ այլևայլութեան կարծեաց և ժամանակաց յանբաւս փոխեցին և փոփոխեցին, և պատճառս ետուն ընձիւղելոյ բազմահոյլ աղանդոց, մեծապէս տարբերեալք 'ի միմեանց. նաև հակառակամարտք իրերաց ըստ դաւանութեան հաւատոյ, ըստ տարազուն քարոզութեան, և ըստ արարողութեան պաշտամանն, և անուանս դիմակ դիմակ զանձամբ առին իբրև նշանաւոր գեստս սեպհականս։ Կէսք Լուսերեանք, և կէսք Պաւղինեանք. կէսք

Օ՛ուինկլինեանք, և կէսք Անգղիականք. կէսք Աբիմինեանք և կէսք Կրկնակնունք, և կէսք Սոկինեանք, այլովք բազմաք հանդերձ։

Ասասիկ քեզ 'ի կարճոյ շար և կարգաւորութիւն առհասարակ համբաւեալ և աներկուանալի գործոց և անցից եկեղեցւոյ Քրիստոսի։ Նա արդեաք ինչ մի ասացի՞ ես քեզ ներհակակիր ծանօթութեանցդ, զոր 'ի վաղընջուց ունէիր. և կամ ինչ մի թուիցի՞ քեզ յերկուանալի։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Վաղնջուց անցք եկեղեցական պատմութեան, զոր բացայայտեցեր, չեն յերկուանալի։ Այնպէս և ինչ մի չտեսանեմ նոր յայտնութիւն, որչափ ինչ յաղագս Լութերի և Կալվինի, և աշակերտաց նորա լուեալ իսկ էր իմ։ Ուստի և զոր միանգամ առ այժմ ասացեր, ընդունելի է։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս աստանօր՝ եթէ այնպէս հաճոյ լցէ քեզ՝ զկայ առցուք այսօր։ Առաւել կամիմ զթիւ տրամախօսութեանց մերոց յաւելուլ, քան թէ կարի երկայնագոյն յարդարել զայնոսիկ։ Մի՛ խուճապեցուք բարեկամ 'ի կարևոր խնդիրսդ։ Որպէս խնդրեմ վարժել հրահանգել զքեզ և ոչ տիրանալ քեզ, և զի և ժամանակ ոչ պակասի քեզ, այնպէս և կամիմ դուլ առնել քեզ, զի բաւական իցես ուշի ուշով դու ինքնին խորհրդածել վասն առաջիկայ խնդրոյն՝ մինչև անցեալ մեր յայլ խնդիր։

Անկեղեցի ուրեմն զորմէ Ճառեցի՝ է առաջին և միակ՝ որ ոչ վերանորոգեցաւ 'ի մարդոյ կամ յընկերութենէ իմեքէ։ Իսկ անդուստ այլքն ամենայն վերանորոգութիւնս ընկալան, կամ սկիզբն առին յանձանց իսկ իւրեանց բաժանելով, որպէս ընկերութիւնքդ ձերոց եղբարց, որք զանազանեալք են ընդ հասարակ անուսմբ՝ իբրու «Վերանորոգիչք, և Վերանորոգեալք», կամ իբրու «Բողոքարկուք», որ և Բրոդէսդանք։ Իսկ որ զանուն կրէ զԿալվինեան, զայն քեզ ինքնին է գտանել 'ի քոյ հայրենի երկրին 'ի Օվինցյերա, ուր և տիրացաւ Կալվին։

Արդեօք մաքրի իցէ քեզ կալ մնալ հանապազ անդէն 'ի կալվինականութեանդ, կամ թէ պարտք անհրաժեշտք իցեն քեզ արդեօք յառնել միւսանգամ մտանել Անկեղեցի ուղղափառաց, յորմէ ելին բաժանեցան հարքն ձեր։

Այս է աւադիկ գլխաւոր մեզ խնդիրն, զորմէ ունիմք մեք յետ այսորիկ պայքարել և տրամախօսել ընդ միմեանս։

Բայց յառաջ քան զամենայն ապաւինեա դու 'ի Հայրն լուսոյ։ Այս միայն բաւական է լուսաւորել զքեզ, և նա միայն՝ որում պարտիս դու 'ի խնդիր ելանել։ Անբէք կարևորագունի ինչ 'ի կեանս մեր պէտք ոչ եղեն մեզ և ոչ եղիցին, քան եթէ նորուն շնորհաց։ Անանդագին հաւատովք խնդրեա 'ի նմանէ լոյս. և գո՛ն գործեսցես զբռամբ ածել զայն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Շնորհս ունիմ յաղագս քաջախորհ խրատուցդ։ Քանզի և ոչ շահ ժամանակեայ է մեզ՝ առաջնորդա-

կան յայս ձեռնարկ, և ոչ այլ ինչ 'ի մարդկայնոց
աստի. ոչինչ այլ խնդրեմք, բայց ճանաչել զճշմարտու-
թիւնն։ Յամենայն սրտէ միայն մաղթեսցուք զլոյս
շնորհացն։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Բ.

Պարտ է և հարկ է Նորաղանդից թողուլ զժողովս Իւրեանց և միանալ ընդ Եկեղեցւոյն ուղղափառաց։ 'Նախ՝ զի զայս Եկեղեցի հիմնարկեաց ինքնին Քրիստոս, և ինքն եաւ նմա գլուխ և Առաքեալս։ Երկրորդ՝ զի զնորաղանդիցն ոչ հիմնեաց Քրիստոս։ և չովիւք նոցա չունին առաքելութիւն 'ի Քրիստոսէ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Քաջ ես բարեկամ զի անսիրտ 'ի ժամու եկիր գտանել զմեզ։ Այլ ես ինքն զգործն՝ որ 'ի վերայ կայր ինձ՝ 'ի բաց եդի 'ի ժամուս, զի 'ի ժամանակակէտն գտից զքեզ, և մի վայրիկ մի տայ քեզ սպասել ինձ։ Քանզի սերկեանս մեր այս տրամախօսութիւն 'ի յոյժ կարևորագունիցն եղիցի մեզ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Այլ ես ինքն, տէր, վառեալ եմ փափագմամբ լսել և ճանաչել զշնարտութիւնն, և զհետ երթալ այնմ յամենայն սրտէ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Հաստատիկ մեզ Ճշգրտիւ առաջարկութիւն խնդրոյն, զոր ունիմք այսօր 'ի քնին առնուլ։ Արդեօք որք միանգամ հանապազորդեն կալ մնալ 'ի ժողովս իւրեանց հերձեալս 'ի Կաթողիկէ եկեղեցւոյ ուղղափառաց, պարտիցին անհրաժեշտ պարտուք թողուլ զայնոսիկ և դառնալ միւսանգամ առ ուղղափառս։

Արդ ես հաստատութեամբ պնդեմ եթէ պարտք անհրաժեշտք են նոցա առնել զայս. և խոստանամ ես փաստս քաջայայտս և ցուցակութիւնս անխուսափելիս յառաջ բերել քեզ վասն այնորիկ։ Այլ մինչև մխեալ մեր 'ի փաստս, դիտողութիւն արժանի կամիմ առնել քեզ 'ի ժամուս։

Ինկերութիւնքդ նորաձայնից՝ որպէս ասացի՝ ելին 'ի ծոցոյ անտի եկեղեցւոյն ուղղափառաց։ Ինքնին Լուսերոս էր միանձն քահանայ, և Կալվին էր 'ի վիճակաւորաց եկեղեցւոյ, իսկ Օսինկլիոս էր երէց ժողովրդապետ թեմին 'ի Ցուրիկ։

Յորժամ ելին որոշեցան նոքա յեկեղեցւոյ, և դորձեցին իւրեանց ընկերշակութիւնս հերձուածոյ, չհարան նոքա 'ի դիմի միանգամայն ամենայն մասանց վարդապետութեան եկեղեցւոյ։ Յանձին կալան անթերի զնորհուրդ մկրտութեան. ուստի և ամենայն մանկունք առեալք զմկրտութիւն յընկերութիւնս ձեր նորաղանդիցդ՝ փրկութեան որդիք են եթէ մեռցին 'ի տղայութեան և նախ քան զկիրառութիւն տրամաբանութեան իւրեանց, և ըստ նմանէն՝ նախ քան զկորուսանել իւրեանց զարբայութիւն շնորհն զոր ընկալան 'ի մկրտութեանն։

Այլ ես և աւելի ինչ կամիմ ասել քեզ։ Արդի է պատահել զի յընկերութիւնս նորաղանդիցդ նաև ոք միանգամ յարբունս հասեալք լցեն խօթամիտք գլխովին՝ փրկեսցին և նոքա. քանզի և մարդի է զի յարբունս հասեալքդ այդոքիկ լցեն պարզամիտք յոյժ և բարեհաւատք, և իւիք երբէք ոչինչ հաղորդք մնալորութեան հերձուածոյդ. որովհետև եթէ անյաղթելի լցէ տգիտութիւն նոցա, չիք այնուհետև խափան փրկութեան նոցա։

Եւ ես յորժամ ասեմ, եթէ ոք կանն և մնան 'ի հերձուածն յայնոսիկ՝ ոչ կարեն փրկիլ եթէ չվիրաբանեսցին ընդ եկեղեցւոյն ուղղափառաց, ոչ ասեմ զայնցանէ որ 'ի չքմեղս են վասն անյաղթելին իւրեանց տգիտութեան, այլ ոք յամառեալք կան այնպէս 'ի կամաւոր և 'ի յանցաւոր տգիտութեան։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Իմ լուեալ էր, եթէ եկեղեցին Հռովմայ դատապարտէ առհասարակ անխտրաբար զամենեսեան՝ որ միանգամ լցեն հաղորդք ընկերութեանցն հերձելոց 'ի նմանէ։ Օ՛իարդ, ասէի ես ընդ միտս իմ, զիարդ կամ որով իրաւամբք զայր՝ որ ոչն երբէք կարաց ճանաչել զեկեղեցին Հռովմայ, մարդի լցէ դատապարտել զայնպիսին, զի ոչ ծանեաւ զնա։ Անշուշտ, ասեմ, այդ վարդապետութիւն հանապազ սաստիկ սրտնեցուցանէր զիս ընդդէմ եկեղեցւոյն ձերոյ։ Այլ արդ հանդարտեալ եմ 'ի բանիցդ, զոր այն ինչ 'ի վերջէ ասացեր։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Նա արդ ուրախ եմ և ես յոյժ այժմ, զի զայդ սրտնութիւն փարատեցի ես 'ի սրտէ քումմէ։ Այլ դու խելամուտ լեր զի յընկերութիւնդ յայդոսիկ հերձեալս՝ թէպէտ և բաց 'ի տղայոց իցեն ևս և այլք յարբունս հասեալք խօթամիտք գլխովքն՝ արժանընդունակք փրկութեան, սակայն և ոչ բաղմագոյնք ինչ են սոքա՝ որպէս թերևս կարծիցես։ Նա խելամուտ լեր դարձեալ՝ զի այն ամենայն տղայք և այն ամենայն յարբունս հասեալքդ, են իսկ անդամք կաթողիկէ եկեղեցւոյն՝ ոյր արտաքոյ չիք ուրեք փրկութիւն։

Վարդապետք քաջիմաստք աստուածաբանական վարժարանին Փարիզու մեծապէս բայայայտութեամբ ճառեցին զևնդրոյս 'ի գիրս տպագրեալ յանուն նոցա, անուանեալ «Դատակնիք Աստուածաբանական վարժարանին Փարիզի»։ Նա կամք են ինձ, աստանօր հատուած մի արժանալուր յառաջ բերել քեզ 'ի գրոց անտի, որ է այսպիսի։

» Որք միանգամ, ասեն վարդապետքս, կեան յընկերութեան իմիք՝ որոշեալք 'ի կաթողիկէ եկեղեցւոյն ուղղափառաց, և չեն բաւական ճանաչել գիտել զանցս իրաց զընկերութեանն այնորիկ, և մանաւանդ զսկզբան ծագման նորա. և ոչ իւրեանց պարտք են դատապարտել զառաջնորդս հերձուածոյն այնորիկ՝ իբրու զնորաձայնս ոմանս, որք թողեալ զդաւանութիւն զառաջին հաւատոյն իւրեանց, առանց ինչ կոչման և առանց ինչ օրինաւոր առաքելութեան կանգնեցան կացին իբրև մարդիկ անդուստ յԱստուծոյ առաքեալք առ 'ի քարոզել և 'ի

» հրահանգել զժողովուրդս . և որ մեծն է՝ 'ի սկզ-
» բան անդ ապստամբութեան իւրեանց ընդդէմ կա-
» թողիկէ եկեղեցւոյ՝ մնան մի միայն դուշնաքեայ դո-
» լով նոցա՝ բաժանեալ 'ի բոլոր մարմնոյ անտի՝ մարտ
» եդեալ կռուէին ընդդէմ լրութեան մարմնոյն եկե-
» ղեցւոյ՝ զոր Քրիստոսն հիմնարկեաց , և յորոյ 'ի
» ծոց՝ ծանօթութեամբքդ վերոյգրելովք մարթին և
» պարտին միւսանգամ դառնալ ամենեքեան նոքա՝ որք
» ձախողակ բախտիւ ծնան յընկերութիւնս յայնոսիկ՝
» որք հերձեալք են 'ի նմանէ . և ճշմարիտ է , զի
» անոքք իրացս այսոցիկ չեն ծանօթք ամենեցուն՝ որ
» ծնան և կեան 'ի ժողովս ընկերութեանցն այնոցիկ ։
» Որպէս և ոչ տղայոցն՝ որ ծնան և մկրտեցան 'ի հեր-
» ձուածն յայնոսիկ և որ չեն տակաւին հասեալ 'ի
» տիս բանաւորութեան՝ կարելի ինչ է վերահաստ
» լինել ծանօթութեանցն այնոցիկ . ըստ որում և ոչ
» այլոց բազմաց միամտաց յարբունս հասելոց՝ որ
» կեանն 'ի նոսա , և զորոց Աստուած միայն գիտէ
» ճշգրիտ զթիւն ։ Արդ , ասեմք , որք միանգամ այն-
» պիսիք են , եթէ տղայք և եթէ այն պարզամիտք կե-
» ցեալք այնպէս , ոչ մոլորութեան ինչ աղանդոյն
» բաժանորդք են , և ոչ բաժանման հերձուածոյն ։
» Բանզի են իսկ նոքա անմեղադրելիք 'ի ձախողակ
» վիճակին իւրեանց՝ վասն անյաղթելի տգիտութեանն
» որ 'ի նոսա » ։

Այլ սակայն անմեղադրելիք չեն յարբունս հա-
սեալքն , որոց տգիտութիւնն չիցէ անյաղթելի , և որ
յառաջ եկեալ իցէ 'ի պատճառաց ինչ շահախնդրու-
թեան , և 'ի կանխակալ ինչ կրից՝ որ անկրաւ իցէ և
յանդգնական , կամ՝ թէ յանփոյթն լինելոյ յայնս՝ որ
կարևորքն իցեն փրկութեան իւրեանց ։

Բայց դու առ այսոսիկ քաջ միտ դիր, և զոր միան-
գամ յաւելուն Պարգասեցդ այդոքիկ 'ի դատա-
կնիքն իւրեանց « Պարտ է, ասեն, զողայս զայսոսիկ
» և զայդ դաս պարզամտաց՝ որ կան յանյաղթելի
» տգիտութեան՝ համարել իբրև անդամն կաթողիկէ
» եկեղեցւոյ, արտաքոյ որոյ չկայ ամենևին փրկութիւն։
» Այս տղայք՝ քանզի տակաւին անկորուստ պա-
» հեալ են զշնորհն զոր ընկալան 'ի մկրտութեան, են
» առանց կարծեաց 'ի հոգւոյ անտի եկեղեցւոյ, այս
» է՝ միացեալ են ընդ նոյն հաւատով, յուսով և ունա-
» կական սիրով։ Իսկ պարզամիտքդ այդոքիկ մար-
» թին բազում ուրեք յընկերութիւնս յայնոսիկ լի-
» նել հրահանգեալ 'ի ճշմարտութիւնս ինչ հաւատոյ՝
» զոր անխախտ պահեցին ընկերութիւնքդ այդոքիկ,
» և որք բացարձակապէս բաւականք են առ փրկու-
» թիւն։ Արդեն հաւատալ յայնոսիկ անկեղծու-
» թեամբ, և թէ իցեն ևս 'ի մոլորութիւնս, այլ չեն
» յամառութեամբ յարեալ յայնոսիկ. քանզի 'ի
» միամտութեան կան և 'ի բարի հաւատս։ Արդ-
» թեն և շնորհայն աստուծոյ օգնականութեամբ
» կեանս վարել սրբութեամբ և անմեղութեամբ. և
» Աստուած ինքնին չհամարի նոցա զմոլորութիւնսն՝
» յորս յարեալ կան նորա միայն 'ի պատճառս ան-
» յաղթելի տգիտութեան։
» Բայց սակայն այս տղայք և այս դաս միամտաց
» վասն փրկութեան իւրեանց պարտապանք են եկե-
» ղեցւոյն ուղղափառաց՝ զոր ոչն ճանաչեն. քանզի
» առ 'ի նմանէ յառաջ գան և բաշխին ճշմարտու-
» թիւնքդ այդոքիկ փրկաւէտք և կենարարք. ըստ ո-
» րում և մկրտութիւնն ինքնին գլխովին՝ զոր աղանդքդ
» այդոքիկ պահեցին առ իւրեանս 'ի հերձանէն իւր-

» եանց յեկեղեցւոյ ։ Եւ թէպէտև այդ պարզամիտք
» և այդ տղայք անընդմիջաբար առին զայն յաղան-
» դոյն իւրեանց՝ յորում ծնան. այլ այն աղանդք ա-
» ռին զայն 'ի կաթողիկէ եկեղեցւոյ, զոր ինքնին
» Քրիստոս կարգեաց աւանդապահ մատակարարու-
» թեան խորհրդոց և գանձուն հաւատոյ » ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Եւ արդ հաստատեալ գիտայի 'ի բանից այսր, եթէ ձախողակս ուրեմն ուսուցեալ են ինձ յառաջագոյն յաղագս վարդապետութեան եկեղեցւոյն Հռովմայ ։ Եւ քաջիկ այսուհետև իմանամ զբանն, զոր ասէք՝ եթէ « Ընտաքոյ եկեղեցւոյ չիք փրկութիւն » . քանզի և ասէք իսկ 'ոչ առ հասարակ և անխտրաբար՝ եթէ ամենեքեան որ 'ի հաղորդութեան կեան հերձուածողաց՝ իցեն դատապարտելիք ։

Բայց արդ տեսցուք զիարդ ինձ յաջողեսցիս ցուցանել փաստիւք, եթէ պարտք անհրաժեշտք իցեն ինձ թողուլ զքանել զհաղորդութիւն ընկերութեանս՝ յորում ծնեալս եմ և սնեալ, և հրահանգեալ, և դառնալ միաւորել զիս ընդ եկեղեցւոյն ուղղափառաց ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այո՛ փաստս ցուցից քեզ զօրաւորս յոյժ . այլ պարտ է այժմէն 'ի սկզբանս Ճշմարտութիւն իմն հիմնական առաջի առնել՝ զոր և ամենայն այր քրիստոնեայ պարտի դաւանել ։

Արդ անշուշտ է, եթէ այր քրիստոնեայ ծնեալ և վարժեալ յընկերութեան իմիք՝ որ ոչն իցէ եկեղեցի

Քրիստոսի, պարտի առանց կարծեաց լքանել զայն և դառնալ միանալ ընդ եկեղեցւոյն՝զոր Քրիստոսն հիմնարկեաց և որ վասն այնորիկ է Ճշմարիտ եկեղեցի։

Անյերկուանալի է սկիզբնս և անհերքելի. քանզի և ոչ ոք 'ի քրիստոնէից երբէք յերկբայս անկանի՝ արդեօք պարտ իցէ նմա միանալ ընդ ընկերութեան՝ որ ոչն իցէ Ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի, և թէ պարտ իցէ նմա թողուլ լքանել զհերձուած ժողովոյն՝ որում՝ անմարթ է լինել եկեղեցի Քրիստոսի։ Քանզի Որդին աստուծոյ իջեալ յերկնից 'ի յերկիր 'ի հիմնել ինքնին զեկեղեցի իւր սուրբ, նոյն այն է անշուշտ յորում՝կամեցաւ զի և 'ի ծոցի նորա միայն փրկութեան հաստատիցեն մարդիկ։ Այս այն է անշուշտ միայն, զոր եդ կարգեաց աւանդապահ և գանձարան մարդապետութեան իւրոյ, խորհրդոց իւրոց, կամաց իւրոց, և միջնորդաց և պատգամաց՝ զորս հաստատեաց նա 'ի փրկութիւն մարդկան։ Այս ուրեմն նա միայն բաւական է առնուլ մուծանել զմեզ 'ի յերկինս։

Եւ արդ Որդին աստուծոյ, աղէ ասա, մարմնացեալ և լինէր արդեօք մարդ Ճշմարիտ և զմահ խաչի յանձն առնոյր և ընտրէր առաքեալս և աշակերտս 'ի քարոզել զհաւատս իւր յընդհանուր տիեզերս և խոստանայր անսուտ բանիւն լինել ընդ նոսա մինչև 'ի կատարած աշխարհի և առաքէր նոցա ինքն այնչափ իմն պատրաստութեամբ և փառօք զՀոգին սուրբ և սքանչելիս այնչափ հրաշագործէր արդեօք 'ի ձեռն նոցա, եթէ արդարև մարթ էր մարդկան փրկութեան հասանել յայլում՝եկեղեցւոջ արտաքոյ իւրոյն։

Յորժամ՝ ինքնին Յիսուս Քրիստոս ասաց ցառաքեալսն, եթէ « Գնացէք քարոզեցէք զաւետարանն » իմ՝ամենայն ազգաց. որ հաւատացէ և մկրտեսցի,

» կեցցէ. և որ ոչն հաւատայ, դատապարտեսցի »,
յայտնապէս վճիռ եհատ եթէ ոչ ոք ուրեմն կարէ
փրկութեան հասանել՝ թէ չիցէ 'ի Թուոյ անտի հա-
ւատացելոցն եկեղեցւոյն, զոր պատուիրեաց առաքե-
լոց իւրոց կանգնել ընդ ամենայն աշխարհ։

Այս այսպէս խօսեցաւ Քրիստոս ոչ ընդ այլ ու-
մեք՝ այլ ընդ առաքեալս և ընդ նոցուն յաջորդսն որ
հանդերձեալ էին հետզհետէ կառավարել զնոյն եկե-
ղեցի։ Եւ այս բանք որդւոյն աստուծոյ ոչ ուղղեցան
առ նոսա՝ որ անձամբ զանձինս ունէին ընծայեցու-
ցանել 'ի հիմնարկութիւն օտար եկեղեցեաց արտաքոյ
իւրումն։

Եւ յորժամ՝ մեք երգեմք և կամ՝ վերծանեմք զՀան-
գանակն առաքելոց, դաւանութիւն ընծայեմք հաւա-
տալ 'ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, չասեմք « Հաւա-
» տամք յեկեղեցիս », այլ թէ « Հաւատամք յեկե-
» ղեցի »։ Ինքնին առաքեալքն սուրբք և հարք եկե-
ղեցւոյ զայս դաւանութիւն հաւատոյ եդին 'ի բերանս
քրիստոնէից, յուշ ածեալ նոցա եթէ Յիսուս Քրիս-
տոս հիմնեաց զեկեղեցի, և թէ՝ հիմնեաց մի միայն,
որոյ պարտիմք լինել անդամ նորա եթէ կամիմք փրը-
կութեան հասանել։

Ապա ուրեմն անշուշտ և աներկբայ՝ եթէ ընկերու-
թիւնդ յորում կեաս դու այժմիկ, չէ եկեղեցի Քրիս-
տոսի, պարտք անհրաժեշտք են քո ուրեմն թողուլ
լքանել զայն և դառնալ 'ի հիմնարկեալն 'ի Քրիստոսէ
յեկեղեցի։

Թոռի ոչինչ կարևոր այլ ևս երկայնել զճառս 'ի
յուցանել զճշմարտութիւն զայս այնչափ քաջայայտ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Արդար ասես. 'ի զուր է երկայնել վասն բանիս, զի ո՞ զբ երկբայեսցի թողուլ լքանել անդէն զընկերութիւնն՝ որ ոչն իցէ եկեղեցի Քրիստոսի և միաբանել ընդ Ճշմարտին։ Այլ մեք յորժամ հաւատամք փրկութեան հասանել յընկերութիւնս մեր, վասն այնորիկ հաւատամք այնպէս, քանզի հաւատամք եթէ և ընկերութիւնք մեր՝ զոր դուք «Նորաձայնս» անուանէք՝ ընկերութիւնք են նորուն իսկ եկեղեցւոյն Յիսուսի Քրիստոսի.

Այլ արդ զիա՞րդ ցուցցես ինձ փաստուք եթէ ժողովդ ձեր միացեալ ընդ գլխոյն Հռովմայ իցէ միակ ընկերութիւն եկեղեցւոյն Քրիստոսի, իսկ մերս ընկերութիւնք օտարախորթք իցեն 'ի նմանէ,

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս է առադիկ խնդիր մեր գլխաւոր և կարևոր յոյժ, զոր և զարդիս 'ի քնին առցուք. և տեսցես ստուգիւ, բարեկամ, զիա՞րդ անխուսափելի իցէ և այս իբրու զառաջինն։ Ապացուցիս քեզ զայս երիւք ցուցակութեամբք. զորոյ և զկարգն նախ պարզեցիս.

Արդ ասեմ՝ եթէ Եկեղեցի ուղղափառաց միացեալ ընդ Հռովմայ է միայն եկեղեցի Քրիստոսի։ Դ՚այս՝ զի սա միայն կալաւ 'ի հիմնադիր իւր զՅիսուս Քրիստոս, և առաջնորդ իւր զպաշտօնեայս և զհովիւս առաքեալս 'ի նմանէ։ Երկրորդ՝ զի սա միայն ունի զամենայն կնիքս և զնշանս և զյատկութիւնս զեկեղեցւոյն Քրիստոսի։ Երրորդ զի սա միայն տայ հաւատոյն ուղղափառաց

զաներկբայ ստուգութիւնն և զանթերի ամբողջութիւնն, զոր չկարեն ունել հաւատք նորաձայն քարոզչացդ։

Եւ արդ քաջ տեսանես դու ինքնին՝ զի անմարմին է 'ի միում միայն տրամախօսութեան 'ի մեր բերել ողջոյն զփաստս. ուստի և վասն առաջնոյն միայն այսօր ժամ առից ճառել։

Եկեղեցի ուղղափառաց ունի 'ի հիմնադիր իւր զՅիսուս Քրիստոս, և հովիւք նորա առ 'ի Քրիստոսէ ունին զաւաքելութիւն. այս է՝ զիշխանութիւն ուսուցանելոյ և կառավարելոյ զհաւատացեալս. իսկ այլ ամենայն ընկերութիւնք որոշեալք 'ի նմանէ՝ չունին զՅիսուս Քրիստոս իւրեանց 'ի հիմնադիր, և առաջնորդս չունին իւրեանց իշխանացեալս 'ի Քրիստոսէ։

Եկեղեցի ծառ իմն է բարձրացեալ մեծ և ամրոտեան, զոր այր տանուտէր տնկեաց իւրովք իսկ ձեռօք. եդ 'ի խորս զարմատս նորա, զի բաւական լիցի ընդդէմ կալ հողմոց և մրրկաց։ Եւ միշտ առատապէս անձրևէ նմա յերկնից զարդիւնարար զցօղն, և հանապազօր ընու զնա արգասաբեր հիւթովն։ Յանգ հողագործք նորա մշակեն զնա, և խնամ միշտ ունին ոռոգել զնա, նաև սրբել զնա և կտրել զոստս նորա զցամաքեալս։ Այլ նա միշտ ծառ է և նոյն և անփոփոխելի ծառ։ Իսկ ոստք միանգամ կտրեալք 'ի նմանէ՝ ոչ ևս են նորա։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Գեղեցիկ է օրինակդ։ Այլ չկարեմ ժուժալ մինչև լուայց և գիտացից զփաստսն, զոր ածցես ինձ 'ի հաստատութիւն բանիդ, եթէ եկեղեցի այդ ձեր միայն ու-

նիցի իւր 'ի հիմնադիր զՔրիստոս. և թէ հովիւք նո-
րա առ 'ի նմանէ ունիցին զառաքելութիւն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Քաջ հեշտին է ինձ ապացուցանել քեզ զայս։
Ասասիկ 'ի գիրս սուրբս գտանեմք մեք հանդէս կրկ-
նակի յայտնի ցուցակութեամբք զհիմնարկութեանն,
որով Յիսուս Քրիստոս հաստատեաց զեկեղեցի իւր։
Ի միումն՝ ուղղէ զպատգամ իւր զաստուածային առ
Պետրոս միայն։ Ի միւսումն՝ զպատուէր հրամանին
յետ յարութեանն իւրոյ պատուիրէ առ հասարակ
առաքելոցն սրբոց։

'Այս առաջին ընտրէ զսուրբն Պետրոս 'ի գլուխ եկե-
ղեցւոյ իւրոյ, քանզի և անշուշտ հարկ է ամենայն մար-
մնոյ՝ և մանաւանդ մարմնոյ որ ընդ ամենայն աշխարհ
սփռեալ իցէ՝ որպիսի է եկեղեցի, ունել զոք նախագահ
առաջնորդ և կենդրոն մի անդրդուելի՝ յոր գնացեալ
միասցի լրութիւն ամենայն անդամոց մարմնոյն։

Այլ մի՞ դիր, զիաՀրդ չքնաղ օրինակաւ հանդի-
սանայ տէրն 'ի փառաւորել անդ զայս առաքեալ և
ամբառնալ զնա 'ի գլուխ լրութեան մարմնոյն։ 'Այս
փոխէ զանունն Կեփաս յանուն վիմի, և ապա շքե-
ղութեամբ յառաջանայ 'ի գործն, պատգամ բարբա-
ռելով առ նա աստուածային, «Դու ես, ասէ, վէմ. և
'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ». Այս, ասէ,
շինեցից զայն. ապա ուրեմն Ճարտարապետ նորա է
ինքնին Քրիստոս։ Ինքն զնա կոչէ «Եկեղեցի իմ».
ինքն է ուրեմն հիմնադիր նորա, և ինքն է իշխան և
տէր նորա։ Եկեղեցին 'ի նմանէ առնու ծագումն։
Եկեղեցին 'ի նա միայն գնացեալ յանգչի։

Դարձեալ և ինքնին սուրբ Առաքեալն նորա Պաւ-
ղոս զնոյն մականուն տայ նմա, կոչելով զնա «Եկե-
ղեցի Աստուծոյ, հօտ և ժողովուրդ Յիսուսի Քրիս-
տոսի, զոր ապրեցոյց արեամբն իւրով»։ Եւ թէ
«Քրիստոս է գլուխ եկեղեցւոյ և ինքն է փրկիչ մար-
» մնոյ, զի կացուցէ ինքն իւր յանդիման փառաւոր
» զեկեղեցի. զի մի ինչ ունիցի արատ կամ աղտեղու-
» թիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ
» սուրբ և անարատ. . . և Քրիստոս սիրէ զեկեղեցի
» և դարմանէ». Գործք. 20։ Եփես. 5։

Իսկ ապա մնաց 'ի համբառնալ իւրում յերկինս՝ գումարեալ 'ի միասին զդասս առաքելոց, ասէր առ նոսա. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս
» և յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր իմ և ես
» առաքեմ զձեզ. Գնացէք այսուհետև աշակերտեցէք
» զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր
» և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել
» զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ
» ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատա-
» րած աշխարհի»։

Արդ այս եկեղեցի զայսօրինակ հիմնարկեալ 'ի Քրիստոսէ է տիրաբար նոյն ինքն եկեղեցին ուղղա-
փառաց միայնաւն ընդ յաջորդին Պետրոսի՝ յոր վե-
րայ շինեաց Քրիստոս զեկեղեցի իւր, և այլ ոք չմար-
թի լինել։ Քանզի սա ինքն հանապազ կայ մնայ ան-
գրստին 'ի հիմնարկութենէն իւրմէ 'ի նոյն հաստա-
տութիւն և 'ի նոյն խարիսխ ամրացեալ և ընդ նովին
կառավարութեամբ. զոր անաչառ խօսելով՝ չկամ ասել
Ճշգրտիւ յաղագս այլոց ընկերութեանց և հերձուածոց։

ՆՈՐԱԳԱՆԴՆ

Այսպէս անժխտելի է եթէ ինքնին Քրիստոս հիմն արկեաց եկեղեցի մի և 'ի գլուխ նորա կարգեաց զԵրանելին զՊետրոս առաքելապետ։ Սակայն և դարք բազումք 'ի հիմնարկութենէ անտի անցին առյաւպայ. և միթէ ստոյգ իցէ եթէ յընթացս ժամանակացն այնոցիկ աղաձայնութիւն ինչ չիցէ լեալ ընդ առաջին յաջորդս առաքելոյն և ընդ որս յետ նոցա նստան կառավարք եկեղեցւոյ, և որ նախապատիւ խնդրելին է մեր՝ 'ի մանաւորի ընդ յաջորդսն սրբոյն Պետրոսի մինչև 'ի Հայրապետն՝ որ նստի արդ յաջորդութեամբ 'ի Հռոմ. և մաքթ իցէ մեզ ասել եթէ հոմանք եկեղեցւոյն Հռոմայ զառաքելութիւն իւրեանց կալեալ իցեն միշտ յառաքելոյ անտի, ուստի և վասն այնորիկ 'ի Յիսուսէ Քրիստոսէ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս կարի քաջ ստոյգ է բանս, եթէ 'ի քրիստոսեան սահմանադրութենէ անտի, և եթէ 'ի կարգաւորութենէ գործոց ժամանակացն՝ որ անժխտելիք են։ Քանզի նախ՝ ըստ քրիստոսեան սահմանադրութեանն չիք տարակոյս, եթէ առաքեալքն սուրբք առաքեցան 'ի Քրիստոսէ. նա և զորս առաքեալքն առաքեցին և յետ այնորիկ յաջորդք նոցուն առաքեցան և առաքին և առաքեսցին միշտ 'ի գիմաց Քրիստոսի և 'ի նորուն հրամանէ մինչև 'ի կատարած աշխարհի. և ապացուցանի բանս 'ի քաջայայտ պատմութենէ անտի գործոցն հիմնարկութեան։

Քանզի պատգամ անուտ այսպիսի 'ի ներքս երեր Քրիստոս յասելն, « Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչև 'ի կատարած աշխարհի » : Այսպա ուրեմն ոչ առաքելոց միայն խոստանայ Քրիստոս զառընթերակայութիւն իւր, այլ և ամենայն յաջորդայ նոցա ցորչափ կայ աշխարհ. քանզի 'ի մի առեալ ժողովէ զամենեսեանսն ընդ բառիս « Ընդ ձեզ » . և այնպիսի սահման ընդարձակատարը կարգէ նոցա՝ որ զամենայն ժամանակս զդարուց դարուց 'ի գոգ իւր առեալ պարուրէ :

Իսկ երկրորդ՝ յետ հիմնարկութեան եկեղեցւոյ զինչ գործեցին առաքեալք : Ամենայն հաւատարմութեամբ 'ի գործ եդին զպատուէր երկնաւոր վարդապետին. գնացեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ. հաստատեցին յընդհանուրս եկեղեցի ըստ կարգաց և ըստ կանոնաց զոր պատուիրեաց նոցա Քրիստոս հաստատիմն օրինաք, որպէս զի և եպիսկոպոսունք ինքնին զոր 'ի քաղաքս քաղաքս կարգեցին նոքա, կարգեսցեն և նոքա իւրեանց յաջորդս. և զի այնպէս այս կարգաւորութիւն իբրև շղթայ յերկրեալ և անխզելի յաւերժասցի մինչև 'ի կատարած աշխարհի :

Յարեաւ առաքելապետն սուրբն Պետրոս չոքաւ 'ի հաստատել զաթոռ իւր 'ի մայրաքաղաքն տիեզերաց. որպէս զի կենդրոն հաւատոյն քրիստոսեան՝ որ հանդերձեալ էր սփռիլ ընդ ամենայն տիեզերս և կալ մնալ մինչև 'ի կատարած աշխարհի, միշտ կայցէ պանծալի և փառաւոր 'ի քաղաք մեծ և հոյակապ, քաղաք խառնընթաց և համբաւատենչ : Այսպա զինի փախճանի մարտիրոսութեան սրբոյն Պետրոսի՝ շուք և իշխանութիւն զլիսոյն եկեղեցւոյ միշտ եկաց մնայ 'ի յաջորդս իւր 'ի նմին իսկ քաղաքի : Կարգեցան երան

ասպա յետ ժամանակաց նաև զահերէցք ոմանք և իշ-
խանք յեկեղեցական դասէ՝ որք և Կարգինարք անուա-
նեցան, և սահմանեցաւ վասն նոցա ատեան և ժողո-
վարան և փակարան մասնաւոր յընտրութիւն 'ի ծա-
ծուկ յաջորդացն Պետրոսի. և պատրաստեցաւ միշտ
այս ընտրութիւն և պատրաստի ցայսօր մեծապէս
ճշգութեամբ և ամենայն կարգաւ վասն կարևորա-
գունիս գործոյ 'ի շինութիւն եկեղեցւոյ։

Բայց և այլ առաքեալքն սուրբք ընթացեալք ընդ
տիեզերս հիմնեցին եկեղեցիս ընդ ամենայն աշխարհ,
և եկեղեցիք քրիստոնէից ազգաց ազգաց՝ ըստ որում
ունիմք քաջայայտս յեկեղեցական պատմութենէն՝ միշտ
ծանեան զիւառս զգլխոյն եկեղեցւոյ յեպիսկոպոս անդր
Հռովմայ, և անխախտելի պահեցին զհաղորդութիւնն
ընդ նմա։ Ալ ած եալ Գլխոյն յամենայն ժամանակս՝
յանցս երևելիս եկեղեցւոյ և 'ի դժուարինս դիմեցին
առ նա. և սահմանս ևս խնդրեցին 'ի նմանէ 'ի մեծա-
մեծ խնդիրս յուզեալս 'ի բանս հաւատոյ։

Այս եպիսկոպոս Հռովմայ ըստ պիտոյից եկեղե-
ցւոյն գումարէր միշտ զընդհանրական ժողովս, և նրս-
տէր նախագահ 'ի ժողովն յայնոսիկ կամ՝ ինքնին
կամ՝ 'ի ձեռն նուիրակացն. և ծանուցաւ միշտ իբրու
կենդրոն հարկաւոր միութեան ըստ թեան մարմնոյն ե-
կեղեցւոյ Քրիստոսի։ Անժխտելիք են այսոքիկ յեկե-
ղեցւոյ պատմութեանց առհասարակ ամենայն վաւերա-
կան մատենագրաց։ Իսկ ըստ թիւն մարմնոյն միայնեալ
ընդ գլխոյն ընդ այնոսիկ միշտ դաւանեցաւ իբրև ճշմա-
րիտ և միակ եկեղեցի Քրիստոսի։ Եւ այս կարգ աս-
տուածային յեկեղեցւոջ եկայ մնաց անփոփոխ ան-
ղըստին յուրթ և տասն դարուց։

Եւ այսպէս եկեղեցիք ուղղափառաց 'ի վեր եկանեն

մինչև յառաքեալն անդր, կամ 'ի ձեռն կարգառեալ յաջորդութեան եպիսկոպոսաց իւրեանց. օրինակ իմն՝ եկեղեցին մեր Լիոնեան, որ զամենայն եպիսկոպոսունս իւր ունի անդստին 'ի սրբոյն Փոտինոսէ, որ առաքեցաւ աստ 'ի սրբոյն Պոլիկարպոսէ յաշակերտէ սրբոյն Յոհաննու աւետարանչի. կամ 'ի ձեռն եպիսկոպոսացն Հռովմայ որ բազում եկեղեցիս հաստատեցին 'ի Գաղղիա և յայլ ևս սահմանս։ Որպէս զի և ամենայն հովիւք եկեղեցւոյ ուղղափառաց միջնորդութեամբ առաքելոցն զառաքելութիւն իւրեանց ունին 'ի Քրիստոսէ։ Նա եկեղեցի այս ուղղափառաց երբէք չտարաւ զայլ անուն և ոչ կարասցէ երբէք տանել զանուն զայլոց ուրուք հիմնադրի, բայց զնորուն տեառն Յիսուսի Քրիստոսի։

Նա է այս եկեղեցի միակ հնագոյն. քանզի և չունի իւր ծագումն յընկերութենէ իմեքէ, և զի այլ ամենայն ընկերութիւնք հերձեալք՝ 'ի նմանէ ելին և բաժանեցան. որպէս և ասաց Պաւղոս, «Ա՛ռ 'ի մէնջ ելին, այլ ոչ էին առ 'ի մէնջ»։ Այսպա ուրեմն և 'ի նա միայն մարթին յանգչիլ անսուտ խոստմունքն Քրիստոսի. քանզի և ընդ եկեղեցւոյ իւրում միայն խոստացաւ լինել մինչև 'ի կատարած աշխարհի։

Արդ նոյն իսկ դաւանութիւն հերձելոցն շատ է 'ի ցուցանել եթէ պարտ է դառնալ միանալ ընդ Նկեղեցւոյս ուղղափառաց. քանզի և նոքին իսկ ընկերութիւնք հերձեալք 'ի նմանէ դաւանին, եթէ այս եկեղեցի է առաւել վաղնջուցն քան զայլ ընկերութիւնս եկեղեցականս, և ծանեան և դաւանեցին զնա իւրեանց մայր և ճշմարիտ եկեղեցի, մինչև հերձեալ էին նոքա 'ի նմանէ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Թուի թէ՝ վեր 'ի վերոյ հայելով 'ի բանսդ՝ չկայէ ինչ երկբայութիւն 'ի նոսա. բայց արդեօք չկայէ մարթ ասել, եթէ թէպէտ և առ արտաքս թուիցին ևս հպիս կոպոսունք եկեղեցւոյ ձերոյ առաքեալք ընդ միջաբար 'ի Քրիստոսէ, այլ ոչ և 'ի ներքոյ կայեն այնպիսի. իբրու անկեալք 'ի մոլորութիւնս ինչ և 'ի բաց թողեալք զանալատ վարդապետութիւնն զչորից առաջին դարուց եկեղեցւոյ։ Այս ինձ թուի լուեալ զայս զօրաւոր յուցակութեամբ փաստից ուրեք 'ի մերոյ անտի քարոզչաց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Գիտեմ՝ քաջ զի ոմանք 'ի ձերոյ այսի յանդգնեցան յայս ամբաստանութիւն ընդդէմ եկեղեցւոյ ուղղափառաց. բայց դու ինքնին անաչառ դատ արասցես, քանիցն անհիմն և խարխուլ կայէ ամբաստանութիւնդ, 'ի լսել քո 'ի յետագայ տրամախստութիւնս մեր զայնմանէ. որով և յուցակութիւն փաստի՝ զոր զօրաւոր ասես՝ կայէ գլխովին ուրացութիւն բանիցն Աստուծոյ՝ որ ասաց, եթէ Գրունք դժոխոց, որ են մոլորութիւնք, զեկեղեցի ոչ յաղթահարեսցեն. և թէ՝ նա ինքն եղիցի ընդ եկեղեցւոյ իւրում մինչ իսպառ։

Այլ ես ուղղակի ևս պատասխանի զայս ասեմ. այդ է տիրապէս հիմն 'ի վեր առնել զվիճակ խնդրոյն։ Չի առաջիկ չկաք իմ՝ ցարդ ճառեալ՝ բայց զարդեանց իւրոցն, այս է՝ զհաստատութենէ կարգի առաքելոյն

և զնոյսն յաջորդաց 'ի կառավարութեան եկեղեցւոյ, և զանընդհատ կարգաւորութենէ իրացն՝ որ 'ի մեր առ առաքեալսն անդր առնու հանէ զհովիւս եկեղեցւոյ ուղղափառաց՝ որ արդ իսկ առ մեզք կան։

Իսկ յետ այսորիկ յորժամ Ճառեցիս և զվարդապետութենէն, ցուցից քեզ յայնժամ եթէ եկեղեցի երբէք ոչ փոխեաց զնոյն, և մի ըստ միոջէ անցեալ ընդ մնասնս վարդապետութեանն խեղամուտ արարից ըզքեզ Ճշմարտութեանս այսմիկ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Թէպէտ և ես այժմն կանուխ տեսանեմ զկարծեալ Ճշմարտութիւնդ զոր հանդերձեալ ես ցուցանել, սակայն և ո՞ կարասցէ ժխտել եթէ և եկեղեցիք մեր ոչինչ իւիք հիմնարկեցան 'ի Քրիստոսէ, և ոչ առաջնորդեցին նոցա հովիւք առաքեալք 'ի դիմաց Նորա. որովհետև հաւատան 'ի Քրիստոս, և դաւանեն զաւետարանն սուրբ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այլ սակայն և զայն ո՞ կարասցէ ժխտել, եթէ և 'ի վերայ այսր՝ թէպէտ և հաւատացք 'ի Քրիստոս և դաւանիք զաւետարանն, 'ի վերայ այսր՝ ասեմ՝՝ հարկ է ձեզ թողուլ լքանել զժողովս ձեր, որովհետև անդուստ 'ի վերուստ չունին ինչ բաժին ընդ Քրիստոսի և միշտ անբաժք մնացին յաստուածային խոստմանց Նորա։

Քանզի որպէս վասն կաթողիկէ եկեղեցւոյն, նոյնպէս և վասն ձերոյն հարցից ես։ Այլ՞ արդեօք ինքնին Քրիստոս հիմնադիր այնմ՞. և որ կառավարեցին զնա իսկն արդեօք առաքեալք 'ի Քրիստոսէ։

Քաջայայտ է եթէ չէ Քրիստոս հիմնադիր նորա մուտ եկեղեցեաց։ Այլ յերկնից յերկիր ոչ էջ միւսանգամ՝ ի գործել զայն. ոչ երևեցաւ ուրեք, ոչ խօսեցաւ ընդ ումեք վասն բանիս այսորիկ։ Ոչ հիմնարկեաց նա՝ ի վերջինս զԼուսերականութիւնն և զԿալվինականութիւնն. ըստ որում և ոչ՝ ի նախնի դարս եղ նա հիմն Արիոսականութեան, Նեստորականութեան, այլոքն հանդերձ։

Այս ամենայն հերձուածք կալան իւրեանց հեղինակս առանձինն, զորոց և զանուանսն կրէին. առ հասարակ նոքա ծնան՝ ի ծոցի եկեղեցւոյն ուղղափառաց, և առ հասարակ քեցեցան հատան՝ ի հաղորդութենէ նորա։ Քաջայայտ է առաջարկութիւնն և չունի ինչ պէտս առաւելագունի հետաքննութեան։

Արդ եթէ նորաձայնութեան եկեղեցիդ հիմնադիր ոչ եկիա իւր զՅիսուս Քրիստոս, անշուշտ է ասա եթէ և ոչ առաջնորդք նորա և հովիւք առաքեցան՝ ի Քրիստոսէ։ Այս է խորհրդածութիւնս՝ ՝ի յոյժ կարևորայն։

Այդ նոր և այնչափ զհամբաւի հարեալ հերձուածդ Լութերեան կարդեալ՝ ի մեծ յայն գործ վերանորոգութեան եկեղեցւոյ Քրիստոսի, (որպէս պարծին), աղէտսա, ոչ ապաքէն հրաշափառագոյն իմն և նոր և չքնաղ առաքելութիւն պարտէր ունել։ Սակայն և այնպէս Լութեր և Կալվին և հետևողք նոցա ոչ զտին առաքելութիւն այնպիսի. և ըստ նմանէն՝ ոչ յանուն Քրիստոսի այլ յանուն իւրեանց հիմնեցին զեկեղեցիս նորաձայնութեանդ, և իւրեանց իսկ արբանեկօք կառուցարեցին զնոսա։ Այս ասացուցից քեզ զայս առադիկ։

Այս՝ պարտ է, ասեն, վերանորոգել զԿամողիկէ եկեղեցի Քրիստոսի զհիմնեալն՝ ի հնգետասան դարուց հետէ, և այլ եկեղեցի հիմնարկել փոխանակ նորա։

Ոչ ահա զայս խնդրեցին գործել Լութեր և Կալվին. այո՛ ամենայն իրաք յաւակնեցան 'ի նոյն. քանզի համարեցան վերանորոգել զեկեղեցին՝ յորում ծնան և սնան՝ զՀռովմայն՝ զգլխաւորն. ուստի ընդ գլխոյն՝ և զլրութիւն մարմնոյ Կաթողիկէ Եկեղեցւոյն Քրիստոսի՝ որ ընդ տիեզերս։ Արդ վասն մեծագործ և անկարծելի ձեռնարկութեանս գէթ չէր արդեօք հարկաւոր աներկբայելի իմն, և քաջածանօթ առաքելութիւն առ 'ի Աստուծոյ։

Բաւական, ինքնին բանն աստուած խոնարհի յերկիր, իսափանէ զօրէնսն Մովսէսի որ չունէր իսկ յաւերժական, և առ 'ի զայս կատարել գործ և կարգել փոխանակ նորա զեկեղեցի իւր, ողջոյն զարիւն իւր զամենասուրբ հեղու. և ապա բազմութեան աշակերտացն յանձն առնէ զնոյն վաւերական առաքելութեամբն և հաստատուն օրինօքն՝ և ասէ. « Որպէս առաքեաց » զիս Հայր և ես առաքեմ զձեզ։ Ահաւասիկ առա» քեմ զձեզ իբրև զգառինս 'ի միջ գայլոց։ Եւ իշխա» նութեամբն որ տուաւ ինձ յերկինս և յերկրի, սա» տուիրեմ ձեզ, գնացէք աշակերտեցէք զամենայն » հեթանոսս »։

'Եւ իբրև զնակս իմն աստուածագիծս և թուղթս ընծայութեան անջնջելս տալով նոցա ցուցանել ամենայն մարդկան և հաւանեցուցանել եթէ 'ի դիմաց Աստուծոյ առաքին առ նոսա, ետ շնորհեալ նոցա ըզպարգևս և զիշխանութիւն հրաշագործութեան մեծամեծ սքանչելեաց։ « 'Եղանք, ասէ, այսոքիկ որ հաւա» տանն՝ երթիցեն զհետ այնոցիկ. յանուն իմ դևս » հանցեն, լեզուս խօսեսցին նորս. 'ի ձեռս իւրեանց » օձս բարձցեն. և եթէ մահացու ինչ դեղ արբցեն, » նոցա ինչ ոչ վնասեսցէ. 'ի վերայ հիւանդաց ձեռս

» դիցեն և բժշկեսցին » . Մարկոս . 16 : Եւ բանք
աստուածայինք արդիւնացան իսկ և իսկ . « Եւ նո-
» քա , ասէ , ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր
» տեառն գործակցութեամբ . և զբանն հաստատէին
» ամենայն նշանօք որ երթայր զհետ նոցա » :

Արդ այսօրինակ հրաշագործութիւնք զուգահեռք
ընթանային քարոզութեան աւետարանին այնչափ իմն
մեծահրաշ փառօք և ճոխ առատութեամբ , մինչև
ստուերն անգամ Պետրոսի և վարշամակն միայն Պաւ-
ղոսի բժշկէին զցաւս և զախտս . այլոքն հանդերձ :

Ասասիկ քեզ առաքելութիւն անժխտելի և քան
զարփի լուսաւոր . ահա և նշանք բազմադէմք՝ 'ի հաս-
տատութիւն նորուն մեծամեծք և սքանչելագործք :
Այլ զի՞նչ իցեն այդոքիկ . մեզ աստանօր 'ի խնդիր
Լուքերեան և Կալվինեան և ևս մեծամեծաց պէտք
էին հանդիսից առաքելութեան , ցուցակութիւնք յոյժ
առաւել լուսաւորք , և նշանք հրաշից առաւել սքան-
չելապայծառք քան զառաքելոցն սրբոց : Քանզի չէ
խնդիրս աստանօր վասն շինուած միայն կանգնելոյ ,
այլ վասն տապալ յերկիր կործանելոյ նախ զառաջին
զհաստատիմն կառուցեալն և ապա երկրորդիւն զտեղին
ընդոյ . և զկառուցեալն յումմէ՞ . ոչ 'ի Մովսիսէ՝ որ ինք-
նին զկործանումն նախաձայնեալ՝ իսկ էր զիւրոյ դաս-
տակերտին . այլ 'ի Յիսուսէ Քրիստոսէ՝ որ անսուտ
բերանովն կնքեաց , եթէ՝ Կայցէ մնասցէ մինչ իսպառ
և գրունք գժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն : Այլ
« Օ՛իսարդ , գոչէ Առաքեալն , զիարդ քարոզեսցեն
» քարոզիչք , եթէ ոչ առաքեսցին » . Հռոմ . 10 :
Եւ առ Եբրայեցիս յաւելեալ 'ի բանս իւր ասէր , « Ոչ
» եթէ անձամբ զքառնու պատիւ , այլ կոչեցեալն յաս-
» տուծոյ . որպէս և Ահարոն » . Զչ . 5 :

Այլ դու հայեայ ինձ ընդ այլազան սկզբունս կարծեայ մարդկային ոգւոյն։ Քարոզեն Լուսիեր և Կալվին, թէպէտ և չիցեն առաքեալ։ Սակայն անձամբ առնուն նոքա զպատիւ. և պատիւ ոչ վայրապար, այլ գերագոյն և այնպէս իմն անկշռելի շուք իշխանութեան, մինչև տապալ յերկիր կործանելոյ՝ որպէս ասէին նոքա՝ շնչով իւրեանց և փչմամբ զաթոռն Պետրոսի, զոր իւրովք իսկ ձեռօքն կառոյց Քրիստոս և յապահովս կացոյց մինչև 'ի կատարած աշխարհի։ Ա՛ռ այս և բարձրայօնս յաւակնին 'ի վերայ աւերակացն կանգնել այլ շինուած անխախտելի և կառուցանել այլ աթոռ անշարժելի։ Իսկ ուրանօր իցեն այդոքիկ։ Յաւակնեցան միայն 'ի խոստանալ։

Երկրորդ, չեն նոքա առաքեալք ամենևին. քանզի ոչ ազգ մի առաքելութեան արդեամբք կալան նոքա։ Ընդիմամարտելի է առաջարկութիւնս։ Ոչ Եկեղեցի ուղղափառաց՝ յորում ծնան և սնան նոքա, առաքեաց զնոսա 'ի քարոզել վարդապետութիւն հակառակ իւրումն. նա մանաւանդ բողոք ընդդէմ կալեալ նոցա ձայն կարդայ Ճոխաբար. «Ոչ առա» քեցայք դուք և քարոզէք թիւրս և խոտորնակս». զայս ասաց և 'ի հաղորդութենէն հատեալ նզովեաց զնոսա։ Իբրև այնպէս վտարեցան յեկեղեցւոյ, գնացեալ յարեցան յայլ ընկերութիւնս, միջնորդաւ նոցա ամբառնալ 'ի փառս, զի անձամբ անձին տկարացան 'ի նոյն։

Այլ և ոչ Քրիստոս երևեցաւ ումեք 'ի նոցանէ տալ զառաքելութիւն իւր. և ոչ նոքա ինչ երբէք պարծեցան ունել զայն։

Ո՞ւր ապա գտցուն հանդէս թողցուք՝ զմեծ հաւատս զառաքելութեան, զոր և ոչ մի ինչ երբէք

գործեցին ոչ Լութեր և ոչ Կալվին և ոչ այլ ոք յարքանեկայն. որպէս տեսցուք 'ի յետագայսդ։

Զիարդ ասա և որովհետև իրաւամբք պարծեսցին դոքա և մարթասցին ցուցանել մեզ եթէ Աստուած առաքեաց զնոսա։

Ոչ ահա հանդոյն մարդկան իցեն դոքա, որք համարեալք յանձինս իւրեանց քաջ և ներկուռ գիտել զիրաւունս ամենայն և զօրէնս և զսկզբունս կառավարութեան աշխարհի, թեկն ածիցեն նստել իբրու իշխան առ թագաւորին. նա մանաւանդ զլինովին իբրև ատենակալ և դատաւոր և հրամանահան յընդհանուրս, և ըստ հաճոյս անձանց կառավարել զսահմանս տ' րութեան նորա, փոխելով փոփոխելով զսահմանագրութիւնս և զօրէնս, և վեր 'ի վայր գործելով միանգամայն զամենայն մատակարութիւն՝ անձամբ անձին միայն առեալ ինքնաձեռնադրելի զբարձն, իշխանութիւն և ոչ մի ունելով վաւերական 'ի թագաւորէն։

Արդ եթէ Լութեր և Կալվին չառին ինչ առաքելութիւն Աստուծոյ, ասա և ոչ իրաւունս ինչ 'ի գործ գնելոյ զկարծեցեալն իւրեանց վերանորոգութիւն եկեղեցւոյ. ասա ուրեմն և ոչ նոքա որ յետ նոցա կարգեցան՝ ունէին ինչ իրաւունս միջամուխ լինել 'ի կառավարութիւն։ Քանզի ոչ Լութեր և ոչ Կալվին կարէին փոխանցել 'ի նոսա՝ ոչ իշխանութիւն և ոչ առաքելութիւն. զի զիարդ կարէին տալ՝ զոր ինքեանք չունէին։

Այլ դու միտ դիր, զի և ոչ եպիսկոպոս ոք էր Լութեր, այլ սոսկ քահանայ։ Ուստի և զհետ երթեալ կարգի քահանայապետութեան հաստատելոյ յառաքելոյ անտի՝ (որ միշտ պահեցաւ ցաւուրս մեր, և որինակ մի հակառակամարտ կարգիս երբէք ոչ ցու-

ցաւ 'ի դարս եկեղեցւոյ), միայն եպիսկոպոսունք յեկեղեցւոջ Քրիստոսի իշխանք էին տալ և տպաւորել զկնիք Հոգւո

քելութեան զինչ պէտք իցեն. առ 'ի գործ վարել զպաշտօն հոգուութեան շատ է ունել հանճար և իմաստութիւն։ Իսկ այտ տուչութիւնք կարգաց և այդ ձեռնադրութիւն ձեռաց՝ այնչափ ճշդութեամբ պահեալք յեկեղեցւոջ 'ի ժամանակաց անտի առաքելոց, չեն կարգք և արարողութիւնք ինչ հարկաւորք. և թէ՝ որ երբեմն եղեն հարկաւոր, այլ չեն այնպիսի և յայժմուս։

Իսկ երկրորդ՝ մեր հաւատակից եղբարք արմատայեալք և աճեցեալք 'ի Պաղղիա, ճարտարեցին առաքելութիւն նորաբանչ. և զայս դաւանին նոքա 'ի յօդուածն 31, խոստովանութեան հաւատոյն իւրեանց այսպէս. « Հաւատամք մեք, զի ոչ ումեք պարտ և » արժան է անձին սեպհական իշխանութեամբ մի» ջամուխ լինել 'ի կառավարութիւն եկեղեցւոյ. այլ » թէ ընտրութեամբ պարտ է առնել զնոյն, որչափ և » հնար իցէ և որչափ այնմ Աստուած թոյլ տացէ. և » զայս բացառութիւն տիրապէս յաւելումք. քանզի » պէտք են երբեմն և 'ի ժամանակս մեր՝ յորում՝ մի» ճակ եկեղեցւոյ միջահատեցաւ՝ զի յարուցէ Աս» տուած ժողովուրդս նոր և անսովոր իմն օրինակաւ, » առ 'ի կանգնել վերստին զեկեղեցին՝ որ կործանեալ » էր և աղարտեալ »։

Որպէս և Պեզա երև ելին այն և բազմագէտ առաջնորդ մեր Կալվինեանց՝ յետ Կալվինի, Կնքեայ վճիռ 'ի Պուասսեան Ճառաբանութեան իւրում՝ այսպէս, եթէ « Պարտ է մերոյն համարել զկոչումն հիմնադրայն իւրեանց իբրու նորահրաշ իմն. և թէ՝ յայն» ժամ չգոյր ինչ ամենևին կարգ եկեղեցական յեկեղեցւոջ »։

Իսկ յետ այնորիկ և Սինհոդոսն Կաթայ գումարեալ յամին 1603, պատուիրէ ամենայն եկեղեցեայն

մերոյ՝ որ 'ի Գաղղիա՝ ամենայն հաստատութեամբ սինոդ ունել գյօղուածն 31, զխոստովանութեան հաւատոյն, զոր վերագոյնդ յառաջ բերի։

Ի վերջէ երրորդ՝ ոմանք յարդեան քարոզչաց մերոյ գեղեցիկս համարձակեցան սնդել ընդ Տիմուէնի իբրեանց առաջնորդի, եթէ հիմնադիրքն վերանորոգութեան մերոյ և հաւատոյն, առաքելութիւն ընկալան ոչ զնորահրաշն և զանսովորն, այլ զսովորականն։ Օ՜ինչ առ այսոսիկ պատասխանիք իցեն ձերոյ կողմանն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Արդարև ասեմ բարեկամ, եթէ որ զանլուրդ զայդոսիկ այդպէս զանազանաբար բաղաղեցին, յայտ է թէ 'ի մեծ տագնապ տարակուսի պաշարեցան յայս դժուարին խնդիր առաքելութեան։ Նա գործ մի յոյժ դիւրին է մեզ հերքել զդրութիւնդ զայդոսիկ։ Բանզի նախ՝ դրութիւն Սոկինեանց յայտնապէս վեր 'ի վայր շրջէ զամենայն կարգ բարի։ Գուռն բանայ անհանձար և երազայոյզ կարծեաց կրօնի, և առնու ժողովէ 'ի ներքս յեկեղեցի անհնարին խմն խառնաւնդրութիւն սոսկալի։ Այաւ 'ի չիք դարձուցանէ 'ի վերջէ զբոլոր վարդապետութիւնն և զբան հաւատոյ քրիստոնէութեան՝ լոկով միայն անբանաւոր և ուժգին աղաղակաւ, զոր չիք հնար երբէք այլով աղաղակաւ լռեցուցանել, բայց փաստիւ։

Բանզի ուստ ուստեք առին ասել Սոկինեանք. յորոց գրոց, յորոց աւանդից, եթէ կարգ ձեռնադրութեան յեկեղեցւոջ երբեմն կարևոր, ոչ ևս իցէ այնպիսի յաւուրս մեր։ Նա ուր ուրեք գտանիցեն նոքա սահմանել մեզ զթուական ժամանակին կարևոր փոփոխու-

թեանս այսորիկ, յոր պատմութիւն եկեղեցական և յոր դէպս։ Ասացեն մեզ, զոր ցայսօր չկարացին ցուցանել մեզ։

Երկրորդ՝ դրութիւնդ այդ նոր և անսովոր առաքելութեանն, զոր նորաձայնիդ ընծայեցին իւրեանց հիմնադրաց, գոգցես զնոյն զայն անկարգութիւնս 'ի ներքս մուծանէ յեկեղեցի։

Քանզի եթէ թոյլ լցէ ումեք անձամբ անձին ընծայել զանսովորդ զայդ առաքելութիւն վայրապար աւանց փաստի, անդուստ և այլ ոք զնոյն պանծասցի ասել, եթէ առաքեալ է և ինքն յԱստուծոյ նոր և չքնաղ իմն օրինակաւ. և այր այր այնուհետև սկսանիցի իբրև նորաստեղծ առաքեալ քարոզել և ուսուցանել անպատուհաս ըստ մտի՝ զոր և միանգամ կամեսցի. և իրաւունք և դատաստանք ոչ ևս գուցեն 'ի դատապարտել զնա։

Բաբէ քանիցն լցէ յայնժամ անհնարին խառնութեամբ վեր 'ի վայր շրջել ամենայն կարգաց։

Որպէս և ինքնին Ադրիանոս Սարրավիաս՝ համբաւեալն 'ի նորաղանդս՝ գիրս յօրինեաց 'ի վեշտասաներորդի դարուն, և մակագիր եդ նմա, «Յաղագս աստիճանաց պաշտօնէից աւետարանին», ուր և ելոյց հաստատութեամբ, եթէ «Յորժամ ոք տագնապեալ բռնադատի համար տալ և պատասխանի վասն կոչման այնոցիկ՝ զորս 'ի ձեռն էառ Աստուածայմաց ինչ առ 'ի վերանորոգել զեկեղեցի, և 'ի նեղն անկեալ երթայ ասպաւիրի 'ի կոչումն ինչ նոր և անսովոր, ոչ այլ ինչ գործէ՝ բայց 'ի կնճիռս անլուծանելիս և 'ի վարանս անելս արկանել զանձն»։

Եւ արդարև եթէ կամք էին Աստուծոյ տալ առաքելութիւն իմն նոր և անսովոր առ 'ի վերանորոգել

ղեկեղեցի իւր, առ 'ի մարտ դնել կռուել ընդդէմ վարդապետութեան այսր եկեղեցւոյ, և ըստ նմանէն՝ 'ի դերևս հանել զանստուտ խոստումն Քրիստոսի՝ որով խոստացաւ նմա յաւերժաբար լինել ընդ նմա և պաշտպանել 'ի դրանց դժոխոց, արդ. ասեմ եթէ կամք էին Աստուծոյ տալ ումեք առաքելութիւն իմն նոր և անսովոր, գոնեա՝ ըստ անհրաժեշտ հարկի՝ պարտ էր հաստատել զիշխանութիւն զայն զնոր և զչքնաղ՝ արտաքին ևս ցուցակութեամբք նոր և չքնաղ և սքանչելափառ հրաշից, այլ և 'ի նշանս անյերկուանալիս անարատութեան վարուց և սրբութեան։

Արդեաք ո՞չ և կանոնք խոհեմութեան դատապարտեսցեն, որք միանգամ ձեռներէց լիցին աղարտել զսահմանադրութիւնս կարգեալս, և մարտ դնել ընդդէմ իշխանութեանց՝ որ դեռ ևս իրաւանց տեարք իցեն. և սակայն յարդարացուցանել անդ զմեծ ձեռնարկն՝ յառաջ ածցեն ցուցակութիւն ոչ այլ ինչ՝ բայց զներքին զիւրեանց ազդումն և զոգեշնչութիւնն և զնորահրաշ առաքելութիւն։ Այս ո՞ր երբէք հաւատասցէ նոցա։

Ա՛ռ այս դարձեալ, չիք հնար և զառաքելութիւն զայս նորասքանչ և զանսովոր ցուցանել 'ի գրոց. և 'ի նորաղանդից ոչ ոք յաջողեցաւ 'ի նոյն մինչև ցայսօր ժամանակի։

Երրորդ, զհատարակ և զսովորական զառաքելութիւնն ընծայէ Տիմոթէոսն՝ որպէս ասացեր՝ Լ ութերի, Օ ուինկլիոսի, և այլն, որք երիցունք գոլով եկեղեցւոյն Հռովմայ՝ 'ի նմանէ առեալ իսկ էին զսովորական առաքելութիւնն։ Հաստարի իմն այնպէս Տիմոթէոսն և պնդէ եթէ Լ ութեր, և այլք, իբրու կռապարիշտ մոլորութիւն գտանելով 'ի հռոմէական եկեղե-

ցոջ, նոքին իսկ առաքելութեամբ՝ զոր 'ի նմանէն ա-
ռեալ էին՝ իշխանք կացին իրաւամբք 'ի բաց կալ որոշել
'ի նմանէ և 'ի գիսի ևս հարկանել նմա. և թէ՝ եկեղեցի
Հռովմայ յորժամ նզովս արձակեաց ընդդէմ նոցա,
և նոքա ևս իրաւունս կալան՝ զօրութեամբ նորուն իսկ
առաքելութեան իւրեանց՝ փոխարէն նզովել զնա։

Այլ դրութիւնդ այդ ոչ միայն անլուր և անտեղի
յոյժ, այլ և միանգամայն անկարող է 'ի չքմեղս հա-
նել զյանդգնութիւն հիմնադրացդ վերանորոգութեան։
Քանզի քանի՞ անհիմն իցէ ասելն, եթէ յորժամ զոք
յաղանդաւորաց երիցանց նզովեսցէ եկեղեցի, իրա-
ւունս առցէ և նզովեալն՝ պատճառ և զօրավիգն ա-
ռեալ զկարգ երիցութեան իւրոյ՝ փոխարէն նզովել զե-
կեղեցի։

Անլուր զայդ միանգամայն և զծիծաղելի դրու-
թիւն՝ յառաջ քան զ Լ ութեր յերազեաց և ոչ ոք։

Քանզի իշխանութիւն ունելով եկեղեցի՝ տալ Լ ու-
թերի միանգամ առաքելութիւն իմն օրինաւոր, ունէր
և իշխանութիւն յետս կոչել զայն, տեսեալ զի չարա-
չար վարէ զնոյն։ Քանզի եկեղեցին 'ի տալ անդ նմա
իշխանութեամբ զառաքելութիւն զայն՝ էր յայնժամ
ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի, ուստի և վասն այնորիկ
դատաւոր օրինաւոր և քննիչ անմոլար՝ վարդապետու-
թեանն Լ ութերի. Լ ութեր ուրեմն չէր իշխան դա-
տաւոր յառնել ընդդէմ՝ վարդապետութեան եկեղե-
ցւոյն, և իրաւունս անձին գրաւել առ 'ի նզովել զնա.
այլ մանաւանդ ըստ վճռոյն Քրիստոսի « Ոչ լսելով
» եկեղեցւոյն՝ լինիցէ ինքն իբրև զհեթանոս և զմաք-
» սաւոր »։

Այլ դրութիւնդ այդ Տիմոթէոսեայ՝ թէ՛ զանհե-
թեթ անտեղութիւնն՝ է և գլխովին անբաւական. զի

թէպէտև առեալ ևս լայէ Լուսերոս զսովորական զա-
ռաքելութիւնն քահանայական, ոչ կարէր նա փոխան-
ցել զայն առ իւր աշակերտս. զի եպիսկոպոս չէր։ Բան-
զի սովորական առաքելութիւնն երբէք ոչ յումեքէ
առաւ յեկեղեցւոջ Քրիստոսի, բայց եթէ յառաքելոց
և յեպիսկոպոսաց նոցուն յաջորդաց։

Բայց և զառաւելն զայն և գլոյժ ծիծաղելին ուր
թողցուք ասել, զի և բազումք 'ի հովուաց եկեղեցւոյ
նորաղանդիցդ ընտրեցան յաշխարհականաց անտի և
յարուեստաւորաց. որոց և գլխովին անմարթ էր տալ
զառաքելութիւն եկեղեցական։

Ընուանին 'ի նորաղանդս Պեզա յառաջ բերէ 'ի
պատմութիւնս իւր, եթէ արհեստաւորք ոմանք սոս-
կականք աստ և անդ հիմնեցին զեկեղեցիս նորաղան-
դիցդ՝ զԱեձայն և զՈրէանսայ և զՍենլեայ և զՍպի-
նեայ։ Այս պատմէ դարձեալ 'ի գիրս իւր՝ եթէ Պետ-
րոս Կերքեան արհեստաւոր գզիչ ատուեայ կայու-
ցաւ հովիւ և առաջնորդ Մէեայ քաղաքին 'ի բազմայ
համարուեստից իւրոց 'ի գզչայ և 'ի կտաւագործայ։
Այս թէ՝ առաջին հովիւ 'ի Փարիզ եկաց Մասսն Ու-
վիերեան ընտրեալ յաշխարհականաց անտի։

Իսկ ապա՝ որ անկարծելին էր, յայս դիպուած
գլխաւորքն յայնժամ 'ի հովուաց նորաղանդոյն ասա-
ցին այսպէս, «Յայս դիպուած, ասեն, այս ընտրու-
թիւն՝ որ եղև յաշխարհականաց անտի՝ ունի զտեղի
զսովորական զառաքելութեան»։ Ասեն, այլ զիաՀդ
ցուցանիցեն մեզ. ոչ ասպաքէն բանք իցեն։

Այս արդ՝ ինձ թուի, բարեկամ, եթէ ըստ բաւա-
կանին ապացուցաւ, զի հիմնադիրք և հովիւք անուա-
նեալքդ նորաձայնութեան եկեղեցեաց չունէին ինչ
առաքելութիւն։

Եւ ողջոյն նպատակ տրամախօսութեանս յայն յանգեցեալ՝ եթէ միայն եկեղեցի ուղղափառաց միացեալն ընդ յաջորդի սրբոյն Պետրոսի, զոր եդ Քրիստոս գլուխ սուրբ հաւատոյ՝ հիմն եկեղեցւոյ, հիմնարկեցաւ 'ի Քրիստոսէ. և թէ սա միայն է ժողով քրիստոնէից, որոց հովիւք անդստին 'ի Քրիստոսէ ընկալան զառաքելութիւն խրատանց։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ընժխտելիք թուին առ այժմ փաստքդ։ Բայց քանզի և այլոց ևս բազմաց պայքարաց և փաստից պէտք են մեզ յաներկևանութիւն իրացդ, ՕՆ առեալ մեր փոփոխ առցուք և տայցուք զայնոսիկ 'ի յաջորդ տրամախօսութիւնս։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Գ.

Եկեղեցի ուղղափառաց է միակ Ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի, քանզի նա միայն է ունակ չորից նշանաց եկեղեցւոյ. որ են՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն. յորոց անբաժ են ընկերութիւնք Լութերեանց և Կալվինեանց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ո՞Ճշմարտութիւնն անխուսափելի, զայն՝ եթէ պարտ և հարկ է ուրեմն հերձելոյն միանալ ընդ եկեղեցւոյն Քրիստոսի, յերիկեան տրամախօսութեանս ցուցի քեզ հաստատութեամբ. և դու ինքնին 'ի վերջէ երկբայութիւն ոչ ցուցեր 'ի բանիդ։ Արդ ես յառաջին փաստս իմ 'ի հաստատութիւն՝ եթէ եկեղեցի ուղղափառաց է հիմնարկեալն 'ի Քրիստոսէ՝ ուստի և Ճշմարիտ և միակ, ակնարկի քեզ արարի յայնժամ և վասն այլոց ևս անխուսափելի փաստից. և ահաւասիկ քեզ այդուքիկ։

Նշանք անջնջելիք քառեակք զոն Ճշմարիտն եկեղեցւոյ. և այս նշանք դրոշմաւորք զանազանեն զնա

յայլ ամենայն ժողովոց և ընկերութեանց։ Զոն գարձեալ և այլ յատկութիւնք երեք նմա միայնոյ սեպհականք. որ ոչն պատշաճին այլոց ամենեցուն արտաքոյ նորա։

Եւ արդ ասեմ՝ եթէ միայն եկեղեցին ուղղափառաց միաբանեալն ընդ Հոգւոյն՝ է ունակ նշանացս այսոցիկ և յատկութեանց. իսկ ընկերութիւնք նորաձայնից անբաժ են յայնցանէ։ Ապա ուրեմն միայն եկեղեցի ուղղափառաց է եկեղեցի Քրիստոսի. և նորա ղանդիցդ՝ ոչ։ Զ այն երկուց այսոցիկ աւադիկ է սերկեան տրամախօսութիւնս մեր։

Եւ քանզի դուն փրկութեան մարդկան երաց Աստուած յեկեղեցւոջ իւրում, և միջնորդաւ եկեղեցւոյս կամեցաւ 'ի գլուխ հանել զնոցն, անշուշտ ուրեմն պարտ էր սմա նշանս իմն ունել որոշիչս և յայտարարս, որովք հեշտեաւ 'ի ծանօթութիւն գայցէ մարդկան և յընդունելութիւն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Եւ ո՞ զք յերկուասցի, եթէ հարկ էր եկեղեցւոյ Քրիստոսի ունել նշանս ինչ ծանօթարարս անձին իւրոյ։ Ա՛յլ թէ ոչ զք նշանքդ, այս է իմ առաջին խնդիր՝ զոր և կարևոր յոյժ թուի ինձ 'ի սահմանել. քանզի և 'ի սխալեն 'ի նշանսն, մեծապէս է վտանգն՝ սխալել և 'ի բուն անդր։

Ա՛րդ դու ինքն յուշ ինձ արարեր, եթէ առաքեալքն սուրբք ինքնին հոգ տարան զամենայն հաւատալիսն եկեղեցւոյ առնուլ մուծանել 'ի հանգանակ անդր հաւատոյ. և արդ ես գտանեմ 'ի հանգանակին յայնմիկ ոչ քառեակ, այլ նշանս երկուս. զոր ետուն նոքա սեպ-

հական եկեղեցւոյ։ Քանզի կոչեցին զնա « Սուրբ և Կաթողիկէ »։ Իսկ՝ն թերևս այդ կրկին նշանքդ, զոր բոց կամիս այսօր ճառել ինձ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ընդար ասացեր. են իսկ այդոքիկ նշանք երկուք սահմանիչք եկեղեցւոյ Քրիստոսի յառաքելական հանդանակին. բայց գոն և այլ ևս երկուք, զոր սահմանաբար յաւել ընդհանրական ժողովն Կոստանդնուպոլսի 'ի հանդանակի հաւատոյն։

Այս երկրորդ ընդհանուր ժողով գումարեալ յամին 381, 'ի սկզբան անդ կայսերութեան մեծին Թէոդոսի՝ կոչեաց զեկեղեցին Քրիստոսի, « Մի, Սուրբ, » Կաթողիկէ, և Առաքելական »։ Քանզի հարք սրբոյ ժողովոյս 'ի վերայ երկուցն առաջնոց յաւելին ըզ Միութիւնն և զԱռաքելութիւնն։

Միութիւնն էր իսկ 'ի վաղնջուց ընդ քոլով իմն բայատրեալ՝ 'ի հանդանակի անդ առաքելոյն. քանզի կոչեն անդ եղականաբար « Եկեղեցի », ասելով. « Հաւատամ յեկեղեցի »։ Սակայն 'ի դէպ էր բայայայտագոյնս ազդ առնել զնոյն. քանզի յետ վախճանի առաքելոյն սրբոց խուժան հերետիկոսաց 'ի վերերևեալ՝ ընկերութիւնս և ժողովս պէսպէս կայուցին հերձեալս 'ի կաթողիկէ եկեղեցւոյ. ուստի և կարևոր էր ուղղափառաց դաւանութիւն յայտնագոյն տալ վասն « Միութեան » Եկեղեցւոյ. Յաւելին և « զԱռաքելականութիւն », առ 'ի քաջ ևս սահմանել, եթէ այս միայն եկեղեցի իւրով աշխարհաբարոց և անվանեալ վարդապետութեամբն չունի զծագումն յոտարընկերութենէ, այլ անընդհատ յաջորդութեամբ հոփուսոյ

և առաջնորդաց իւրոց երթեալ 'ի վեր եկանէ մինչև յառաքեալն անդր։

Արդ կամիմ մանրամասին ցուցակութեամբ քառից այսոցիկ սահմանաւոր նշանաց փաստաբանել քեզ, եթէ առհասարակ այս նշանք 'ի դէպ պատշաճին ուղղափառաց եկեղեցւոյն. և թէ և ոչ մին 'ի չորից նշանաց ոչ գտանի յընկերութիւնս նորաձայնութեան ձերոց։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Բարւոք է, տեսցուք զփաստաբանութիւնդ։ Բայց յառաջ զայս ասեմք մեք, զինչ պէտք իցեն այլոց հանգանակի, յորժամ 'ի ձեռին ունիմք մեք զառաքելոցն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ո՛չ այդպէս. պարտ է ընդունել և զհեղինակութիւն հանգանակի ժողովոյն Կոստանդնուպոլսի։ Բանզի և ստէպ խոստովանեցան ձեր հաւատակիցք եթէ վարդապետութիւն եկեղեցւոյ անդստին 'ի սկզբանէ սուրբ և անարատ եկաց մնաց գէթ մինչև յառաջին 'ի չորս դարսն, ապա ուրեմն ընդունելի է հեղինակութիւն երկրորդ ընդհանուր ժողովոյս։

Հապա մնցուք այժմ 'ի քննութիւն չորից նշանաց. այլ քանզի՝ որպէս ինձ թուի՝ չեղէց ես բաւական հետաքննել ողջիկ զամենայն այսօր 'ի միում միայն տրամախօսութեանս, վասն այնորիկ զձառ «Արքութեան» Եկեղեցւոյ, որում ընդարձակագոյն քննութեան պէտք են, պահեսցուք առ վաղիւն. և այսօր սկիզբն արասցուք վասն «Միութեանն»։

Եկեղեցի Քրիստոսի է մի. այլ զինչ նշանակեսցէ «միութիւն» այս։ Հասարակ խօսելով նշանակէ եթէ չէ և ոչ ևս մարթի լինել եկեղեցի Քրիստոսի այլ ինչ, բայց մարմին մի միայն և ընկերութիւն մի միայն։ Այս առաջին քննութիւն չունի պէտս փաստից յուցակութեան. քանզի և քաջայայտ է, եթէ մի միայն եկեղեցի հիմնարկեաց Քրիստոս և զլուսն մի տալով լրութեան մարմնոյն՝ կոչեաց զնա իւր եկեղեցի. «Ի» վերայ այդր վիմի, ասէ, շինեցից զեկեղեցի իմ». ուստի և առաքեալքն յամենայն 'ի թուղթս իւրեանց և 'ի հանգանակի անդ հաւատոյ կոչեցին զնա եղակնաբար «Եկեղեցի»։

Դարձեալ և «Մի», ասելով զայն ազգ առնէ, եթէ նորա ամենեքեան որ նորա մասին են, միացեալք են ընդ միմեանս նուիրն դաւանութեամբ նոյն և մի հաւատոյ, հաղորդակցութեամբ նոյն և մի խորհրդոց և հպատակութեամբ նոյսուն օրինաւոր հովուաց՝ և առաւել քան զամենայն՝ միոյ երևելի գլխոյ եկեղեցւոյ։ Միութիւն հաւատոյ, միութիւն խորհրդոց, միութիւն կառավարութեան և գլխոյ. ահաւասիկ քեզ երբեակ կնիքք պարունակեալք յառաջնում՝ նշանի «Միութեան եկեղեցւոյ»։

Որդ ասեմ՝ 'Նախ եթէ պարտ է ամենայն անդամոցն որ կայուցանեն զեկեղեցի՝ ունել զնոյն և զմի հաւատս. այս է՝ զմի հաւատ աստուածային և գերբնական։ Մի միայն է Աստուած, ասէ առաքեալն. մի հաւատք աստուածային, մի միայն մկրտութիւն. «Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն» Եփես. 4։ Ամենայն անդամք եկեղեցւոյս այսորիկ գործեն զմի և զնոյն մարմին. և զինքրդ մարթ իցէ միոյ մարմնոյ բաժանել 'ի հաւատալ իւրում։ Ու հասարակ պարտին

ունել զմի հաւատ պերբնական, ուստի և զմի հաւատ Ճշմարիտ և ստոյգ. և անհնար է ունել ամենեցուն զմի հաւատ Ճշմարիտ, և ոչ զնոյն և զմի հաւատ. քանզի անհնար է Ճշմարտութեան 'ի նմին ժամանակի լինել յերկուս ներհակակիր միտս. հարկ է կամ միոյն և կամ միւսոյն լինել 'ի մոլորութեան:

Օրուր է գլխովին ասելն, եթէ շատ է միաբանել միոյն 'ի մասունս ինչ հաւատոց: Այս է անճողոպրելի և անձնամատն փախուստ, զոր հնարեցին ասել ձերդ նորաձայն քարոզիչք. զորոց և զստութիւնն ապացոյցիս առակեցուք 'ի տեղւոջ իւրում: Այսպա ուրեմն ոմն ոչ եկեղեցւոյն Քրիստոսի պարտին առհասարակ միանալ միջնորդաւ մի և նոյն հաւատոյ:

Ասեմ երկրորդ. պարտին ամենեքեան միանալ նաև «Ասելիք խորհրդոցք»: Օր թէ ոչ դատանեսցեն առհասարակ զնոյն խորհուրդս, չէ մարթ հաւատոյն նոյա լինել նոյն. որովհետև նոյն իսկ դատանութիւն խորհրդոց է մասն հաւատոյ և վարդապետութիւն նորոյն եկեղեցւոյ: Այս առաւել ևս զի «Խորհուրդք» ինքնին միշտ ծանուցան և համարեցան իբրու նախապատիս յօդակապք միաւորիչք հաւատայելոց:

Երրորդ՝ պարտ է յեկեղեցւոջ լինել միութեան կառավարութեան և գլխոյ: Առաւել քան զամենայն՝ այս միութիւն է որ կազմէ զնոյն մարմին: Զիք միութիւն ընկերութեան գտանել երբէք 'ի մարդիկ՝ որ չունիցի զնոյն կառավարութիւն և զնոյն գլուխ:

Եկեղեցի ուղղափառաց ընդ ամենայն տիեզերս հաւատարեալ միշտ հերձուածողս և օտարաց 'ի ծոցոյ իւրմէ ցայնոսիկ՝ որ միանգամ յաղն կացեալ ոչ կամեցան ճանաչել զերաւունս գլխաւորութեան բահանայապետին Հռովմայ, զոր ունի նա 'ի լինելոյ անտի իւրմէ

յաջորդ ոչ լոկ առաքելոյ ուրուք իբրու զայլ եպիսկոպոսունս, այլ երանելւոյն Պետրոսի առաքելոյ գլխաւորին՝ զոր ընտրեաց Ինքնին Քրիստոս։

Պարտ է ուրեմն անդամոց եկեղեցւոյն միանալ 'ի Հպատակութեան Նոյսն իսկ օրինաւոր հովուաց եկեղեցւոյ, և առաւել ևս՝ Նորոն իսկ երևելի գլխոյն։

Ահեմ երևելի. քանզի գոլով եկեղեցի մարմին երևելի, պարտ է և գլխոյն լինել այնպիսի։

Եւ արդ հարցանեմ քեզ բարեկամ, այս տեսութիւնք և գնութիւնք միութեան եկեղեցւոյ թուիցին քեզ արդեօք մեկինք և բանաւորք։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Յոյժ թուի եթէ վասն բանի միութեանս, ընդհանրապէս՝ անմարթ է ունել այլ գաղափար առաւել քան զայդ մեկին և իրաւացի։ Բայց լուիցուք, եթէ զնարդ պատկանեսցի այդ միութիւնդ Ճշգրտիւ միայն յեկեղեցին ձեր։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Արդ ուրեմն մեք նախ զայն տեսցուք, եթէ իցէ միութիւնս այս նշան Ճշմարտութեան եկեղեցւոյն ուղղափառաց միայնոյն ընդ Հռովմայ. և ապա գիտեսցուք և զայն եթէ մարթ իցէ երբէք գտանել զայդ և յընկերութիւնս Նորաձայնիցդ։

Եւ արդ նախ՝ ամենայն անդամք եկեղեցւոյն ուղղափառաց ունին գնոյն հաւատս. և անհնար է չլինել այնպիսի. քանզի իբրև հիմն և սկիզբն հաւատոյ իրեանց ունին զայս, եթէ ժողով օրինաւոր հովուաց

եկեղեցւոյ հանդերձ երևելի գլխովն է դատաւոր անսխալ յամենայն խնդիրս հաւատոյ և վարուց. և որ միանգամ ընդդէմ դարձեալ իշխանութեան եկեղեցւոյ սլինդ ունիցի զմասն ինչ միայն զդատապարտեալն 'ի նմանէ, իբրև թշնամի ճշմարտութեան արտաքոյ է ճանապարհի փրկութեան։

Սակայն յորժամ աստուածաբանք 'ի խնդիրս ինչ կարծիս ունիցին զանազանեալս 'ի միմեանց, են իսկ այն կարծիք փոխն խնդրոյ չև ևս սահմանելոյ յեկեղեցւոյ։ Բայց թէ երբէք սահմանեսցէ՝ պատրաստք են նոքա համբուն հպատակել զևրեանց կարծիս դատաստանի եկեղեցւոյ։

Մի՛ թաքանեալ են նոքա և 'ի նոյն խորհուրդս. և աներկուանալի է բանս և անկարօտ յուսյակութեանց։ Ը. հասարակ դաւանին ուղղափառք խորհուրդս եօթն եկեղեցւոյ. և այս վարդապետութիւն հաւատոյ սահմանեալ է 'ի նմին իսկ եկեղեցւոյ ընդ դատանքաւ նզովից։

Ը. հասարակ հպատակեալ են և նոցուն օրինաւոր հովուաց և առաջնորդաց, և առաւել ևս՝ քահանայապետին Հռովմայ. և 'ի նմա իբրու 'ի յաջորդ առաքելապետին Պետրոսի Ճանաչեն զնախագահութիւն պատուոյն և զիշխանութիւն աստուածային իրաւանց. զի յաստուածային բերանոյն կնքեցաւ շինութիւն եկեղեցւոյն 'ի վերայ վիմի Պետրոսի։ Մ՝ինչ զի որ կամի լինել յեկեղեցւոյն Քրիստոսի, անհրաժեշտ պարտի Ճանաչել և զյաջորդն Պ՝ետրոսի՝ զոր եդ Քրիստոս՝ գլուխ սուրբ հաւատոյ՝ հիմն եկեղեցւոյ։

Ը. այսպէս ապա կառավարութիւն եկեղեցւոյ ուղղափառաց ընդ տիեզերս առաջի առնէ կարգ իմն զեղեցիկ զառաջնորդելոյ և զառաջնորդաց կապելոյ ընդ

միմեանս կապանօք սիրոյ և աստիճանի յընդհանուրս։ Պղերիկոսք 'ի սմա դատիարակեալք և փորձեալք ընդ ժամանակս ինչ՝ բարձրանան 'ի կարգս զանազանս, կի-սասարկաւագութեան, սպիսկաւագութեան, քահա-նայութեան, եպիսկոպոսութեան, հպատակեալք ընդ միմեանսիք, և ընդ երևելի գլխոցն եկեղեցւոյ յընդ-հանուրս. այն ինքն է յաջորդն սրբոյն Պետրոսի առա-քելապետին. որոյ է գումարեալ և ժողով ընդհանրա-կան եպիսկոպոսաց ըստ պիտոյից եկեղեցւոյն, յորում և նստի ինքն նախագահ, զոր է տեսանել 'ի պատմու-թիւնս ժողովոց եկեղեցւոյ, կամ անձամբ կամ 'ի ձեռն նուիրակացն։

Ընհաւասիկ քեզ յեկեղեցւոջ ուղղափառաց կառա-վարութիւն նոյն և մի, և գլուխ նոյն և մի, և պաշ-տօն աստուածային նոյն, և 'ի պաշտամանս յայտնիկ և 'ի մատակարարութեան խորհրդոց էական արարողու-թիւնք նոյն և մի, թէպէտ և զանազանեալք լեզուաք ըստ ազգաց ազգաց քրիստոնէից։

Ընյա ուրեմն ըստ ամենայն տեսութեան միութիւն ամենակատար է տեսանել յեկեղեցւոջ ուղղափառաց։

Լսակ ընդ հակառակն, Ընթերցողդ՝ եթէ երբէք 'ի քնին առցուք մեք զընկերութիւնս և զժողովս նորաձայնու-թեան ձերոյ, աղէ ասա, զո՞ր սկիզբն միութեան կա-յասցուք մեք գտանել 'ի նոսա։

'Ասա զառաջինն՝ չունին գլուխ մի, առ որ մարթ իցէ նոցա դիմել առ 'ի սահմանել զենդիկս ինչ հա-ւատոց կամ առ 'ի կարգել սահմանադրութիւնս ինչ եկեղեցւոյ։ Ունին նորա զկենդրան միութեան և հա-ղորդակցութեան։ Ընւ եթէ իցէ ևս, մարթ է այսմ հանդիպել յանգղիական եկեղեցւոջ՝ որ զթագաւորն ունի իբրև գլուխ. բայց ոչ սրբոյն։ Ինչ

արդեօք զլուսոյ այդ, նոյն այն զոր Յիսուս Քրիստոս ինքնին կարգեաց յանձին սրբոյն Պետրոսի։ Եւ այսպէս կատարելութիւն նոցա չունի ինչ միութիւն զկարգի և զատմիճանաց։ Չունի զսկզբունս ընդհանուրս զմնատակարարութեան և զառաջնորդութեան։

Զոն նոցա առ հասարակ ամենայն ուրեք և հովիւք ոմանք անուանեալք, այլ չիք 'ի նոսա միութիւն. չիք 'ի նոսա և դասաւորութիւն ընդ միմեանսք. չունի որ 'ի նոսա և ոչ 'ի վերայ միոյ ուրուք իշխանութիւն։

Ցորաձայնիցդ ընկերութիւնք ոչ միայն չեն միացեալք ընդ միմեանս 'ի Խորհուրդս եկեղեցւոյ, այլ և մեծապէս և ակներև պառակտեալ են նոքա 'ի միմեանց ամենայն իրօք։ Չեն նոքա միաձայնք 'ի թիւ անդր Խորհրդոյ. որպէս յուցից քեզ արդ ըստ կարգի։ Բազմազոյնք 'ի նոցանէ դաւանին միայն Խորհուրդս երկուս զՄկրտութեան և զՀաղորդութեան. և 'ի վերայ նորուն իսկ էութեան խորհրդոյն սաստիկ և ջերմապէս պայքարին նոքա ընդ միմեանս։

Լութերեանք սնդեն եթէ 'ի խորհուրդ Հաղորդութեան է նոյն իսկ մարմին և արիւն Յիսուսի Քրիստոսի. իսկ և այլք՝ եթէ ոչ այլ ինչ բայց ցոյց և օրինակ է նորին 'ի նմին Խորհրդի։ Եւ ասա այս տարբաձայն դաւանութիւն նոցա ծնանի 'ի նոսա մեծապէս յոյժ այլև այլութիւն զպաշտաման և զարարողութեանց 'ի մնակարարութեան խորհրդոյն։

Բայց 'ի վերբան զամենայն պակասի 'ի նոսա միութիւն հաւատոյ։ Հինեական սկիզբն է նոցա, եթէ չիք 'ի վերայ երկրի իշխանութիւն ինչ եկեղեցական առ 'ի սահմանել զհաւատս հաւատացելոց։ Այս ասային անպատմութեամբ ընդդէմ գխոտակցութեան իւրեանց. որպէս զի աղուտք երև եային 'ի դատաւորս եկեղեցւոյ։

Ուստի այր այր 'ի նոցանէ չունի այլ կանոն հաւատոյ, բայց զկիրս սուրբս. սակայն մեկնեալ և բացատրեալ ըստ իւրաքանչիւր մտաց և հասողութեան։ Վասն որոյ այս վարդապետութիւն նոցա ետ ասել Յիւսոբիոսի գանասելին իւր առաջ 'ի Ճառն յաղագս Միութեան եկեղեցւոյ. « Եկեղեցին ընդհանրական, ասէ, ոչ » քարոզէ, ոչ ուսուցանէ, և ոչ ևս գիտէ հրահանգել » վարժել. որպէս և ոչ կարէ պատել ինչ և սահմա- » նել »։ Զոյաժ՝ որ ձկոսի ողջոյն վեր 'ի փայր կործանել զամենայն միութիւնս, և զամենայն ստուգութիւն հաւատոյ։

Զնշուշտ ուրեմն նորաձայնիցդ ժողովք գՀետ երթեալ սկզբանցս այսոցիկ՝ չկարեն ունել զնոցն հաւատս. այլ ըստ այլև այլութեան հասողութեան իւրաքանչիւր՝ բազմապատկին և հաւատք նոցա։

Որչափ մարդիկ, այնչափ և կարծիք 'ի նոսա։ Եւ այսպէս ապա անձամբ յանձինս բռնադատին նոքա ստէպ խոստովանել զայս, նաև հեծել ևս դառնապէս ընդ միմեանս վասն այսորիկ։

Զեկա ինքնին երևելին այն 'ի նոսա յառաջնում՝ անդ թղթի իւրում՝ ստիպի անհրաժեշտ խոստովանել զճշմարտութիւնն և հաստատ. զայն, 'ի վկայութիւն կոչելով զԱնդրէաս Զուսիտիոս զԱալվինեանն. « Մեր ժողովուրդք, ասէ, տատանեալ տարուբերին » յամենայն հողմոց վարդապետութեան. մերթ յաջ- » կոյս և մերթ յայնկոյս։ Մարթ է գիտել զինչ » հաւատս ունիցին նոքա այսօր վասն կրօնի. բայց » անմարթ է ստուգել վասն հաւատոյն՝ զոր կալցին » նոքա առ վաղիւն։ Զղէ ասա, յորմէ՞ մասին » հաւատոյ այս եկեղեցիք՝ որք մարտ եղեալ կռուն- » ցան ընդ Հռովմայ հայրապետին, իցեն նոքա միաբան

» ընդ միմեանս։ Եթէ աշխատ լինիցիս վայր մի դա-
» սել աստանօր միանգամայն զամենայն մասունս
» հաւատոյ, յառաջնոյ անտի մինչև յվերջինն գտանի-
» ցես դու, զի զկէսս 'ի նոցանէ դաւանին նոքա իբրև
» մասունս հաւատոյ, և զկէսս հերքեն 'ի բաց իբրև
» ամբարշտութիւնս »։ Եւ զինչ զօրաւորագոյն կայցէ
քան զվկայութիւն անաչառ 'ի թշնամեայն բերանոյ։

Եւ արդ 'ի պակասութենէ աստի միութեան հաւա-
տոյ որ դէպք անհնարինք ետուն 'ի կառավարութեան
նոցա։ Պակասեաց ողջոյն դասաւորութիւն հպատա-
կութեան ընդ միմեամբք, պակասեաց և գեղեցիկ կարգ
հրահանգաց. զոր և ինքնին գլխովին լան նոքա և
աւաղեն։

Զոր Կասիդոն հալիւն Աղբասպուրկոյ առ Փա-
ռէլ բարեկամ՝ իւր՝ այսպէս. « Հեղինակութիւն հո-
» վուսոյ և առաջնորդաց, ասէ, գլխովին բարձեալ
» է 'ի միջոյ. ամենայն 'ի կոքուստ է և յասպակա-
» նութիւն։ Եկեղեցիք ոչ դոն 'ի մեզ և ոչ մի, յս-
» րում՝ իցէ կարգ հրահանգաց։ Ժողովուրդն յան-
» ղրգնագոյնս բողոք բառնայ ընդդէմ՝ մեր և ասէ.
» Խնդրէք դուք բռնաւորս ոմանս 'ի վեր երևեցուցա-
» նել յեկեղեցի, որ ինքն գլխովին ազատ է. խնդրէք
» հաստատել 'ի սմա նոր իմն աթոռ Պապական։
» Այս ժողովուրդն ընդդէմ՝ մեր։ Եւ Աստուած ինք-
» նին յերեսս հարկանէ մեզ զթշնամանսն, որով թըշ-
» նամանեցաք մեք զեկեղեցի անհանձարաբար և ան-
» խորհուրդ տաստկութեամբ ոգւոյ, և շտապեալ դա-
» տաստանաւ՝ որով անգոնեալ մերժեցաք մեք զա-
» թոռն Հռովմայ։ Բանզի արդ ժողովուրդն սովորեալ
» և մնեալ արձակերասան, ողջոյն իսկ խորտակեաց
» զսամեռէս և զամենայն զկապ միանգամայն խը-

» զեաց. որպէս այն թէ 'ի տապալել մեր զնշխանու-
» թիւն Հռովմայ, 'ի մեզ ինքեանս տապալեալ կոր-
» ծանեալ իցեմք զամենայն զօրութիւն Յորհրդոց և
» զսպասաւորութեան մերոյ։

» Ողաղակեն ժողովուրդք ընդդէմ մեր. Ո՛անա-
» չեմք իսկ մեք զԱետարանն. չեն մեզ պէտք ձերոյ
» նպաստիցդ 'ի ճանաչել զՅիսուս Քրիստոս։ Ասիք
» գնացէք դուք քարոզել այնոցիկ՝ որ միանգամ կա-
» միցին լսել ձեզ »։ Հաւասիկ քեզ ինքնագատ
խոստովանութիւն նոցա։

Արդ տեսեալ յայտնապէս զի չունին նոքա յիւ-
րեանս միութիւն ինչ հաւատոյ, յեկեղեցւոյ անտի
Քրիստոսի՝ լրբեցան նոքա՝ գործել անհեթեթ իմն և
հրէշալի միութիւն ընկերութեան, և անիծից և գաո-
նութեանց 'ի նեղբոյ գրաւեցան վասն այնորիկ։

Քանզի ստէպ նոքա զրպարտեցին զեկեղեցի ուղ-
ղափառաց ընդ գլխոյն Հռովմայ, և անդրագոյն ևս
յաւակնեցան ասել, եթէ և 'ի կռապաշտութիւն գլե-
ցաւ նա. և թէ՝ խրթնացեալ ողջոյն յանկարգութեան
կայ. և թէ՝ պղծեալ և ապականեալ է նա առաւել
քան զկին խայտառակեալ և շուն. և թէ՝ արգել Ա-
տուած զոհս և նուէրս մատուցանել 'ի տաճարի նորա։
Յորհեցան ասել և զայն՝ եթէ Հռովմայ հայրապետն
վատթարագոյն ևս է քան զՄահմետական ոք։

Յայս ամենայն հայհոյութեանց վերայ՝ քանզի միտ
դիր՝ համարին նոքա դարձեալ զեկեղեցին Հռովմայ
իբրև մասն եկեղեցւոյն Քրիստոսի. և միաձայնին ասել
և քարոզել՝ եթէ գոյ փրկութիւն գտանել 'ի ծոցի
նորա։ Քանիցն իցեն հանաստութիւնքն։

Սակայն և այս քարոզութիւն նոցա շարժեաց զար-
քայն Անդրիկոս Դ, և վերստին ած եմոյծ զնա յեկե-

զեցին ուղղափառաց. քանզի լուեալ 'ի Նորաղանդիցդ՝ եթէ զոյ 'ի նմա փրկութեան հաստատել, առ 'ի յապահովել եւ քան զեւ զփրկութիւն հոգւոյն՝ վերստին միաբանեցաւ նա ընդ եկեղեցւոյն Հռովմայ։

Այլ արժան և հարկ եւ իցէ աստանօր յառաջ բերել քեզ, բարեկամ, և զհոչակաւորն զայն զրուցատրութիւն երանելւոյն Փրանկիսկոսի Սալեզեան ընդ անուանի Նորաղանդին Թէոդորոսի Պեզայ։

Լոր երբեմն զի երկոքին սոքա ուրեք հանդիպեցան միմեանց. եհարց աստուածխմաստ վարդապետն Սալեզեան զՊեզա. « Ընդեօք Լութեր և Կալվին, ասէր, » յառաջ քան զաւաժանելն իւրեանց յեկեղեցւոյն Հռովմայ կարէին փրկութեան հաստատել »։ Պատասխանի ետ Պեզա, եթէ « Այո »։ Կրկնեաց յայնժամ Սալեզեանն և ասէ։

« Զէր ուրեմն պարտ նոցա թողուլ զայն » եկեղեցի. որովհետև մարթ էր նոցա 'ի նմա փրկութեան հաստատել. այն ինքն էր եկեղեցի Յիսուսի » Քրիստոսի. և Կալվինի և Լութերի չգոյին պատ» ճառք հիմնականք թողուլ զայն եկեղեցի »։

Յայնժամ յանհնարս մնեալ Պեզային, դարձեալ դարձուցեալ զպատասխանին իւր, ասայ. « Ոչ »։ Կրկնեաց անդրէն Սալեզեանն և ասէ. « Զգոյր ու» րեմն յայնժամ եկեղեցի Քրիստոսի 'ի վերայ երկրի. » որովհետև զեկեղեցին Հռովմայ յորժամ եթող ելիք » Լութեր և Կալվին, ոչ չգիան նոքա երթալ միա» բանել ընդ այլում՝ նախագոյակ ընկերութեան, այլ » ընկերութիւն նորագործ յանձանց հնարեցին »։

Ապա յետ այնորիկ Ճառ արկեալ Սալեզեանն ապացուցանէր Պեզային, եթէ անմարթ է ասել եթէ եկեղեցի Քրիստոսի 'ի միջոց բարձեալ իցէ՝ առանց

ընդդէմ գնելոյ անսուտ խոստմանն Աստուծոյ։ Ա՛ռ
գի՝ եթէ 'ի վեշտասաներորդ դարուն եկեղեցի ուղղա-
փառաց ոչ ևս էր եկեղեցի Քրիստոսի 'ի պատճառս
վարդապետութեանցն հաւատոյ՝ զոր քարոզէր և դա-
ւանէր յայնժամ, պարտ էր ուրեմն զհետ բերել՝ եթէ
նաև 'ի դարուն հինգերորդի կամ վեցերորդի պակա-
սեաց նա 'ի լինելոյ եկեղեցի Քրիստոսի. որովհետև
ըստ Լուսերի և ըստ Կալվինի այն վարդապետու-
թիւնք մոլարք սպրդեցին մտին յեկեղեցին Աստու-
ծոյ 'ի դարուն հինգերորդի և վեցերորդի, ուստի և
յայնց ժամանակաց հետէ ոչ ևս գոյր յաշխարհի
եկեղեցի Քրիստոսի, զոր անմարթ է ցուցանել։

Յայնժամ 'ի մեծ տագնապ անկեալ Պեզայ խընդ-
բեաց իւր ժամանակ 'ի պատրաստել զպատասխանին։
Սակայն 'ի հասանել ժամադրութեան աւուրն՝ յորում
պարտ էր նմա պատասխանի առնել, բազմութիւն
խուռն մանկտոյ ածեալ 'ի վայր անդր 'ի մանկահա-
սակ մարց իւրեանց, փոխան պատասխանւոյն՝ այն
հանդէս մանկտոյն և աղաղակն ելից զտեղին. և այն-
պէս խափան արկին տրամախօսութեան աւուրն ժա-
մադրութեան։

Դաւանին ուրեմն նորաղանդքդ ձեր, եթէ ընկե-
րութիւնք դիմամարտք հաւատոյն իւրեանց ևս և 'ի
մեծամեծ մասունս հաւատոյ, 'ի վերայ այսր՝ բաժա-
նակիցք են եկեղեցւոյն Քրիստոսի։ Օ՛սոյն զայս և
վաւերական օրինակաւ յայտ արարին նոքա 'ի Քրիս-
տոնէական վարդապետութեան ձերում, որ 'ի ձեռս
ձեր յածի զօրհանապազ. զոր 'ի սկզբան անդ արձա-
նացոյց քորոնիչն ձեր անուանեալն Բուրվադ. զոր և
կրկին և կրկին քննեցին նոքա և աճեցուցին, և 'ի տիպ
արձանացուցին բազում անգամ, և մանաւանդ 'ի Ճի-

նեվրա յամին 1770։ Ըրդ 'ի չորեքտասաներորդ գումարի առաջին մասին, 'ի թիւն 62, յերես 74, հարցումն առնեն այսպիսի. « Ո՞չ ասպաքէն մի միայն է եկեղեցի ընդհանրական » . պատասխանեն. « Այո, » որովհետև ամենայն հաւատացեալքն ուր ուրեք և » իցեն, կայուցանեն զմի միայն եկեղեցի, որոյ Յի» սուս Քրիստոս է գլուխն » ։

Պարտ էր ասպաքէն զայսօրինակ պատասխանի առնել, զի մի յայտնապէս դիմամարտք երևեցին հանդանակի առաքելոյն և հանդանակին Կոստանդնուպօլսի։ Սակայն յետ այնորիկ զմիութիւն եկեղեցւոյ 'ի չիք դարձուցանեն կրկնակի հարցմամբքս՝ զոր զհետ բերեն։ Քանզի 'ի թիւն 163, հարցանեն այսպէս. « Ո՞չ ասպաքէն իցեն բազում՝ եկեղեցիք մանաւորք », և պատասխանեն. « Այն այսր բազում՝ եկեղեցիք մաս» նաւորք, որ չունին ամենեքին զնոյն հաւատ և ոչ » զնոյն արարողութիւնս։ Սակայն եթէ զՅիսուս » Քրիստոս Ճանաչեն իւրեանց միակ գլուխ, մի ըստ » միոջէ ամենեքեան նոքա կայուցանեն զընդհանրա» կան եկեղեցի » ։ Քաջ տեսանես դու աւադիկ, քանի՞ խորամանկութեամբ աստանօր 'ի բաց հանեն նոքա 'ի կարգէն զեկեղեցի ուղղափառաց միլիոնաւորաց, որ աւանդապահք դաւանութեան Աւետարանին՝ զառաքելապետին Պետրոսի յաջորդ զՀռովմայ հայրապետ Ճանաչեն իւրեանց գլուխ երևելի, բայց յաներևոյթ գլխոյն՝ որ է ինքն Յիսուս Քրիստոս։ Այլ զինչ արդեօք ունիցին նոքա ասել վասն Անգլիական եկեղեցւոյն՝ որ զլծագաւորն համարի իւր 'ի գլուխ եկեղեցական։

Իսկ ապա 'ի թիւն 164, յաւելուն և հարցումն այսպիսի. « Եկեղեցիքդ մանաւորք իցե՞ն արդեօք

ամենեքեան հաւատարակէս սուրբք և մաքուրք » . և պատասխանեն . « Ոչ . են են եկեղեցիք՝ որոց հաւատք, » և որոց արարողութիւնք խառն են՝ի մոլորութեանց, » և յաւելապաշտութեանց » :

Եւ այսպէս ըստ վարդապետութեան նորաղանդիցդ մի միայն է եկեղեցի . բայց ոչ ինչ այլ գնասես՝ յէ երբէք միութեան նորա , բայց եթէ ունելն՝ի վերայ երկրի գլուխ մի երևելի : Ոչ « Մոլորութիւնք » զոր ասացին , ոչ « Աւելապաշտութիւնքդ » , ոչ « Այլևայլութիւն հաւատոյ » , գնաս երբէք հասուցանեն միութեան ընդհանրական Եկեղեցւոյ :

Այլ ինչ մարթ հրեշանշան ինչ առաւել անճոռնի քան զայդ հնարել երբէք :

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Օգնութիւն փաստիցդ՝ անաչառ խօսելով՝ չիք յուրատ լինել . քանզի յոր և իցէ միտս ասցէ ոք զմիութիւն եկեղեցւոյ , այս ինչ քաջայայտ կայ , զի նշանդ այդ առաջին , « Մի » յոյժ առաւելութեամբ՝ի դէպ գայ եկեղեցւոյն ուղղափառաց , քան եթէ նորաձայն ընկերութեանցն հերձելոց՝ի նմանէ : Եւ զոր դու , ինձ յուշ ածեր՝ի քրիստոնէական վարդապետութենէն՝ի լոյս ածեալ յամին 1770 , է նոյն այն՝ յոր ես ինքն վարժեցայ՝ի մանկութենէ՝ի հայրենի երկրին իմում՝ի Օշկիցերա : Եւ զնոյն տակաւին՝ի ձեռին ունիմ՝ և ընթեռնում . և բերիցս ես զայն ընդ իս՝ի միւսանգամ դարձին իմ առ քեզ՝ի յետագայ տրամախօսութեանս :

Բայց քանզի զերկրորդ նշանն , սեփական եկեղեցւոյ Քրիստոսի այս է՝ « Զսրբութիւնն » , պահեցեր մեզ իբրև նիւթ առանձին յայլում տրամախօսութեան ,

մնայ ուրեմն այսօր պայքարել մեզ յաղագս « Կաթո-
ղիկէութեանն » . յոր ոչ կարծեմ յաջողել քեզ , որ-
պէս 'ի բան Աիութեանն . քանզի և եկեղեցի մեր
աւասիկ տարածեցաւ յընդհանուրս ընդ ազգս ազգս ,
և « Օր ըստ օրէ աճեն հաւատք մեր » ըստ ասիցս ա-
ռաքելոյն :

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Զայնդ « Կաթողիկէ » է յունական , և նշանակէ
« Ընդհանրական » , և է այս երրորդ նշան սեպհական
եկեղեցւոյ Քրիստոսի :

Ինքնին Աստուած 'ի հին օրէնս հոչակ եհար բազ-
մագէմ նախաձայնութեամբք սրբոց մարգարէից , եթէ
'ի գալ Աեսիային յաշխարհ , ընդհանուր տիեզերք
եղիցին ժառանգութիւն նորա սեպհական : « Խնդրեա
» յինէն , ասէր Դաւիթ 'ի գիմաց յաւիտենական հօր
» Աստուծոյ առ Որդին միածին , և տայ քեզ զհե-
» թանոսս 'ի ժառանգութիւն , և իշխանութիւն քեզ
» ընդ ամենայն ծագս երկրի » . և թէ՝ « Տիրեսցէ
» նա 'ի ծովէ մինչև 'ի ծով , և 'ի գետոց մինչև 'ի
» ծագս աշխարհի : Երկիրպագցեն նմա ամենայն թա-
» գաւորք երկրի և ամենայն ազգք ծառայեսցեն նմա » :
Աարթ էր ինձ և այլ անբաւս 'ի նոյն իմաստ քաղել
'ի գրոց սրբոց :

Երդ ուրեմն հանդերձեալ էր արդեօք այս աստուա-
ծայինս Աեսիայ տիրել 'ի վերայ ամենայն ժողովրդոց
տիեզերաց իբրև թագաւոր ինքնակալ : Եւ ոչ բնաւ
երբէք . քանզի անշուշտ ժամանակեայս այս տիեզերա-
կալութիւն չէր ինչ արժանի իւրումն աստուածպե-
տական մեծվայելչութեան . « Իմ արքայութիւն , ասէր

լինքին տէրն, չէ յայսմ աշխարհէ »։ Օ՛ի եկն նա յաշխարհ ոչ վասն այսորիկ, այլ 'ի բանալ առաջի մարդկան սուրբ և աստուածային նոր օրինաքն զաղխեալ դրունս երկնից, և առնուլ մուծանել զնոսա 'ի ժառանգութիւն յաւիտենական արքայութեանն իւրոյ։

Վասն այսորիկ յետ ջնջելոյ աստուածային արեամբն զանօրէնութիւնս երկրի, և յետ կենագործ յարութեամբն 'ի մեռելոց միւսանգամ երևելոյ յաշխարհի, պատուիրեաց առաքելոցն իւրոց երթալ քարոզել ընդ ամենեսս զաւետարան իւր սուրբ ամենայն ազգաց. և խոստացաւ անանջրպետ կալ մնալ ընդ նոսա մինչև 'ի կատարած աշխարհի։

Պատուիրանին հնազանդեալ սուրբ առաքեալքն յարեան միսեցան տարաշխարհիկք եղեալ մինչև 'ի հեռաւոր յոյժ սահմանս աշխարհի։ Եւ այնպէս կրօնք սրբութեան երկնաւոր վարդապետին իւրեանց կարգեցան հաստատութեամբ ընդ ամենայն երկիր. եթէ հրաշագործութեամբք նշանաց՝ զուգահետք ընդ քարոզութեանն, և եթէ ներշնչութեամբ և ազդմամբ շնորհաց Հոգւոյն սրբոյ։ Եւ անդստին յայնց ժամանակաց հետէ հիմնեցաւ եկեղեցի Քրիստոսի ամենայն ուրեք. ուստի և եղև և անուանեցաւ Կաթողիկէ կամ ընդհանրական, այս է՝ սփռեալ ընդ ամենայն կողմանս աշխարհի։

Երդ մնայ լինձ այժմիկ ցուցանել, եթէ զընդհանրականութիւն զայս է գտանել յեկեղեցւոջ ուղղափառաց՝ միաբանեալ ընդ Հռովմայ, և ոչ երբէք յընկերութիւնս նորաձայնութեան ձերոյ։ Եւ անշուշտ է գտանել զնոյն յայս եկեղեցի, քանզի և անշուշտ այս եկեղեցի յամենայն ընկերութիւնս եղև միշտ և է տակաւին առաւելագոյն ծաւալեալն 'ի զանազան կողմանս

աշխարհի. և չէ մարթ յառաջ բերել այլ ընկերութիւն քրիստոնէից այսչափ բազմաթիւ և տարածեալ։

Բդ յառաջ ածեալ զԵւրոպէ, եկեղեցի այս ուղղափառաց տիրեալ է 'ի մեծագոյն և 'ի նախապատիւ մասին նորա։ Ողջոյն ընդ ամենայն Իտալիա, 'ի Սպանիա, 'ի Ռուսիտանիա, 'ի Գաղղիա, յաշխարհն Ռէհացց, և 'ի միում մասին Գերմանիոյ. և յայս ամենայն սահմանս աղանդք նորաձայնիցդ չունին հրապարակաւ պաշտամունս զհաւատոյն իւրեանց իբրու զուղղափառացն։

Իսկ ապա մնացեալ մասունք Եւրոպիոյ բաժանին յայլևայլ պետութիւնս, յորս է գտանել և աղանդս այլևայլս։ Իսկ յիւրաքանչիւր դաւառս Գերմանիոյ են իսկ ուղղափառք խառն ընդ նորաղանդից։

Ի Ռուսսիա տիրէ յունադաւանութիւն. բայց և բազմութիւնք են ուղղափառաց։ ՅԱնգղիա է մասնաւոր շառաւիղ յարմատոյ նորաղանդութեան, շատ ինչ զանազանեալ յայլոց ըստ պատարագամատուցին իւրեանց և ըստ արարողութեանցն. և որ մեծն է՝ զի ունին նոքա իւրեանց գլուխ մասնաւոր եկեղեցական՝ զթագաւորն։ Թող և զկողմն Եւրոպիոյ, զԹաքիա-բոյն և զՏաւրիոյ՝ բնակեալ 'ի Մահմետականաց և յանհաւատից, սակայն բնակիչն 'ի նոսա և ուղղափառք։

Բայց և աղանդք զանազանք սփռեալք և խառն դրաւեն և զայլ կողմանսն. ըստ որում՝ Ռութերեանք, Կալվինեանք, Կրկնակնունքքն, Սոկինեանք, Ամիշնեանք, Գոմարեանք, և այլն։

Այլ այս ընկերութիւնք ոչ գործեն 'ի նոսա մարմին մի կամ համախմբութիւն մի։ Ինմարթ է նոցա գալ միանալ ընդ նոսին զլիսով, ոչ ըստ իւրաքանչիւր հոլովացն, ոչ ըստ միաձայնութեան վարդապետու-

թեանն, ոչ ըստ պաշտամանց արարողութեանն, և ոչ ըստ կարգի կառավարութեանն։

Բայց և զայն գիտեա՛ք, զի զեկեղեցի ուղղափառաց զմիացեալն ընդ Հռոմայ՝ գտցես դու ընդ ամենայն տեղիս յորս միանգամ հասեալ գրաւեցին այս աղանդք։ Նշանելին Աւգոստինոս 'ի ցուցանել անդ իւրում ընդդէմ Դոնատեանց, եթէ ընդհանրակաութեանն նշան սեպհական եկեղեցւոյն Քրիստոսի՝ սակաստի աղանդոյն նոցա, ասէր ցնոսա այսպէս. « Ընդ ամենայն տեղիս՝ ուր և կայցէք դուք՝ գտանի » եկեղեցի ուղղափառաց. այլ ոչ նոյնպէս և աղանդ » ձեր, և ոչ այլ ինչ յաղանդոց գտանի անդ, ուր » միանգամ կայցէ եկեղեցի ուղղափառաց »։

Օնոյն և մեք մարթիմք անվեհեր ասել առ նորա՝ զանդամ։ Ուր ուրեք միանգամ լցէք դուք, անդ գտանին և ուղղափառք, և այն՝ բազմութիւք. ըստ որում Անգղիա, 'ի Սկոտիա, և առաւել Յոռլանտա՝ թուով եօթն միլիոնք. 'ի Ռուսիա, 'ի Պրուսիա, 'ի Գերմանիա, Ռլանտա։ Նա 'ի բազմագոյն կողմանսդ յայդոսիկ ունին նոքա յաճախութեամբ և պաշտամունս հրապարակականս զհաւատոյն իւրեանց և զեկեղեցեաց։ Այլ չէ նոյնպէս ասել և վասն աղանդոցդ ձերոց, որոց իւրաքանչիւրն սահմանափակ կայ 'ի վայրի ուրեք։

Լոկ ապա յերիս այլ մասունս աշխարհի 'ի մէջ Մահմետականաց, Հնդկաց, Սինէացւոց, Արաբացւոց, վայրենարնակաց, և բարբարոսաց, առ հասարակ ամենայն ուրեք մնատս գտեալ բնակէ եկեղեցի ուղղափառաց սփռեալ և տարածեալ, և ունի իւր աշակերտս և քարոզիչս դարձուցիչս մոլորելոց. և է գտանել ամենայն ուրեք բազմութիւն հաւատացելոց ուղղափառաց։

Պաշտօնեայք և հոլով եկեղեցւոյս այսորիկ ընթանան ամենայն ուրեք հոչակ հարկանել զկրօնից հաւատոյ Աւետարանին, և ծաւալել զայն ընդ ամենայն երկիր. խրախուսեալք և զօրացեալք հանապազ նովին իսկ աստուածային նախանձու՝ որով վառեցան միանգամ սուրբ առաքեալք. և 'ի գործ տանին մինչև ցայսօր զպատուէր հրամանի փրկչին Յիսուսի, եթէ « Գնացէք ընդ ամենայն աշխարհ, ուսուցէք զաւետարանն ամենայն արարածոց » :

Այս եկեղեցի է որ ամենայն ուստեք ամենայն ուրեք առաքէ զառաքեալս իւր և զվարդապետս : Քանզի յետ քարոզութեան սրբոյ առաքելոյն և վախճանին նոցա՝ գոտէպինդք վառեցան առաւել իմն՝ Հայրապետքն յաջորդեալք Առաքելապետին Պետրոսի, և առաքէին եպիսկոպոսունս և քահանայս երթալ դարձուցանել զանհաւատս և հիմնել Եկեղեցիս ընդ տիեզերս : Որպէս յերկրորդ դարու անդ սուրբն Երանոս՝ որ կայր յայնժամ 'ի Հռոմ ընդ սրբոյն Պողիկարպոսի՝ առաքեցաւ 'ի Լիոն քաղաք 'ի Գաղղիա 'ի սրբոյն Անիկետոսէ Հայրապետէն Հռոմայ : Իսկ 'ի դարուն երրորդի յետ հալածանացն Ներոնի կայսեր՝ Հայրապետք Հռոմայ առեալ արձակեցին եպիսկոպոսունս և յայլ գլխաւոր քաղաքս Գաղղիոյ, և 'ի նոցանէ եօթանեքին 'ի միում ժամանակի գոգցես հաստատեցին անդանօր զաթոռս իւրեանց. Սուրբն Սատուրնինոս 'ի Տոլոսա, սուրբն Փրոսիմոս յԱրլէս, սուրբն Պողոս 'ի Նարբոնէ, սուրբն Գայետանոս 'ի Տուրս, սուրբն Մարտիալէս 'ի Լիմոժէս, սուրբն Ասարեմոնէս 'ի Բուրժէս, և սուրբն Դիոնեսիոս 'ի Փարէզ : Նոյն դէպք եղան և 'ի յետագայ դարս երկուս :

Իսկ 'ի դարուն վեցերորդի երանելին Գրիգոր մեծն առաքեաց 'ի միանձանց զոմն՝ անուն Աւգոստինոս, որ զԱնգլիա ողջոյն դարձոյց 'ի Քրիստոս։ Իսկ յեօթներորդ դարուն դարձան 'ի հաւատս Հոլանտացիք։ Յութերորդ դարու Աւէմանք. յիններորդին Բուլղարք, Վանդալք, Լեհք, Դանիք, և Մորավացիք։ Իսկ 'ի մետասաներորդ դարուն Ունգարք, և թագաւորն նոցա Ստեփաննոս։ Նոյնամենեքեան սոքա առհասարակ 'ի քարոզչաց անտի առաքելոց յաթոռոն Հռովմայ։

Իսկ Նուգինէոս Գ՝ առեալ արձակեաց 'ի Նորվեգիա 'ի Կարդինարաց դասէ զանուանեալն Ռէաքիսլուր, որ ապա յաջորդեաց 'ի գահն՝ յորջորջեալ Աւդրիանոս Դ։ Ընդանօր նա առաքելաբար տքնութեամբ ամն եօթն վաստակեցաւ 'ի դարձ անհաւատիցն, և կարգեաց անդ եպիսկոպոսունս։

Իսկ մօտ 'ի սկիզբն երեքտասաներորդի դարուն Ինոսկենտիոս Գ. առաքեաց բազմութիւն քարոզչաց 'ի Մոռա, ուր և դարձուցին զբազումս։ Նա 'ի նմին դարու երանելին Դոմինիկոս՝ բազումք ևս այլք 'ի միանձանց նորա, 'ի նոյն և միանձունք երանելւոյն Փրանկիսկոսի առաքեալք 'ի Հռովմայ, քարոզութեամբք դարձուցին զբազումս յԱլբիկեանց և 'ի Թաղթարաց։ Նա ապա 'ի յաջորդ դարու երանելին Վինկենտիոս Փերարեան մեծապէս յաջողութեամբ քարոզեաց 'ի բազմագոյն սահմանս Նուրոպիոյ։

Այլ առաւել քան զամենայն 'ի վերջին դարս երկուս ողջոյն Ամերիկա, և աշխարհն Հնդկաց, և Սինէացւոց, և Յաբոնացւոց, և արքայութիւնն Շիամայ, և Մալասպարք, և Նեթուխլիա, և այլն, եղեն ասպարէզ և տեսարան քրտնավաստակ տքնութեանց և քարոզութեանց երանելւոյն Փրանկիսկոսի Ռասալերեան

և այլոց ևս անբաւից առաքելաշնորհ քարոզչաց, կէսք յեկեղեցւոյ երիցանց, և կէսք 'ի միանձնական կարգաց կրօնաւորաց. որք և ցայսօր հանապազորդեն անդանօր 'ի քարոզութիւն, 'ի խաչակրութիւն, և 'ի հերձումն ևս արեան 'ի վերայ կաթողիկէ եկեղեցւոյն Քրիստոսի։ Եւ վարժարանս բարեկրօն հրահանգաց հաստատեցին նոքա անուանիս Յ.Մերիկա, Յ.Կաղիա, 'ի Պարակուա, Յ.Սիա, 'ի Քոնքինքինա, և այլն. և կառուցին ևս եկեղեցիս բազումս և կրթարանս եկեղեցականաց։

Եւ այն վարժոյք անուանեալքն « Ընտաքնոյն Ընաքելութեանց » 'ի Հռոմ և 'ի Փարէզ՝ են անջինջ յիշատակարանք աստուածային նախանձու վասն տարածութեան հաւատոյ. որ է կնիք յամենայն իսկ ժամանակս ընդհանրականութեան եկեղեցւոյն ուղղափառաց։

Եւ արդ այս կարճապատում տեսութիւն միայնալ ընդ. աշխարհաբարոյ գործս՝ զորս քեզ թուեցի, իցէ արդեօք բաւական ցուցակութիւն՝ եթէ զայս եկեղեցի միայն յայլ ամենայն ընկերութիւնս քրիստոնէից՝ մարթ իցէ տիրապէս կոչել Կաթողիկէ կամ Ընդհանրական։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ինձ թուի այնչափ ինչ բաւական, մինչ զի (անաչառ ասելով) և ոչ մի այլ ընկերութիւն քրիստոնէից յաղթանակաւ 'ի վեղ գայցէ ընդ ձեզ 'ի մասինդ յայդմիկ։ Այլ արդեօք և յայլ նշանս եկեղեցւոյ՝ զոր ասացեր, հաւաստեացես զնոյն վասն ձերոյ կողմանն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս ամենայն իրք՝ քանզի և միւս այլ նշանն՝ այն է Առաքելականութիւնն, է իսկ արդէն անդիմամարտ հաստատեալ։ Ո՞չ ահա այդ իսկ էր նիւթ առաջին տրամախօսութեանս մերոյ, և անմոռաց կարծեմ՝ ի քէն՝ զոր հաստատութեամբ ցուցի յայնժամ եթէ մի՝ այն զայս Եկեղեցի հիմնարկեաց Քրիստոս, որոյ և հովիւքն առաջինք առաքեալքն սուրբք՝ ի նմանէ առին զառաքելութիւնն. և յառաքելոց անտի եպիսկոպոսունք ընդ տիեզերս հետ զհետէ յաջորդութեամբ, և այնպէս Առաքելական եղև և անուանեցաւ Եկեղեցի Քրիստոսի։ Որպէս՝ զի և այս նշան չորրորդ ոչինչ երբէք՝ ի ճահ պատահեցէ այնոցիկ՝ որք՝ ի սկզբան գոլով անդամք նախկին Եկեղեցւոյն, ապա հերձեալք բաժանեցան՝ ի նմանէ, և կայուցին արտաքոյ ծոցոյն նորա ընկերութիւնս բաժանեալս. ըստ որում յանդգնեցան գործել հիմնադիրքդ նորաձայնութեան ձերոյ Լուտեր և Կալվին։

Եւ արդ առանց միւսանգամ կրկնելոյ զմիանգամ ճառեալսն յաղագս քաջածանօթ բանին, յաւելից քեզ այժմ միայն խորհրդածութիւն իմն պարզ և մեկին։ Ազէ գու հարց միանգամ առ վերջինն՝ ի հովուաց եկեղեցւոյն ուղղափառաց. « Ո՞ւստ ուստեք առեալ է քո զառաքելութիւնդ, ասա՛ ինձ ». անդէն պատասխանի լուիցես՝ ի նմանէ հեզ և հանդարտ, այլ անվեհեր համարձակութեամբ. « Առեալ է իմ զայն » ՝ի Յիսուսէ Քրիստոսէ, և են իմ վաւերական ձեռ» գրութիւնք։ և եպիսկոպոսն իմ կարդեաց զիս » խնամակալ հոգւոյ հաւատացելոց՝ ի տալ ինձ ըզ-

» թեմն վիճակին իմոյ. և պաշտօնն իմ անշուշտ 'ի
» վեր եղանէ մինչև 'ի ժամանակ անդր առաքելոյն
» սրբոյ. քանզի և իմն եպիսկոպոս զսեպհական զիւրն
» առաջնորդութիւն ունի յայլոց եպիսկոպոսաց ան-
» տի, որ հանդիսապէս ձեռն 'ի վերայ եդին նորա, և
» սոքա դարձեալ նոյն օրինակ ձեռնադրեալք 'ի նախ-
» ընթացիչ իւրեանց, և սոքա նոյնպէս յայլոց ո-
» մանց եպիսկոպոսաց, և այսպէս ասա կարգառեալք
» առանց ընդհատութեան 'ի վեր եղանեն մինչև 'ի ժա-
» մանակ անդր առաքելոյ և 'ի Քրիստոս։ Իմ առա-
» քելութիւն ուրեմն է 'ի Յիսուսէ Քրիստոսէ. քան-
» զի և բարւոյ մասին վիճակի հասեալ եմ լինել ան-
» դամ եկեղեցւոյն ուղղափառաց »։

Դարձ ասա և զնոյն հարցումն հարցցես դու և առ
մի ոք 'ի նորաձայն քարոզչացն Մինեվիայի՝ հայրե-
նեայն քոյ « Ուստի կալեալ է քո զառաքելութիւն
քո »։ Պատասխանի տայէ քեզ, եթէ « Ի Սինհո-
» դոսէ անտի մերմէ, որ ետ ինձ զառաքելութիւնս
» զայս ». — « Իսկ այդ Սինհոդոսդ յումմէ՞ ար-
» դեօք առեալ է զիշխանութիւնն զայն ». Կա ան-
շուշտ յայնժամ՝ առանց կարի 'ի վեր եղանելոյ 'ի նախ-
նի ժամանակս, հասցէ փութանակի մինչև 'ի ժամա-
նակ Ռոմերի և Կալվինի։ Ապա եթէ և զայն ինչ
հարցցես նմա, « Իսկ զՌոմերդ և զԿալվինդ զայդ
» ո՞ առաքեաց յուսուցանել, 'ի քարոզել, և 'ի մա-
» տակարարել զխորհուրդս », զինչ արդեօք դտա-
նիցէ նա յայնժամ՝ 'ի պատասխանել։ Ո՞չ ապաքէն
հարկ 'ի վերայ կայցէ նորա ասել քեզ, եթէ « Հեղի-
» նակքդ այդոքիկ և հիմնադիրք նորաձայն վարդա-
» պետութեանն անձամբ անձին մխեցան 'ի սպասա-
» ւորութիւնն և 'ի մատակարարութիւն, ինքեանք յին-

» քեանց առաքեցան և ոչ յայլոց յումեքէ 'ի զոր-
» ծադրութիւն անդր » ։

Այսպա ուրեմն ոչ կարելով նոքա 'ի վեր ելանել մինչև 'ի ժամանակս առաքելոցն, չեն Առաքելականք ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ո՛չ այդպէս ։ Քանզի առաքելականութիւն դա-
ւանութեան մերոյ և ընկերութեանց մերոց հաստա-
տեալ է 'ի վարդապետութիւն անդր հաւատոյ առա-
քելոցն սրբոց ։ Ըստ որում մի ոմն 'ի մերոց առաքե-
լական քարոզչաց, իրաւամբք կնքեաց, ասելով. Մ'էք
երթեալ ապաւինիմք 'ի վարդապետութիւն հաւատոյ
առաքելոցն. « Նմ իսկ մեք ճշմարիտ Առաքելականք
» և ընկերութիւնք մեր անդստին յառաքելոց ի՛ջեալ.
» քանզի 'ի հաւատոյս զհետ երթամք մեք ճշմարտու-
» թեանցն, զոր առաքեալքն քարոզեցին և զոր եկեղե-
» ցի Հռովմայ և ուղղափառաց այլայլեցին » ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այլ ես քեզ 'ի յետագայ տրամախօսութիւնս յայտ
յանդիմանութեամբ ապացուցից, եթէ ոչ 'ի քննու-
թենէ անտի վարդապետութեանց հաւատոյ պարտ է
հաստատել զհեղինակութիւն եկեղեցւոյ և զառաքելու-
թիւն զհովուաց նորա, այլ ընդհակառակն՝ զճշմար-
տութիւն վարդապետութեանց հաւատոյն մարթ է
քննել և դատել 'ի հեղինակութենէ աստի և յառա-
քելութենէ աստի ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Բարուք է, լուսոյք յայնժամ։ Այլ գու, որ ինչ յաղագս վուսոյ նշանին, այս է՝ սրբութեան եկեղեցւոյ է ձառ, պահեցեր մեզ յայլում աւուր տրամախօսութեան։ Նու արդ հաճեսցիս ցուցանել ինձ զօրն և ըզ-ժամանակն, յորում մտադիւրագոյնս դարձայց ես առ քեզ և պայքարեցիլ վասն այդորիկ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Բարուք է։ Յառաջին երկու աւուրս յետագայ եօթնեկիս պարապեալ եմ ես 'ի գործոց պաշտամանս իմոյ. և մտադիւրագոյնս և ես վերստին տեսից զքեզ։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Դ.

ՍՐԲՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եւ երրեակ յատկութիւնք նմա միայնոյ սեպհականք, այս է՝ Անպակասութիւն, Երևելիութիւն, և Անսխալութիւն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

ԱՐԴ ժամ է մեզ այսր պայքարել վասն Սրբութեան, որ մի է՝ի չորից նշանաց Եկեղեցւոյն Քրիստոսի, և զոր դու ընծայես միայնոյ Եկեղեցւոյ Ուղղափառաց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Եւ կարի խիստ քաջ. ոչինչ խուսափեմ հաստատել, եթէ Սրբութիւնն ինքնին գլխաւորն մի է՝ի ճշգրիտ նշանայն եկեղեցւոյ Քրիստոսի. քանզի և զնոյն սահմանեալ տեսանեմք՝ի Հանդանակի անդ առաքելոյն, զոր և դուք Կալվինեանքդ և Լութերեանք միաձայնաբար ընդունիք ընդ մեզ։

Այլ ես զարդիս քեզ, բարեկամ, զայն ինչ յայտ յանդիմանութեամբ խնդրեմ ցուցանել, եթէ Սրբութիւնդ այդ սեպհական է միայն Եկեղեցւոյն ուղղափառաց, և երբէք ոչ պատշաճի հերձելոյն առ 'ի նմանէ նորաձայն ընկերութեանցդ։

Եւ արդ՝ ասեմ, եթէ Եկեղեցի ուղղափառաց է Սուրբ։ Սուրբ է նա անդստին 'ի սկզբնապատճառէն իւրմէ. քանզի որպէս ցուցի քեզ վերագոյնդ, հիմնեցաւ ինքնին 'ի Քրիստոսէ, որ է ինքն սրբութիւն սրբոց։ Սուրբ է նա 'ի վարդապետութեան իւրում, սուրբ 'ի խորհուրդս իւր, սուրբ 'ի բարոյականին իւրում, և 'ի պատուիրանս իւր. որոց նպատակ ոչ այլ ինչ, բայց զմարդիկ 'ի սրբութիւն անդր վերբերել։ Սուրբ է նա և յորդիս իւր, և 'ի բազմութեան անդ անձանց արդարոց՝ ըստ իւրաքանչիւր սերի, յամենայն իսկ 'ի հասակս և յամենայն 'ի վիճակս կենաց, որք և սարծանս անձանց համարին մայր և դայեակ իւրեանց ճանաչել զնա։ Եւ ապա հուսկ ուրեմն՝ յաներկբայաբար հաւաստիս սրբութեան նորա, հաճեցաւ Աստուած 'ի շուք առանձին փառաց նորա նա և բազմապատիկ սքանչելագործ հրաշիւք հաստատել զնա։

Նորաձայն ընկերութիւնքդ երբէք ոչ ժխտեցին՝ 'ի դիմի հարկանել դրժել ինչ մաքրութեան բարոյականին եկեղեցւոյն ուղղափառաց, և ոչ սրբութեան օրինաց նորա, բայց թէ պատիր բանիւք շատխօսութեան և խորամանկ զրպարտութեամբք։

Անդստին 'ի հաստատելոյ քրիստոսական կրօնիցն մեծապէս խնամով 'ի մի մատեան առեալ ժողովեցին ուղղափառք զհրահանգս դեղեցիկ վարուց, կամ թէ ասել զկանոնական սահմանադրութիւնսն, զոր ընդ ժամանակս ժամանակս կարգեցին ժողովք եկեղեցւոյ,

որք մանաւորք և որք ընդհանուրք։ Այս կանոնք ժողովոց բազմամատեանք նպատակ ունին առհասարակ առնուլ համատիւռ տարածել զարքայութիւնն Աստուծոյ, անբակտելի հաստել միութիւն, հաստատել շինութիւն, յորդորել զսէր, ընկալել նուաճել զկիրս անբանաւորս, և զսիւրապատիկ զանկարգութիւնս. լուսափայլել զարդարել զաստուածային պաշտամունս, և շուք փառաց յաւելուլ պաշտօնէիցն Աստուծոյ, ածել ձգել զամենայն իսկ զմարդիկ 'ի մաքրութիւն վարուց և 'ի ճշմարիտ իմաստութիւն։

Օ՛ինչ, աղէ՜ աստ, վեցեակ պատուիրանօք իւրովք եկեղեցի ուղղափառաց զինչ օրինադրէ հաւատացելոց. զինչ տայ ուսուցանել, և դաս զի՞ր ասել մանկանց անդստին 'ի մատաղ տիոց նոցա. սուրբ պահել զաւուրս կիւրակէից, և զաւուրս նուիրականս տօնից 'ի յիշատակ անճառ խորհրդոց փրկութեան մերոյ և հաւատոյս, պաշտել զԱստուած պատուելով զսուրբս նոքա, զորոց և վնահատակութիւնսն ինքնին Աստուած պսակեաց փառօք. պատրաստել զանձինս 'ի սահմանեալ ժամանակս 'ի մարրապէս ընդունելութիւն խորհրդոց եկեղեցւոյ, զոր սահմանեաց Քրիստոս 'ի փրկութիւն հոգւոց մերոց, պահել պահս և ժուժկալել 'ի կերակրոյ. քաւել զմեղս մեռելութեամբք մարմնոյ. զորովք թերևս և անփոյթ առնէր հաւատացեալն՝ եթէ չէր պատուիրան 'ի վերայ եդեալ։

Այլ առ այս դարձեալ զինչ գործէ եկեղեցիս այս սուրբ 'ի ձեռն սրբազան նուագաց իւրոց, և անդուլ սաղմոսերգութեամբքն, և երկայնաձիգ ժամասացութեամբքն՝ տունջենայնովքն և գիշերայնովք, և հանդիսաւոր արարողութեամբքն, և մեծափառ թափորիւքն։

Ա՛ր ինչ օրինադրէ նա և զՀնչիւն զանգակայն և զկոչնակայն, զշքեղութիւն 'ի սպասարկութիւնն Աստուծոյ, զփառաւորութիւն տաճարայն, և զյաճախութիւն հրահանգայն զՀաւատոյ և զվարուց. բայց եթէ առ 'ի զՀոգիս հաւատացելոցն առ Աստուած ինքնին առնուլ մերձեցուցանել, և յերկրաքարշից աստի կորզել և յերկինս 'ի վեր հրաւիրել։

Բայց տեսարան զի՞ր այլ, բա՛ռք, զնորահրաշ սրբութեան կուսական մաքրութեան և զաւետարանական կատարելութեան մեզ 'ի դէմս ածէ այս եկեղեցի. տեսարան՝ որ հաստատեցաւ 'ի նմա յետ առաքելոյն կատարման, և սփռեալ տարածեցաւ բազմադէմ կերպարանաւ։

Բանզի և պաշտօնեայք սեղանոյն սրբութեան, և հովիւք խնամատարք հոգւոց, հրաշացեալք իմն ընդ մեծաշուք վիճակ պաշտաման իւրեանց, ընդ վսեմութիւն կոչմանն իւրեանց, և ուշ 'ի կուրծս արարեալ զկենդանագիր նկար բանին սրբոյ Առաքելապետին, եթէ՝ «Դուք ազգ է.ք ընտիր, քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական». ա. Պետր. 2. մեծապէս առաքինացան կեանս վարել հրեշտակակրօնս, և զոգցես այժմէն հոգիանալ յերկրի մինչև եղեալ 'ի յերկինս։ Բանզի երկուցեալք եթէ գուցէ տաղտապեալք խափանեսցին յաստուածային պաշտամունն 'ի պատճառս ինչ աշխարհական զբաղմանց, կամ թէ հովայեալք ուծացցին ինչ յԱստուծոյ՝ որում՝ ողջընծայք նուիրեցան, եթէ երբէք հարկեսցին 'ի տածել և 'ի մնուցանել և 'ի դաստիարակել զզաւակս, և թարթափել 'ի պէտս առ տնին հոգողութեանց գերդաստանին, բնաւին իսկ՝ ողջոյն հրաժարական ետուն ամուսնական վիճակին մինչև խպառ։

'Այ՝ զինչ ասեմ. և բիւրք ոմանք աւադիկ 'ի հոգ-
եոանդն քրիստոնէից՝ յարուցայ և յիշգայ՝ վառեցան
հոգւով ընդ առաջին ուխտին մշտնջենաւոր ողջախո-
հութեան զուգել և զկամաւորն աղքատութիւն և
զանձնանուէրն հնազանդութիւն. մեկնիլ գնալ 'ի մե-
նարանս և յաւէժաբար փակել զանձինս, կեանս վա-
րել խստամբերս, և զմարմինս 'ի խաչ հանել կարեաք
և ցանկութեամբք հանդերձ՝ խսպառ հրաժարելով
յաշխարհէ: Ո՞ւր այդոքիկ 'ի ձեր ընկերութիւնս:

Ինքնին Հոգին սուրբ՝ որ միշտ գրգայ 'ի սիրեցեալն
իւր եկեղեցի, և որ ինքն միայն յաջողի 'ի գործս հրա-
շալեացս այսոցիկ, ընդ դարս դարս յարոյց հիմնա-
գիրս կարգաց կրօնից ականաւորաց. որ 'ի քաղաքս,
որ յանապատս, որ 'ի մենարանս աճեցին և բազմա-
ցան 'ի թիւ բազմահոյլ անձանց առաքինեաց և հո-
գիայելոց: Նա է մեզ յառաջին դարս եկեղեցւոյն մեծն
Անտոնիոս, և մեծն Բասիլիոս, և մեծն Աւգոստինոս,
երանելին Բենեդիկտոս, և երանելին Մարտինոս: Այս-
և ըստ նոցանէն երանելեացն դասք, Փրանկիսկոս, և
Դոմինիկոս, Բեռնարդոս, և Բրունոն: Նա 'ի վեր-
ջին յերկուս դարս և երանուհին Թերեզիա, վերանո-
րոգիչ խստակրօնն կարմելայ. և երանելին Փրանկիս-
կոս Սալեզեան. և Փրանկիսկոս Պաւղոսեան. նոյն և
հրաշալի ականաւոր աբբայքն Տրապիստեանք, խստամ-
բերութեան խաչին ընդգրկողք: Ա՛ռ սոքօք և հիմնար-
կութիւնք բազմաթիւ վարժոցաց գղերց եկեղեցւոյ, և
բազմահոյլ բնակարանք գեղեցիկ հրահանգաց վարուց
աշխարհականաց. որք 'ի Պաղեստինա և առաւելապէս
Իտալիա յորդեն միշտ և արծարծեն մինչև յաւուրս
ժամանակաց մերոց, հովայելոց զասպաշխարութեան
վիստակրօն կեանս և զեռանդն զնախնեաց միանձանց

եկեղեցւոյ և զբուն զառաջնոյ քրիստոնէից երկնաբաղաքացեաց։

Ճանաչես դու և ոչ զոք յանձանց անտի մաքրակենցաղից, որ բնակեն 'ի վայրն յայնոսիկ սրբութեան. և կամ եթէ և լուիցես և գիտասցես եւս, 'ի պատճառաց ինչ թերևս գրպարտութեանց և դարոնանաց և այլանաց՝ զոր ընդդէմ նոցա արձակեսցին ձեր հոգիւքդ և վերակացուքդ։ Բայց ես՝ որ ճանաչեմ զբազումս 'ի նոցանէ՝ ճշգրտեալ ստուգեմ՝ քեզ, եթէ անձինք նուիրեալք հաւատարիմք իւրեանց աստուածային կոչմանն բազմաթիւք են 'ի յայն դաբիրս սրբութեան և աւետարանական կատարելութեան. և թէ՝ բոլոր բազմաղուղ ընծայեալ են Աստուծոյ զիրեն կամակար սրտից իւրեանց, և զի՝ անուշակ միխիթարութիւնքն որով զմայլին նոքա 'ի գիրկս գգուանաց երկնաւոր վարդապետին իւրեանց՝ անճառելիք են, և են են 'ի նոցանէ՝ որ երևին ոչինչ երկրաբնակք, այլ ճշգրտիւ երկնաբաղաքացիք։

Օ մինչ ես ասացից և վասն անխաբ նշանին սրբութեան եկեղեցւոյ ուղղափառաց. կամ թէ զանստուտ արհաւատչէին անսպառ ընթերակայութեան նորուն իսկ Հոգւոյն սրբոյ, որ յայտ յանդիմանութեամբ յանկուցանէ զսիրտս. զառաւելութիւն պարգևացն ասեմ աստուածայնոց և զերկնաւոր շնորհազարդութեանցն, որ անանջատք են 'ի սպասաւորութեանց պաշտամանց եկեղեցւոյս այսորիկ, և զհեղումն զամենեւին շնորհացն 'ի հանդիսաւոր ինչ աւուրս տօնից՝ յառատաձեռնել անդ Աստուծոյ մարդասիրութեանն՝ անձանց հաւատացելոց, որ միանգամ պատրաստեալ իցեն զանձինս յասպնջականութիւն շնորհացն Հոգւոյն սրբոյ։ «Ա՛ա ընդ ձեզ եղիցի, խոստանայ տէրն, և ընդ ձեզ բնա-

կեցի 'ի յաւիտեան »։ Օծութիւնն զայն զկենդանի և զանուշակ՝ որով ստէպ զգածեալք և հրճուին նոքա որ առաջի կան սուրբ և անմահ պատարագին, կամ աստուածային ժամասացութեանցն, կամ՝ որք արժանապէս հաղորդին շնորհաբաշխ խորհրդոց եկեղեցւոյ։

Քանիցն եռանդաբորբոքս տեսանեմք մեք զնորատիպ պատանիս զգղերս ընծայեալս 'ի Ձեռնադրութիւն սրբութեան. զմատաղերամ մանկտին յընդունել անդ զառաջին հաղորդութիւն սեղանոյն. և զամենայն աւուրս զհաւատացեալ ժողովուրդն 'ի տեսանել զաստուածային պատարագն բորբոքեալ օր ըստ օրէ ճրշմարիտ սիրովն Աստուծոյ։

Իսկ որ լուսաւորագոյն ևս ակներև կայ առաջի ամենեցուն յաղագս սրբութեան եկեղեցւոյն ուղղափառաց, է ինքնին հրաշխյն յայտնի ցուցակութիւն, զոր ստէպ հրաշագործեաց Աստուած ամենակարող աջովն, մանաւանդ 'ի ժամանակս՝ յորում՝ հաւատացելոցն հաւատք տկարացեալ լիցն՝ սէտք էին արծարծելոյ 'ի հրաշից անտի։

Դու ինքնին գիտես իսկ քաջ. քանիցն բիւրապատիկ նշանաք և արուեստիւք կառուցեալ հիմնեցան քրիստոսական կրօնք. և պարգև հրաշագործութեանցն միացեալ ըստ տէրունի խոստմանն՝ ընդ առաքելական քարոզութեան աւետարանին՝ դարձոյց զտիեզերս։ Այս պարգև շնորհայ միշտ լուսափայլեցաւ, մանաւանդ յառաջին դարս անդ. և ոչ անչափ այս գործեցան միշտ՝ ոչ այլ ուրեք՝ բայց յեկեղեցիս ուղղափառաց. որպէս առհասարակ վկայեն հարք սուրբք և վաւերական մատենագիրք։

Իսկ հերձուածողք օձտեալք յուղղափառ եկեղեցւոյ երբէք ոչինչ ժտեցին ունել և պարծել 'ի պար-

գեւս յայսոսիկ։ Նա թէպէտեւ յետ հաստատութեան քարոզութեանն Նուազեցին հրաշք՝ իբրու Նուազ հարկաւորք, սակայն և այնպէս ոչինչ դադարաւ Աստուած երբէք երբէք ցուցանել զաջ իւր. այլ միայն յեկեղեցի ուղղափառաց. յայտ արարեալ՝ եթէ զնա միշտ ծանեաւ իւր եկեղեցի։

Ըստ որում և դէպք եղեն 'ի մետասաներորդ դարու. յորժամ աստ յարեւմուտս 'ի հերձուածոյ իմեմնէ տագնապեցաւ եկեղեցի Ճանաչել զուն և զօրինաւոր յաջորդ զառաքելապետին Պետրոսի. և յայնժամ երանելին Բեռնարդոս 'ի կողմն եղեալ Ճշմարիտ յաջորդին, հաստատեաց զօրինաւորութիւն ընտրութեան նորա բազմադէմ հրաշագործութեամբք։

Իսկ 'ի հնգետասաներորդ դարու երանելին Վինկենտիոս Ֆերարեան զբազմութիւն զանհաւատից և զհերձուածողաց դարձոյց սքանչելագործութեամբք 'ի զանազան դաւառս Եւրոպայ։

Բայց որ առաւել ևս, 'ի վեշտասաներորդ դարու երանելին Ֆրանկիսկոս Ռսաւերեան առաքեալ 'ի Հընդիկս և 'ի Յաբոն, ծագել անդանօր զլոյս աւետարանին, 'ի շրջանդն բազմահոյլ հրաշից իւրոց ելից առհասարակ զլայնատարած սահմանս զաշխարհայն զայնոցիկ։ Նա վկայ անսուտ է բանիս ինքնին Տաւերնիէ 'ի ձերոց անտի հաւաստակցաց. նաև ամենայն պատմագիրք ժամանակացն այնոցիկ 'ի Պատմութեանն Յաբոնեան։

Նա հրաշագործութիւնք այսոքիկ անգուլ փայլակեն յեկեղեցի ուղղափառաց. և են իսկ հետաքննեալք և պայքարեալք և հաստատեալք մեծապէս ճշգրտութեամբ։ Ռանոլ ըստ իշխանութեանն՝ զոր էառ 'ի Ռրիատոսէ այս եկեղեցի՝ ոչ դադարէ ընդ ժամանակս

ժամանակս, որպէս և 'ի դարս անցեալս, դասել յար-
դարոց զոք 'ի դաստ սրբոց, այլ սակայն յետ ճշգրը-
տիւ ստուգելոյ այնչափ իմն անաչառ և այնչափ որի-
նաւոր և այնչափ վաւերական դատաստանական քրն-
նութեամբ՝ զսքանչելին զոր գործեցին նոքա. մինչև
և զձերայինսդ յապուշ հարկանել և տեղի ինչ յեր-
կուանաց չթողուլ։

Այս արդ՝ որպէս տեսանես՝ քանի՞ ինչ իրք աւադիկ
խոնեցան 'ի հաստատել զսրբութիւն Եկեղեցւոյ ուղ-
ղափառաց։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Տեսանեմ այո։ Պարտ էր ուրեմն և որերայն ուղ-
ղափառաց յիւրաքանչիւր կարգի՝ լինել սուրբս ըստ
սրբութեան եկեղեցւոյն իւրեանց, յոր և վարդապետին
'ի նմանէ զոր ամենայն։

Այլ մեք անկարգութիւնս քանիցն տեսանեմք 'ի
նոսա, քանի՞ սանձարձակ կեանս, և քանիցն դայ-
թակղութիւնս։

Իսկ ապա և մեր Եկեղեցիք՝ նորաձայն անուա-
նեալքդ մարթին պարծիլ ունել ինչ սրբութիւն։ Ո՞եր
հաւիւք և վերակացուք անդուլ հրահանգեն զմեզ. քա-
ղոքութիւնս գեղեցիկս քարոզեն մեզ, և առաջնորդեն
մեզ 'ի բարին։ Այս այսոսիկ՝ է տեսանել 'ի հաւատա-
կիցս մեր արս բազումս բարեգեացս և բարեկրօնս։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ո՞ի երբէք զարմացիս, թէպէտ և եկեղեցւոյ ը-
նութիւն սուրբ իցէ, եթէ գտանիցին 'ի նմա և խեղա-

բարոյք և մոլորաշաւիղք, և այն՝ բազմաթիւք։ Ինքնին Տէրն բազում անգամ նախաձայն աղդեաց մեզ, եթէ՝ «Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»։

Եւ որք միանգամ մարդասիրութեամբն Աստուծոյ ծնան 'ի ծոց եկեղեցւոյ ուղղափառաց՝ զգրաւականն այսր ունին զփրկութեանն իւրեանց, այլ սակայն երբէք ոչ հասցեն այնմ, եթէ չկցեն կատարեալք։ Քանզի և քաջ իսկ ունին նոքա մարտ դնել կռուել ընդ կիրս կարեաց և ցանկութեանց. և եթէ յաղթել ոչ յաջողեսցին, յանցաւորք առաւել գտանիցին քան զայնոսիկ՝ որ ոչն հանդիպեցան այնմ շնորհի, նաև առաւել վատթարք և առաւել խստասիրտք եղիցին նոքա քան զայն՝ որում՝ չվիճակեցաւ ծնանել 'ի ծոց ճշմարիտ եկեղեցւոյ։

Եւ արդ դու և վասն անձին քոյ զգոյշ կաց, յորժամ յաւուր միում՝ վիճակեսցի քեզ մտանել 'ի ծոց եկեղեցւոյն ուղղափառաց. քանզի պարտս նոր յայնժամ զանձամբ առցես՝ նորոգատուր կենաց բարեպաշտութեան, առաւելագունի աստուածասպաշտութեան պատկառ կալ, և ճշգրիտ ևս հաւատարմութեամբ կատարել զպարտս քո։ Իսկ անբաժ յայսմանէ՝ ոչ յաջողեսցի քեզ ուղղափառիդ՝ ոչ սրբութիւն և ոչ փրկութիւն։

Բայց աղէ մեք առ վայր մի 'ի քնին առցուք և զեկեղեցիս նորաձայնութեան ձերոյ, որ պարծին վերանորոգիչ լինել եկեղեցւոյն Քրիստոսի. ըստ հաւատոյն, ըստ սրբութեան, ըստ արարողութեանցն, այլոքն հանդերձ։ Բարէ, քանիցն գտցուք մեք իրս իմն հակառակամարտս և դժոխամբերս։ Մեք ոմանք իցեն հիմնադիրքն. մեր իցէ վարդապետութիւնն հաւատոց. որպիսի՞ սրբութիւնն, որպիսի՞ ինչ իցէ կառավարութիւնն։

Ա. Եւ նախ առաջին, ոյք ունիք իսկն հիմնադիրքդ։ Ընդուշտ ասեմ քեզ բարեկամ. չեն ինձ միտք ոտնհարութեամբ խայտառակել զնոսա. այլ քաջ իսկ տեսանես դու զիս ստիպեալ 'ի հարկէ՝ ակներև աչաց քոց ընծայել իրս լմն և գնացս գժոխալուրս և անասելիս։ Ի նոցուն իսկ 'ի մատեանս ընթերցեալ է իմ գայնոսիկ և 'ի նոցունց քաղեմ. և կամ թէ 'ի գրոց նոցուն իսկ աշակերտացն և արբանեկաց։

Առաջին հիմնադիրն եկաց ինքնին Լութերոս. բայց շշուկ քանիցն հարաւ աշխարհի յանձնապաստան գոռոզութեան նորա։ Զէ այս շատ։ Որ շուինդն անհընարին հարաւ միանգամայն և անժուժկալ հեշտասուութեան նորա։ Լութերոս 'ի գիրս ինչ ընդդէմ Հենրիկոսի Ը. արքային Անգղլիոյ յաւակնեցաւ ասել նոր և անլուր ամբարհաւաճութեամբ, եթէ թագաւորք, և քահանայապետք Հռովմայ չեն արժանի խոնարհել լուծանել զխրատս կոշկաց նորա։

Իսկ 'ի թղթի իւրում պատասխանի տուեալ առ Կոքլէոս. գործք. Լութեր. հատ. 2. « Օրմանցար » թերևս, ասէ, յասել իմում, եթէ մարդ արդարա» նայ միայն հաւատով։ Այլ թէ երբէք ոք 'ի կու» սակցայն Հռովմայ գայթակղեսցի ընդ բանս, ասեմ՝ » եթէ կուսակիցդ այդ և էշ՝ են 'ի մի կարգ։ Մի » միայն պատճառն՝ զոր կայ ինձ ասել վասն բանիս, » այս է. ես այսպէս կամիմ և այսպէս պատուիրեմ. » և կամք իմ զտեղի ունին պատճառի »։

Եւ այլուր դարձեալ. 'ի հատ. 2. « Կամիմ ես. » ասէ, լինել ազատ. և ոչ ընդ իշխանութեամբ ու» րուք գրաւեմ ես զանձն իմ. ոչ ժողովոյ, ոչ Հա» մալսարանի ուրուք, և ոչ Քահանայապետի։ Ընդ» դէմ զինիմ. հաստատեմ պնդեմ անվեհեր զայն ա»

» մենայն, որ ինձ երևի ճշմարիտ. եթէ 'ի գրոց հա-
» նեալ իցեմ՝ ես զայն հերձուածողն ուրուք, և եթէ
» 'ի գրոց ուղղափառի։ Եւ չէ ինձ ինչ փոյթ գիտել,
» եթէ դատապարտեալ իցէ այն 'ի ժողովոյ իմոյ և
» կամ ընկալեալ »։

Իսկ ասա մոլեգին յարձակմունք Լուտերի ընդ-
դէմ՝ Հայրապետացն Հռովմայ՝ են արդարև իբրև
զկնելայեղից ոմանց և զդիւաբախից. Զիր հնար ըն-
թեռնուլ կամ՝ ասել՝ զոր ինչ ասայ նա զնոցանէն՝ ա-
ռանց յասցուշ հարկանելոյ և քստմնելոյ. 'ի հատ. 2.
« Եթէ, ասէ, ընդ կախաղանս ամբարձեալ կախին
» գողք և աւազակք, և եթէ պատուհաս կրեն խեռք
» և ստահակք և հերետիկոսք, մեք ապա ընդէր ձեռն
» ոչ մխեցուք ամենայն ուժով մերով 'ի Պարդինարան
» և 'ի Հայրապետն, և առհասարակ յայն ընկեր-
» շակութիւն հռովմէականն Սոդոմայ, որ երբէք չդա-
» դարէ ապականել զեկեղեցի Աստուծոյ։ Ընդէր ոչ
» լուացուք զձեռս մեր յասպաժոյժ արեանց նոցա։
» Աղէ դուք թոյլ տուք առ վայր մի մարտ դնել կր-
» ուել ընդ մահմետականս, յորչափ անուն հայրա-
» պետին Հռովմայ կայ մնայ ընդ երկնաւս »։

» Հռովմայ հայրապետն գայլ է դիւաբախեալ 'ի
» յայսոյն չարութեան։ Պարտ էր միանգամայն ամե-
» նայն քաղաքաց և ամենայն աւանաց յառնել միա-
» բան ընդդէմ նորա։ Այսահարեալ է հայրապետն.
» 'ի դուրս թքանէ և ընդ ունդունն արտաքս ժայթքէ
» զհոյլս դիւաց »։

Այս օրինակ աւադիկ յիշոցիւք բարբառ անվեհեր
արձակէ հիմնադիրդ այն վերանորոգութեան եկեղե-
ցւոյ Քրիստոսի. և 'ի վերայ այսր ամենայնի պանծա-
յուցանէ զանձն, զոչ Առաքեալ յԱստուծոյ։

Բայց որ զանհնարին գայթակղութեան շինդն եհար ընդ ամենայն, եկայ նորա անժուժկալ հեշտասութիւնն։ Ինքնին նա խոստման եղև, եթէ յորժամ յեկեղեցւոջ ուղղափառաց էր նա միանձնութեամբ կրօնաւորեալ 'ի վանս, ճնշէր զմարմին իւր և 'ի խաչ հանէր պահօք և հսկմամբք և աղօթիւք, և խնամով պատկառ կայր պահպանութեան միանձնական ուխտիցն ողջախոհութեան, աղքատութեան, և հնազանդութեան։ Բայց անդէն և անդ իբրև ելիք եթող նա զայն եկեղեցի 'ի պատճառաց ինչ՝ որոց նը պատակ ոչ առաքինութիւնն էր, քան թէ կրիցն անսանձութիւն, յայնժամ միանգամայն ամենայն պահպանութիւնք միանձնական կարգին և առաւել քան զամենայն՝ ժուժկալութիւն ողջախոհութեանն, դժոխքմբերք թուեցան նմա և տաղտկալիք և անտանելիք։

Ոչինչ զամենի հարաւ ինքնին նշաւակել զայն 'ի ճառի ինչ իւրում լի գայթակղութեամբ՝ յաղագս ամուսնութեան պսակին. 'ի հատ. 5. « Ասէ, » յիշխանութեան իմում, ոչ լինել յարական սերէ, » և կամ 'ի համար դասիլ իգականին. այլ սակայն » վարիլ նոքաւ հարկաւոր է ինձ առաւել քան զամ» սին, քան զուտեն, և քան զշնչեն ընդ ունդունս »։

Եւ յաւել ևս ասել 'ի նմին ճառի. « Իսկ թէ եր» բէք օրինաւոր ամուսնին հրաժեշտ տայէ ընծայել » զանձն, մարթի է յառաջ կոչել զաղախինն »։

Այլ, բաբէ, ոչինչ խուսափեայ և զանլուրն ասել բան և հաստատել, լի հայհոյութեամբ 'ի հատ. 5. եթէ « Շունք և պոռնիկ կանայքն առաւել հաճոյք են Աստուծոյ քան զկուսանան՝ որ առնեն զուխտ միանձնութեան 'ի կրօնի. և թէ՝ կին սաղմնաառեալ թէպէտ և յանօրինաւոր ևս յանկողնոյ, մարթի պարծիլ

եթէ գործ իւր հաճոյ իցէ Աստուծոյ. քանզի պտուղ բերէ՝ որ գլխովին գործ է ձեռին Աստուծոյ. և զի՝ նոյն իսկ աստուածահրաման բանքն՝ « Աճեցէք և բազմացարուք » իրաւացուցանեն զսաղմնաւորութիւն նորա։

Եւ արդ նա զայսօրինակ արկեալ հիմունս զվարուց սրբութեան, թէպէտ և ինքն քահանայ թէպէտ և միանձն ուխտաւոր ած՝ իւր 'ի կին զԿատարինէն Պորեան, որ և սա ինքն էր միանձնուհի։ Դաւ ըստ խորհրդոյն Լութերի, յամին 1523, Լէոնարդոսն Կոպպերեան և այլք ևս ութ'ի Կրօնաւորաց յափրշտակեցին 'ի նմին իսկ մեծի աւուր աւագ ուրբաթի միանձնուհիս ինն 'ի նմին մենաստանէ։ Զ՚առ խօսեցաւ յայնժամ՝ Լութեր 'ի ներբող նոցա, և 'ի բանս իւր յաւելեալ ասաց և զանկարծելին զայն. Պատմ. Եկեղ. Դատաղիս Աղեքս. հատ. 6. եթէ « Այն նա » խատեսցին զձեզ. այլ ես ասեմ՝ ձեզ. եղերուք դուք » աւարառուք ոմանք երջանիկք և բարեբաստիկք. որ » պիսի տէրն Քրիստոս եղև 'ի վերայ երկրի, յորժամ » աւար հարեալ կապտեաց յիշխանէն աշխարհի մա » հուամբ իւրով զգէն և զզարդ նորա և առ տարաւ » ընդ իւր 'ի շուք յաղթանակին. զնոյն օրինակ և » դուք նահատակեալ փրկեցէք զհոգիս զհիւսացելոցդ » այդոցիկ կուսանաց 'ի խիստ բանտէ բռնաւոր մարդ » կանն։ Ու այս՝ և յոյժ վայելչագոյնս գործեցէք » զայդ 'ի զատկին աւուրս. ըստ որում և ինքնին » տէրն 'ի նմին ժամանակի առ զաւարն և ազատեաց » զոգիսն 'ի կապարանէ խաւարին բանդի »։

Այլ այսոքիկ բանք Լութերի այնչափ լմն սաստիկ շշուկ և խռով հարին, մինչև Կարլոսի երկրորդ հիմնադրին՝ ոչինչ հայեցեալ և 'ի շահ հասարակաց դա

տին, գրեաց այսպէս. « Բազմապատիկ մոլութեամբք
» վարակեալ է Լութեր. իսկ թէ Աստուծով հոգ
» կալցի դա խնամով սանձ դնել անժուժկալութեան
» իւրում. և պարապեսցի մեծապէս ջանիւ 'ի խլել
» զմոլութիւնսն »:

Բայց սակայն և Կալվին ինքնին երկրորդն այն հիմ-
նադիր նորաձայնութեանդ չէր ինչ ոք 'ի լաւաց: Այլ
և ինքն թերացեալ 'ի բազումն, և վարակեալ յախտս
և ամեհացեալ 'ի վարս: Մաղձ գառնութեան և լեղի
սրտմտութեան և ամբարհաւաճ գոռոզութեան պա-
տեալ սպաշարեալ էր զայրն: Ուստի և Բուկերոսն այն
նախանձախնդիրն Լութերեան ասէր. եթէ՝ իբրև
զրուն կատաղի է Կալվին, և յեռանդանէ սրտին խը-
թանեալ բերի 'ի խածանել:

Իսկ և Մելանթոն միւս այլ աշակերտ Լութերի
ասէր զԿալվինէն. եթէ՝ Այր քինահան է նա և այր
արիւնարբու. զկերպարանս առեալ զարտաքնայարդար
հաւատութեան և գչափու, քողածածուկ առնէ զուս-
նեալն 'ի ներքս զամբարտաւանութիւնն և զանհնարին
անձնասիրութիւնն:

Նա ապաքէն յարդեանց անտի գործոյն Կալվինի
յափշութիւն կրթեցան առհասարակ, յորժամ տեսին՝
զի Միքայէլ Սերվետոս 'ի մահ դատապարտեցաւ այ-
րիլ կենդանւոյն 'ի հրամանէն Կալվինի 'ի պատճառս
խնդրոյ հաւատոյ: Զանգի այր իւրաքանչիւր զհետ
կրթեալ յայնժամ սկզբանց վարդապետութեան Կալ-
վինի, պարտ անձին համարէր զկանոն հաւատոյն իւ-
րոյ գտանել 'ի գրոց սրբոց, և մեկնել իմանալ ըստ
առանձին սեպհական լուսաւորութեանն: Ուստի և
ինքնին Կալվին չէր իշխան իբրև յանցաւոր դատա-
պարտ առնել զՍերվետոս, որ ասաց անվնիր՝ եթէ

ինքն 'ի գիրս սուրբս ոչ գտանէ գերբողութիւն աստուածային անձանց։

Իսկ և Օրինդիոս, որ երիւք ամաւք յետոյ քան զԼութեր սկսաւ քարոզել, զհետ չոքաւ վարդապետին իւրոյ. և թէպէտև ինքն քահանայ՝ անդ 'ի վիճակ աշխարհական և ամուսնացաւ։ Խոստովան եղև ինքնին անկեղծութեամբ զկիրս զանժուժկալութեանն. և ոչ ևս զայն ժխտեայ՝ եթէ անուանարկ գտաւ ինքն։ «Օտապ ցանկութեան մարմնոյն, ասէ, որ ընդ մեզ » մարտ սաստիկ եղ, ժխտել չկարեմք. որով և անուա» նարկ գտաք մեք առաջի եկեղեցեայ»։ Այս էր Օրինդիոս թոյլ 'ի սկզբունս իւր. քանզի և ասէր իսկ՝ եթէ և 'ի հեժանոսայ որ այր բարեգործեայ և բարեպարիշտ է ինքնին քրիստոնեայ, թէպէտ և գլխովին անծանօթ և անլուր լեալ անուանն Քրիստոսի։

Եւ Կարողոս Ստագիոս արքեպիսկոպոս Վիրգէմպէրկայ և մի յականաւոր աշակերտացն Լութերի՝ ած իւր կին և ամուսնացաւ հրապարակաւ. և ժողովեցան ևս Լութերականք յայնժամ յաստուածային պաշտաման հոչակաւ կատարել զտօն ամուսնութեան նորա։ Իսկ Մելանթոն յաշակերտս Լութերի այր բնութեամբ համբոյր և չափաւոր՝ քաջիկ ծանուցեալ էր զՍտագիոս. և աւասիկ քեզ զոր գրեայ ինքնին Մելանթոն վասն նորա 'ի թղթի իւրում՝ առ Փրետերիկոս Միլդոն։

» Այր, ասէ, Ստագիոս այր վայրագ, այր վայրե» նամիտ, անբաժ 'ի դպրութենէ, անմասն 'ի հա» սարակայ ուշիմութենէ, անճաշակ ոչ միայն յի» մաստից աստուածային ինչ ոգւոյ, այլ և ոչ գիտայ » նա երբէք 'ի գործ վարել ինչ մի 'ի պարտուց մարդ» կային քաղաքավարութեան։ Այս նշանս իմն յայտ»

» նիս էր տեսանել 'ի նմա զամբարշտութեան. և էր
» ամենայն վարդապետութիւն նորա հրէական և խոտ-
» վայրոյզ։ Պատասարտ առնէր միանգամայն զամե-
» նայն իսկ օրէնս եդեալս յարտաքնոյ. կամէր՝ զի
» դատաստանք վճռեսցին ըստ օրինացն Մովսիսի,
» զի ոչ ճանաչէր նա զգինչութիւն զքրիստոնէական
» ազատութեան։ Յանձին կալաւ զձախողակ վարդա-
» պետութիւն զԿրինակնունքացն անդէն վաղվաղակի,
» յորժամ՝ Սիկոդոս Բորէ՝ սկսաւ տարածել զայն 'ի
» Գերմանիա։ Եւ ահա յոգնամիւք 'ի Գերմանա-
» ցւոց երաշխաւորք են ճշմարտութեան բանիցս »։
Օ՝այս այսպէս Մելանքթոն։

Բայց քեզ աւասիկ և այլ ոմն Ուսքեալ և քարոզ նորաձայնութեան ձերոյ։ Սա ինքն է Բեզա գլխաւոր աշակերտ Կալվինի, և եկայ ինքն յաջորդ նորա 'ի Ժինէվրա։ Ունիմք զտորա քերթածս ինչ, որ զանցա-նեն քան զչափ խայտառակութեանց զանմաքուր քեր-թածայն զՈվիդիոսի և զԿատուղոսի. և կոչէր նա զքերթածս իւր զայս « Նրիտասարդական » ոմանս։ Սա յետ վաճառելոյ զժառանգաւորութիւնս իւր զե-կեղեցականս, փախեաւ ապաւինեցաւ 'ի Ժինէվրա հանդերձ իւրով նորընծայ հարսամբն՝ որ էր աղջիկ ամուսնացեալ. զորոյ և զհոչակն եհար նա 'ի քեր-թածս իւր։

Բ. Եւ արդ եթէ այսպիսիք ոմանք կացին հիմնա-դիրք նորաբուսիկ եկեղեցւոյդ, և որպիսի՞ ապա եկայ և վարդապետութիւն նոցա։ Ահա փոխանակ նորո-գելոյ զեկեղեցի Քրիստոսի և առաջնորդելոյ 'ի սրբու-թիւն անդր, միանգամայն տապալեալ կործանէ և զա-մենայն հիմունս ընդբութեան։

Լութեր և Կալվին և առհասարակ աշակերտք նո-

ցա և արբանեակք անդտին 'ի սկզբանէ հերձանելոյն յեկեղեցւոյ ուղղափառաց, հիմն զայս եդին քարոզութեան իւրեանց, եթէ՝ Յետ սկզբնական մեղայ չինայ ինչ ազատութիւն 'ի մարդումս. և այսպէս զազատութիւնն 'ի միջոյ բարձեալ, չինայ այնուհետև և ոչ արդիւնք ինչ և ոչ սրբութիւն. ուստի և մարդ ինքնակրաւ մատն լինի այնուհետև միանգամայն ամենայն յանցաւորութեանց և քարուականաց, և չգոն այնուհետև իրաւունք դատապարտ առնելոյ զմարդ իբրև յանցաւոր։

Լուսեր ինքնին առ 'ի զօրաւորագոյն ևս տպացուցանել զայս, արձանագրեաց գիրս ինչ. և զմտաւ ածեալ՝ մակագրութիւն ևս հնարեաց նմա նոր. զի ոչ եդ զառաջնորդականն և զհասարակացն՝ Յաղագս ազատ Ընձնիշխանութեան, այլ՝ Յաղագս գերի Ընձնիշխանութեան. Յաղագս ծառայ Ընձնիշխանութեան։ Նա ասաց, եթէ՝ ազատ անձնիշխանութիւնն 'ի մարդումս է լոկ անուն անգոյ. և թէ ամենայն դէպք որ գիպին, և ամենայն գործք՝ որ գործին յարարածոյն, է գործ գլխովին բացարձակ և անհրաժեշտ հարկի։

Իսկ և անդուստ Պաւլին անդուլութեամբ քարոզէր և հաստատէր, եթէ՝ Պատուիրանք Ստուծոյ են անհնարինք։ Նա ասէր իսկ յայտնապէս 'ի գիրս. Զ. ՅԼ. Ընդառ. զայս, եթէ՝ « Օրէնքն Ստուծոյ ան» հնարինք են՝ հայեցեալ 'ի կարգ անդր զոր եդ ինքնին » Ստուած. և վճիռ նորա ասէ՝ խափան արկանէ » 'ի կատարումն օրինացն ». Ելլ իբրև ընդդէմ եդին նմա զնորուն իսկ զտեառն զասացեալն. « Եթէ կամիս մտանել 'ի կեանս, պահեա զպատուիրանս », տագնապեցաւ. սակայն և ժպրհեցաւ պատասխանի զայս տալ և հայհոյել. « Կեղծաւորեցաւ տէրն ասել

այնպէս » . քանզի գիտէր իսկ քաջ ինքն , եթէ սահ-
մանութիւն սատուիրանացն Աստուծոյ անհնարին էր
'ի մարդկանէ ։

Հանդերձ այսոքիւք ընդ վայր հարկանէր Լութեր
և զանմահութիւն հոգւոյն · 'ի հատ . 2 . « Անմահու-
» թիւն հոգւոյն՝ ասէ՝ է 'ի կարգէ մասանց հաւա-
» տոյ՝ զոր հնարեցին հայրապետք Հռովմայ , և առին
» 'ի վեր հանին զայն յաղբիւսաց հռովմէական սահ-
» մանադրութեանց » ։

Բայց Կալվին վարդապետէր և զայս . գիրք · գ ·
հրահանգ . եթէ՝ 'ի մկրտութեան ընդունին մանկունք
զթողութիւն ամենայն մեղաց իւրեանց , նաև զապաշ-
նեայն ։ Զոր Բեզա աշակերտ իւր յայտնաբանեաց
այսպէս . « Որ միանգամ՝ ասէ՝ յարիւն ողոգի Յի-
» սուսի Քրիստոսի , արձակեալ է այնպիսին յաւի-
» տեան 'ի մեղացն անցելոց և ապագայից » ։ Զոր եթէ
այս այսպէս . որ այնուհետև սանձ կամ թուամբ ընդ-
դէմ կայցէ երբէք մարդկան 'ի չափու ունել զանձինս ,
և ընթադրել զկիրս , և սահման կարգել անօրէնու-
թեանց ։

Զայլ երկոքին միանգամայն հիմնադիրքդ Լութեր
և Կալվին 'ի մի յայն գլխաւոր մասին վարդապետու-
թեան իւրեանց անբակ միաբանեցան ասել , (զոր և աշ-
խարհ ամենայն գիտէ) , եթէ՝ Արդ արդարանայ՝
անձին իւրում գրելով զարդիւնան Յիսուսի Քրիստոսի
տեառն մերոյ՝ առանց ինչ ներքին փոփոխութեան
հոգւոյ իւրոյ և հաւատալով միայն , որ զինչ և իցեն
այնուհետև կեանք և վարք մարդոյն այնորիկ ։ Զոր թէ՝
առ 'ի փրկիլ շատ է հաստատութեամբ հաւատալն . և
փրկի՝ թէպէտ և բաղում ինչ մեղաց պարտական իցէ ։

Իսկ Կալվին յաւել և զայս , եթէ՝ Արդարութիւնն

զոր միանգամ ընկալաւ ոք՝ անկորուստ է։ Եւ արդա-
րև որ ոք միանգամ զաղատութիւնն ուրանայ, ան-
շուշտ այնպիսին ինքնին խարդաւանեցի 'ի մոլորու-
թիւնս յայսոսիկ։ Զամ առից ես 'ի յետագայ հրա-
հանգոյ խսաւ եղծանել զդոսա։ Այլ մեք զիմիրդ
երբէք կարասցուք 'ի սրբութիւն անդր առնուլ սատ-
շաձել զայդոսիկ։

Ահա Լուսեր յառաջադէմ ևս խաղայ յասել անդ
իւրում՝ զանձնէ. 'ի հատ. Ա սկզբանց իւրոց. եթէ՝
« Քաջ իսկ գիտէ ինքն, զի իշխան է սատանայ քա-
» ղոցել զհաւատս, զանձամբ զսպասարկութիւնս առ-
» նուլ զպաշտօնէի Աստուծոյ և զհոգւոյ, և մատա-
» կարարել զխորհուրդս »։ Իսկ և Կալվին մեկնա-
բանեալ զասացեալն առաքելոյն, « Լուծեալ զերկունս
դժոխոց », յանդգնագոյն ևս խաղայ՝ յասելն, եթէ՝
Յիսուս Քրիստոս 'ի վերայ խաչափայտին մինչև 'ի
յուսահատութիւն անդր կրթեցաւ. և առ ժամանակ
մի զտանջանացն զփորձ էառ զդատապարտելոցն։

Եւ արդ զիմիրդ երբէք դժոխալուր այս հայհոյու-
թիւնք զուգահետ երբէք ընթացին ընդ սրբութեան
վարդապետութեան մարդոյ, որ յԱստուծոյ ինքնին
առաքեալ էր 'ի նորոգել զեկեղեցի։

Գ. Բայց ա՛ղէ, տեսցուք և վայր մի. զի՞ր նորոգու-
թիւն երբէք գործեաց Կալվին հիմնադիր նորաձայ-
նութեանդ՝ յորոյ վարժարանին և դու ինքնին դաս-
տիարակեցար 'ի մանկութենէ,

Նորոգեաց այո՛ աւադիկ զարդիւնս գործոց զա-
պաշխարութեան, զժուժկալութեան, զպահոց քա-
ռասնօրէից. և բնաւ իսկ զայն ամենայն որ օգտաս-
տոյց էին մարդոյ 'ի նուաճել զիղձս և զկիրս անբնա-
ւորս. և առնուլ վերածել զնա 'ի սրբութիւն անդր։

Ինչեայ երարձ 'ի միջոյ զկորհրդական խոստովանութիւնն, որ այն ինքն էր դեղ և դարման զօրաւոր 'ի նորոգումն վարուց և կենաց, 'ի գեղեցիկ հարկապահանջութիւն հաւատացելոց 'ի քննել հետազօտել հաւատարմութեամբ իւրաքանչիւր զվիճակ խղճի մտաց, 'ի բաց զնէթս փարատել զհոգւոյն և անդորրանալ, 'ի լինել ամբաստան զմեղայն գործեցելոց՝ առանց 'ի չքմեղս լինելոյ, 'ի զղուել և յասպաշաւել վասն այնոցիկ, և ապաշխարանաքն քաւել, և ըսել և առնուլ խրատս աստուածիմաստս և յորդորս փրկաւէտս զգուշանալ և զգաստութեամբ պարկեշտանալ յապագայս,

Այո՛ նորոգեաց աւադիկ և զբազմագոյնսն 'ի խորհրդոց եկեղեցւոյ. զվերջին թոշակ զկրկութեանն, և զօծումն վերջին. այն որ 'ի հոգեվարսն օժանդակք հոգւոյ են հաւատացելոց անձինն։

Այո՛ նորոգեաց նա և զԿարգն. այն որ շնորհաբաշխութեամբն տայ զօրութիւն պաշտօնէից եկեղեցւոյ Քրիստոսի արժանապէս սրբութեամբ կատարել զաստուածային սպասարկութիւնսն յիւրաքանչիւր կարգի։

'Նորոգեաց նա և զկորհուրդ սրբոյ Պատկին։

'Նորոգել նորոգեաց և զկորհուրդ սրբոյ Հաղորդութեանն. քանզի բարձեալ 'ի միջոյ զկրական ներկայութիւն մարմնոյն Քրիստոսի, ոչինչ այլ եթող անդ 'ի խորհուրդն, բայց պատառ մի հացի և արարողութիւն իմն լոկ և ումպէտ։ Եւ զիարդ ազդեսցէ սատարդ լոկ հացի 'ի հոգին զզօրութիւնն, զոր ազդեն հաւատք 'ի հոգիս ուղղափառաց, որ զճշմարիտ մարմին և զարիւն տեառն Յիսուսի տեսանեն հաւատով և դաւանեն և ճաշակեն ընդ նշանակաւք հացին և գինւոյն։ 'Նորոգեաց նա զայս ամենայն. քանզի երարձ

զայս ամենայն։ Եւ չեղև նմա շատ այս ամենայն։ Ե-
բարձ նա յաստուածային պաշտամանէն և զամենայն
զմեծվայելչութիւն և զշուք փառաց։ Եւ զամենայն
կարգ պաշտօնէից և զհպատակութիւն զառաջնորդաց
նորոգեաց. քանզի եղծ և խանդարեաց։

Օր և սաստիկ կշտամբանաք յերեսս եհար Կալ-
վինի Սվիֆդ՝ Անգղիական հերձուածոյն վարդապետ՝
յիւրում հանձարիմաց պատմութեանն որ անուանեալ
կոչի Տակառ։ Եւ մանեցոյց 'ի նմա Սվիֆդ զյստակ
վարդապետութիւնն Քրիստոսի պարզ և անպաճոյճ
հանդերձի, բայց որ արգոյ իցէ և պատուական. զոր
այր տանուտէր՝ ասէ՝ թողեալ իցէ յաւանդ որդւոց
իւրոց։ Արդ ասէ Սվիֆդ (ըստ Անգղիական իւրոց
սկզբանցն), եթէ՝ յորժամ եկեղեցի ուղղափառաց ա-
ռեալ զանպաճոյճ հանդերձն զայն, եդ յաւել 'ի
նմա արդս և զարդս աւելորդս, յայնժամ Անգղիա-
կան եկեղեցի հոգ յանձին կալաւ բառնալ զայնոսիկ
և մաքրել զհանդերձն 'ի պաճուճանայն մեծապէս
խնամութեամբ. և ճշգրտիւ այնպէս իմն յաջողեցաւ
'ի նոյն, զի և ամենևին ոչ այլայլեաց և խանդարեաց
զգոյութիւն հանդերձին։ Եւ ապա սկսանի նկատել
զԿալվին իբրև այր խելայեղ, որ մոլեգնեալ կատաղու-
թեամբ առ և ընդ ոտն եհար ողջոյն զհանդերձն զայն
արգոյ, և 'ի վերջէ՝ պատառոտեալ համբուն եդ զայն
'ի բազում ծուէնս։

Այլ արդ տեսցուք վայր մի. զոր փոփոխութիւն 'ի
վարս և 'ի գնացս առթեայ գեղեցիկդ այդ նորոգու-
թիւն, որում առաջնորդք գօտէպնդեցան կալ Լու-
թեր և Կալվին։ Լուիցուք մեք զայն ինչ՝ զոր ինքնին
Լութեր խոստովանեցաւ 'ի Քարոզս իւր. 'ի գ. «Տե-
» սանեմք մեք՝ ասէ՝ զի յայժմուս 'ի հնարից չարութեան

» սատանայի գրդեալք, առաւել և ս ադահք են մար-
» դիկ, առաւել անագորոյնք, առաւել ախտաւորք,
» առաւել խեռք և ստահակք, և վատթարագոյնք
» յոյժ քան զոր էին երբեմն ընդ հովուութեամբ
» Հռովմայ »։

Իսկ և Կալվին խոստովան եղև այսպէս. « Ի սա-
» կաւութիւն՝ ասէ՝ յայն ժողով մարդկան, որ բաժա-
» նեցան 'ի կռապաշտութենէ անտի հովուին Հռով-
» մայ, գտանին բազմագոյնք ըստ կեղծաւորութեամբք
» և սատիր խաբէութեամբք։ Կերպարանս ունին ար-
» տաքոյ զմեծապէս նախանձախնդրութեան. այլ թէ
» քաջիկ քննեսցես զնոսա, գտցես զի խորամանկու-
» թեամբք »։ Ասասիկ քեզ սրբութիւնն, զոր ներգոր-
ծեաց նորաձայնութիւնդ Լութերի և Կալվինի. և զոր
խոստովանին ինքնին Լութեր և Կալվին։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Թէպէտ և գտանիցին և ս այդոքիկ բանք 'ի մա-
տեանս իսկ նոցա. սակայն և 'ի նշանաց հրաշալեաց՝
զոր ապա ցուցին նոքա, հաստատեցին զճշմարտու-
թիւն վարդապետութեան վերանորոգութեան ի-
րեանց։ Յուշ ածեմ քեզ՝ զոր գիտես՝ զհամբաւեալն
սքանչելագործութիւն Կալվինի 'ի մեռեալն Պրուլլէ։
Նա զբժշկութիւն Լութերի երդմնեցուցչի 'ի վերայ կը-
նոջն այսահարի 'ի Վիդդէմպերկ։ Ա՛ռ այսոսիկ՝ և
զնախատես մարգարէութիւնն նորոն Լութերի վասն
ապագայից։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Օնոյն և ես ինքն՝ յետ այսչափ փաստաբանութեանցս պատրաստեալ էի խնդրել և զայս ինչ, եթէ արդեօք յետ այսր ամենայնի պարտ իցէ մեզ նաև նըշանս ինչ հրաշից 'ի հաստատութիւն սրբութեան վարդապետութեանն պահանջել Յուսաբելոց այսր հիմնադրացն ձերոց։ Նա ահաւասիկ գտանեմք մեք, զի և նոքա ևս հրաշագործեցին. բայց սակայն յայնց հրաշից, զորոց անդ 'ի հնումն Տերտուղիանոս գրեաց, եթէ գործեցին զնոսն 'ի հերետիկոսաց ոմանք՝ որ առ իւրովքն ժամանակօք։ Ռանզի 'ի գիրս Նախագրութեանց, « Որք 'ի Քրիստոսէ՝ ասէ Տերտուղիանոս՝ որք 'ի Քրիստոսէ առաքեցան, զմեռեալս յարուցանէին. իսկ սոքա աւադիկ զկենդանիս մեռուցանեն »։

Արդ զբան զայս Տերտուղեայ աւադիկ արդեամբք Ճշգրտեաց յանձին և կատարեաց Կալվինդ ձեր։ Ահա պատմագիր վարուց նորա Ճշմարտապատում Պալսէս 'ի գլ. 7. պատմ., եթէ իբրև կամեցաւ Կալվին հաւատարիմ զիւրն գործել վարդապետութիւն նաև 'ի սքանչելագործ հրաշից, բանս եդ ընդ առն միում անուն Պրուլլէ, և պատուէր ևս 'ի վերայ կարգեաց նորա ձևանալ իբրև մեռեալ, և 'ի հրամայել իւրում անդէն վաղվաղակի յառնել 'ի դագաղէն. զի այնպէս զսուտ մեռեալն 'ի կեանս վերակոչելով, երևեսցի ինքն զպարգևն ունել զհրաշից զառաքելութեանն։ Արդ իբրև օրն և ժամն եհաս, և անդուստ ձայն Ճոխաբար արձակեաց յայնժամ Կալվին առ այրն յառնել վաղվաղակի 'ի դագաղէ մեռելութեանն, և հրամայէր իբրու զայլ ոմն Քրիստոս, « Ո՛ զարթիր արի եկ

արտաքս », նա ոչ զձայնն լուաւ և ոչ 'ի կայիցն ինչ իւրոց խլրտեցաւ. այնպէս անշարժ և անշշունչ և անյարիր կայր մնայր միշտ 'ի դադարն անդ։ Ապաստաղ մնացին և վայրիկ մի ևս. և ապա զկերծ մեռեալն ըզՊրուլէ գտանէին ճշմարտապէս մեռեալ։ Այս այսպէս ստուգագիր պատմիչն Կալվենի Պաղէս. և արդարայոյց զՏերտուղիանոս, եթէ հերետիկոսք զկենդանիս մեռուցանեն։

Իսկ պատմագիր վարուցն Լութերի, պատմէ՝ եթէ յամին 1545 զկին մի այսահարեալ կամեցաւ Լութեր երդմնեցուցանել յեկեղեցւոջն Վիտէմպերկեայ առաջի բազմամբոխ ժողովրդեան 'ի զնին կացելոյ, իբրու 'ի հաւատիս ճշմարտութեան վարդապետութեան իւրոյ։ Իբրև ժամն եհաս և սկսաւ հանդիսանալ Լութեր, կինն դիւահար արհամարհեալ զզօրութիւն երդմնեցուցման նորա, վազեաց մոլեգին 'ի մերայ 'ի բուն իւր արկանել զնդապէս զփոքն Լութերի, և այնպէս մաղապուր 'ի փախուստ խուճապեցոյց զԼութեր. սակայն 'ի սաստիկ զարհուրանացն անկաւ և նուաղեցաւ Լութեր, մինչև կարծել ամենեցուն՝ թէ եհան զոգի։

Այլ թէ 'ի պարգևէ հրաշիցն վրիպեցան դոքա, արդեաք զպարգև մարգարէութեանն զոր ասացեր, ընկալան հիմնադիրքդ այդոքիկ։ Այդ դու ինքնին ի մնացիս այժմ ճշգրտիս։ Լութերոս աւադիկ մարգարէացաւ ոչ միանգամ, այլ բազում, եթէ անշուշտ ինքն 'ի չիք դարձուսցէ զիմաստութիւն զհռովմին Հռովմայ։ Եւ քանզի վստահ էր յանձն իւր 'ի գլուխս հանել զգործն զայն զմեծ, սովորեցաւ ստէպ ստէպ յաւելնագոյնս յեղյեղել զբան իւր զայն, « Կենդանեաւ » իմով ժանտախտ քո եղէց, ո՛վ Պապդ. իսկ և 'ի » մահուս՝ մահ քո եղէց ես անշուշտ »։ Այս ասէր.

և հաշիւ ևս արարեալ զժամանակաց, համարեցաւ գտանել և զտարին գլխովին վկրծանման Պապին, նաև զաշխարհի առհասարակ. զոր ոմն 'ի նորայոյ անտի ժամանակագիր՝ անուանին այն Ֆիւռիէօ հետապնդեալ ճշգրիտ, սահմանեաց ասպա զտարին 1714։ Ամ սակայն 'ի վերայ տարուոյս այսորիկ անցեալ է աւագիկ աւելի քան զգարու միոյ ժամանակ, և տակաւին կայ մնայ աշխարհ հանդերձ հայրապետաւն Հռովմայ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ամ թողեալ առ այժմ զայդոսիկ, նոքին իսկ եղբդ այդ բարեյաջողք հիմնադրայն մերոյ պանչելիք ոչ զարմացուցին զքեզ. և զիարդ այդ ձեպ ընդ ձեպ յառաջագէմ ընդ ամենայն վայրս բարգաւաճանքդ Լուսերի և Կալվինի և նոյնն աշակերտաց ոչ հրաշալուք թուեցին քեզ. և բնաւ իսկ զտեղի չունիցին դուքա զպանչելագործ արուեստիս և զնախատես մարգարէութեանս։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այլ ոչ բնաւ երբէք։ Ոչ ահա և դու ինքնին հրաշագործութիւն ոչ համարեցիս զբարգաւաճանսն և զճարակել զԱրիոսականութեանն, որ քան զԼուսերականն առաւել սիրուն տարածեցաւ արագ արագ. և ոչ դու դարձեալ 'ի պանչելեաց ինչ մասին դիցես զյառաջատութիւնն զբազմազան այլ զաղանդոցն և զհերձուածոց։ Այլ կամ թէ Մահմետականութիւնն ինքնին գլխովին 'ի մասին յայսմիկ ոչ յաղթանակեաց ամենայնին։

Զեն զարմանք, եթէ զդժուարակիրսն 'ի քրիստո-

սական կրթելոյն 'ի բաց բառնալով, և զանձուկ ճանա-
պարհն կենաց՝ զոր ասաց տէրն՝ ընդարձակելով, և
հրապուրիչ կարեաց մարմնոյն թոյլ առնելով, և ար-
ձակ արձակ միանգամայն զամենայն զդուրս մեռաս-
տանայն բանալով, և վիշտանաց և զաղբայիչ զշահա-
խնդրութիւնն տաճելով, և 'ի նոցուն պառակտելոյն՝
բարեպատեհ ժամ անձանց գտանելով, և ըստ բեր-
մանց ժամանակին՝ բռնութիւն ևս յայտնի ընդ խորա-
մանկ գնացսն խառնելով, չեն զարմանք՝ ասեմ եթէ
Լութեր և Կալվին այնչափ եկամուտս անձանց սա-
գրեցին։

Յորժամ Լութերոս յամին 1539, թոյլ ետ Փի-
լիպպոսի Լանտկրաւեայ Հեսսեան՝ առնուլ կին եր-
կրորդ, և կալաւ նա 'ի միում անդ ժամանակի կանայս
երկուս, քանզի և կենդանի էր առաջինն, յայտնապէս
ասա սերտ կուսակիցս իւր յարդարեաց զնախարարն
զայն զմեծ և զնախամեծն 'ի Սմալքատեան սահմա-
նին։ Իսկ նախարարն առ 'ի զթոյլտուութիւն զայս
հրամանի գտանել 'ի Լութերէ, խոստացաւ նմա միան-
գամայն զամենայն հաստ զեկամտից զվանորէից սահ-
մանին իւրոյ։

Այս զի է քեզ զարմանալ. ոչ զնոյն զայն նախա-
տեսեալ երանելի առաքեալն Պաւղոս՝ գրեաց առ սի-
րելին իւր Տիմոթէոս. բ. Տիմ. 3. եթէ եկեսցէ ժա-
մանակ՝ յորում հերձուածք մեծապէս չարչարեսցին
զեկեղեցի. բայց յառաջագէմ խաղալ դոցա յերս բա-
ղեցեալքն՝ ոչինչ ունիցի ստանալ հաւատոյն Տիմո-
թեայ. « Այլ մարդք չարք, ասէ, յառաջ եկեսցին
» 'ի չար անդր, մոլորեալք և մոլորեցուցանիցին։ Այլ
» դու հաստատուն կաց յոր ուսարդ և հաւատարիմ
» եղեր, գիտես ուստի ուսար »։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Այլ արդ շատ է, տէր, և քաջ է. լուայ հաւանութեամբ և ընդունիմ հաճութեամբ զոր միանգամ ասացեր փաստաբանութեամբ յաղագս չորից նշանաց եկեղեցւոյ Քրիստոսի, յաղագս Միութեանն և Սրբութեանն, Ինդհանրականութեանն և Առաքելականութեանն: Ու այս և յաղագս վարդապետութեան և յաղագս կենաց և վարուց հիմնադրացն նորաձայնից, այլոքն հանդերձ: Ու քաջ իսկ տեսանեմ ես աւադիկ, զի քառեակդ այդ նշանք ճշգրտիչք եկեղեցւոյն Քրիստոսի՝ անհրաժեշտ պատշաճեցան եկեղեցւոյն ուղղափառաց. և ըստ ճշգրտութեան՝ անհաղորդք են այնոցիկ ժողովք նորաձայնիցն:

Բայց ես յիշեմ, զի բաց 'ի քառից նշանացդ՝ աղդ ինձ երբեմն արարեր և յաղագս այլոց ինչ յատկութեանց՝ որ տիրականք են, և իբրու գտանին միայն եկեղեցի ուղղափառաց: Արդ և վասն այդոցիկ պայքարել աղաչեմ:

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Զէ իմ մոռացեալ խօսել քեզ վասն այդոցիկ. բայց զարդիս անցից աղագունիւք, քանզի և հեշտեաւ իմաստասիրեցես դու զայդոսիկ և 'ի յառաջագոյն քեզ ասացելոցս:

Արդ եկեղեցի Քրիստոսի ունի և յատկութիւնս իմն տիրականս, որք թէպէտ և պարզապէս բառիւք ոչ յայտնեցան յերկոսին Հանգանակս քրիստոնական հաւատոյն, այլ սակայն գիւրեաւ որ իմաստասիրեցէ զայդոսիկ 'ի նոսա: Քանզի հարք սուրբք և աստուա-

ծաբանք եկեղեցւոյ յերիս տիրապէս յանգէն զայնոսիկ. այն ինքն է՝ Ընդհանրութիւն, Առաքելութիւն, և Ընտանութիւն։

Ընդհանրութիւն կամ թէ միանջենաւորել եկեղեցւոյ է, որով կայցէ մնասցէ նա անդստին 'ի հիմնարկութենէն անընդհատ մինչև 'ի կատարած աշխարհի։

Առաքելութիւնն է, որով միշտ ծանուցաւ նա, և միշտ մարթ է ճանաչել զնա և ճշգրտիւ տարբերել զնա յայլոց ժողովոց մարդկան, և դիմել յատեան նորա և առնուլ ընդունել զպատգամն նորա։

Իսկ ապա Ընտանութիւն նորա, զի անմարթ է եկեղեցւոյ Քրիստոսի անկանել 'ի մոլորութիւնս ինչ 'ի հաւատոյս։

Այս երրեակ յատկութիւնք պատշաճին եկեղեցւոյն Քրիստոսի. և զապայոյցս նոցա քաջայայտս է գտանել 'ի գիրս սուրբս, նաև յերկոսին ևս հանդանակս։ Քանզի խոստումն անսուտ կնքեաց Քրիստոս առաքեալն՝ եթէ հանապազ կայցէ ընդ նոսա և ընդ յաջորդս նոցա. « Ընդ ձեզ եմ, ասէ, զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի »։ Ընդհանրելի ուրեմն է եկեղեցի։

Նաև շուսաւորագոյնս ասաց տէրն. « Եթէ մեղի » ցէ քեզ եղբայր քո, ասասջիր եկեղեցւոյն. և եթէ » եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթա » նոսն և զմաքսաւոր ». քանզի համախմբութիւն այնպիսի է եկեղեցի, յոր մարթ է ամենեցուն դիմել. է և ատեան պատգամատու, որում պարտ է լսել և հնազանդել։ Այսպա ուրեմն երևելի է նա։

Ա՛ռ այս դարձեալ՝ կամի Աստուած զվերկութիւն մարդկան, որոյ վասն զարիւն իւր եհեղ Քրիստոս։ Այս քանզի արտաքոյ եկեղեցւոյ չկայ փրկութիւն, պարտ

է ուրեմն եկեղեցւոյն Քրիստոսի կաղ մնալ մինչև 'ի կատարած աշխարհի, զի մինչև խապառ յաջողեսցի արդարոյն փրկութեան հասանել: Պարտ է դարձեալ, զի կարող լիցին նորա ճանաչել զայս եկեղեցի, և յայլոց ամենեցուն հերձուածոց ընտրել զնա: Ընդակասելի ուրեմն պարտ է լինել եկեղեցւոյ, միանդամայն և երևելի:

Իսկ Ընտիրութիւն նորա անդրժելի միշտ կայ մնայ, զի յաւիրժաբար է ընդ նմա Քրիստոս, որպէս և խոստացաւ նմա. և զի՝ և նախաձայն վճիռ եհատ, եթէ « Դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն »:

Բայց զերրեակ զայս յատկութիւնս իմաստասիրեսցես դու հիշտեաւ նաև 'ի կրկին Հանգանակսն հաւատոյ: Քանզի սահմանեցան այդ հանգանակք ասել զայն ամենայն հաւատացելոց և յամենայն ժամանակի. և որպէս զի մարթ իցէ ասել միշտ, եթէ « Հաւատամ՝ յեկեղեցի ». պարտ է ուրեմն զի միշտ անպակասելի կացցէ այդ եկեղեցի:

Դարձեալ՝ առ 'ի դաւանել զայս եկեղեցի և կոչել զնա « Կաթողիկէ », պարտ է ճանաչել զնա և գիմել առ նա՝ իբրու որ տարածեալ է ընդ ամենայն երկիր: Ի՞նչ նա ուրեմն երևելի:

Ա՛յլ հուսկ ուրեմն, եթէ և « Սուրբ » պարտ է կոչել զնա և դաւանել և հաւատալ վարդապետութեան նորա, պարտ է ուրեմն և անսխալ լինել նմա:

Ընդ այսուհետև կայ ինձ ցուցանել քեզ ոչ այլ ինչ, բայց՝ եթէ յատկութիւնքդ այդ 'ի դէպ դան միայն եկեղեցւոյն ուղղափառաց, և ոչ ժողովրդ ձերոյ նորաձևութեան: Ապաքէն 'ի յառաջադիր հրահանգդ ապացուցեալ է իմ քեզ, եթէ եկեղեցի ուղղափառաց եկայ մնայ անընդհատ անդստին յառա-

քեզոյ անտի մինչև առ մեզ։ Իսկ յերկրորդում Տրամախոսութեան ցույցի քեզ ճշգրտիւ, եթէ նա է այն՝ զոր հիմնեաց Ինքնին Քրիստոս։ Ընդ եկեղեցի հիմնեալ 'ի Քրիստոսէ ըստ անսուտ խոստմանն կայցէ մնասցէ մինչև 'ի կատարած աշխարհի։ Եկեղեցի ուրեմն ուղղափառաց է անպակասելի։

Նաև միշտ եկաց երևելի. քանզի և միշտ համախմբութիւն կազմեալ կայր 'ի նմանէ. և զի միշտ և զլուսն զոր ծանեաւ իւր. զարձեալ՝ և եպիսկոպոսունս, և հովիւս, և առաջնորդս ըստ կարգի հպատակութեան իւրաքանչիւր։ Ու այս՝ և օրէնս հաստատաց, և պաշտամունս, և արարողութիւնս. և բնաւ իսկ զամենայն՝ որ միանգամ յերևանի կայցուցանէ զընկերութիւնն։

Ցույցի քեզ դարձեալ 'ի խօսել անդ յաղագս կաթողիկէութեանն, եթէ բազմաթիւ առաւել է այս եկեղեցի, և համաստիւ առաւել քան զայլ ամենայն ընկերութիւնս՝ որ հերձեալքն են 'ի նմանէ։ Ու 'ի վերջ՝ եթէ միշտ եղեցի նա երևելի, քանզի հիմնադրեալ է 'ի Քրիստոսէ. և վասն այսորիկ 'ի ծոցի նորա միայն մարթ է սրբութեան հանդիպել, ուստի և վասն այսորիկ մարթ է միշտ ճանաչել զնա և ընտրել։ Իսկ անսխալութիւն նորա՝ որպէս հաւանեցուցի զքեզ՝ անհերկբայաբար կնքեցաւ 'ի աէրունի խոստմանցն. և աստ աւասիկ յանգեցիլ զայս ճշմարտութիւն, լուսաւորագոյն ևս ցուցանելով քեզ 'ի յաջորդ Տրամախոսութիւնդ, եթէ անհնար է ուրեմն ունել զճշմարիտ հաւատս՝ բայց եթէ 'ի ծոցի նորա։

Բայց մեք այժմիկ վայր մի յառաջ մատուցեալ և յընկերութիւնս անդր նորաձևութեանդ ձերոյ, 'ի քնին առցուք՝ եթէ արդեօք ինչ մի 'ի յատկութեանցդ յայդցանէ մարթիցի՞ն զոքա ընծայել անձանց։

Ո՞ստ ուստեք, աղէ ասա, առնուցուն գոքա զան-
պակասութիւն իւրեանց. զի որ հիմնեաց զնոսա՝ չէ
ինքնին Քրիստոս։

Ուրանօր էին ընկերութիւնքդ ձեր յառաջ քան
զ Ս.ութեր և զԱպալլին։ Նա որք ոչն կային չորիւք գա-
լոյ յառաջ, ո՞ որ ժոեսցի երաշխաւոր լինել յասպայս
վասն տեսողութեան գոյա։ Ո՞չ աւադիկ նոյն գէպք
գիպեսցին գոյա, որ ինչ միանգամ՝ և այլոց հերձուա-
ծոց առհասարակ. զորս եկեղեցի ուղղափառաց՝ ի բաց
որոշեաց՝ ի գրկաց իւրոց անդստին՝ ի ծննդենէ նոցա։

Բազմահարուստ ժամանակք անցին՝ ի միջի, և ու-
րանօր էին այսօր Մանիքեցիքդ և Վաղենտինոսք և
Զնոսիկեանք և Բասիլիդեանք և Նարսոկրատեանք
և Ա.րիանոսք և Մակեդոնեանք և Միակամտդա-
ւանք, այլոքն հանդերձ. ուրանօր էին, աղէ ասա։
Ոչն՝ ի միջի, զի՝ ի չնք դարձան. և դարձցին նոյն-
պէս՝ որ միանգամ օտարայեալ՝ ի բուն մօրէն լքին
զանարատ հարսն Քրիստոսի։

Ընդ բազմահոլով ժամանակ հնգետասան դարուց
ընկերութիւնքդ այդ նորաձայնք աներևոյթք էին. զի
և կային իսկ ոչ։ Նա նաև այժմուս չեն նոքա համա-
խմբութիւն մի. և կենդրոնն միութեան չնք նոցա, և
ոչ՝ գլուխ գոյ նոցա երևելի, և ոչ ատեան հաստա-
տուն և անդրդուելի։

Ա.յլ յիշեմ՝ ես, զի մի ոմն՝ ի ձերոյ վերակացուաց
յանհնարս մտեալ համարձակեցաւ ասել և պնդել,
եթէ ընկերութիւնք իւրեանց կային իսկ համբուն յա-
ռաջ քան զ Ս.ութեր և զԱպալլին՝ ՝ի ժողով մի արդա-
րոց արանց, որք առանց ինչ հաղորդելոյ առ արտաքս
՝ի մոլորութիւնս եկեղեցւոյն ուղղափառաց՝ որպէս ա-
սէին նոքա, ՝ի ներքոյ գաւանէին զայն վարդապետու-
թիւն

թիւն, զոր այսօր դաւանին Լութերեանք և Կալվինեանք։

Եւ ոչ ահա գիւտ ինքնահնար և կարկատուն իցէ ենթադրութիւնդ, զոր կցկցեցին նոքա։ Եւ ուստի և զոր հաւատիս երբէք ենթադրութեանդ այդմիկ մարթայան նոքա 'ի ներքս ածել։ Այլ և ոչ հետ մի դուշնաքեայ 'ի բազմամատեան յիշատակարանս եկեղեցական պատմութեան կարացին նոքա գտանել զնորա։

Եւ առ այս դարձեալ՝ եթէ արդարոցդ այդ ոչիկ ժողով արտաքոյ ոչ դաւանէին զիւրեանց վարդապետութիւն, զիա՞րդ այժմ Լութերեանք և Կալվինեանք կարացին գիտել, եթէ այն էր վարդապետութիւն Լութերի և Կալվինի։ Ամենայն հաւատացելոյ անձին պարտ և արժան է կամակար մտադիրութեամբ տալ զդաւանութիւն հաւատոյն իւրոյ՝ զոր դաւանի. ապա ուրեմն զայդ ժողով մարդկան՝ որոց գնայք արտաքին անվիրաբան եկայ ընդ ներքին Ճշմարիտ հաւատոյն իւրեանց, անմարթ է կոչել ժողով արդարոց։

Եւ դարձեալ, պարտ էր ուրեմն ասել, եթէ յայնժամ՝ եկեղեցի Քրիստոսի էր աներևոյթ, էր անհովիւ, չէր 'ի միջի համախմբութիւն ինչ միաբան։ Ոչ էր ուրեմն և եկեղեցի։

Իսկ զերբոդ յատկութիւնդ՝ զԱնսխալութիւնն, և ոչ 'ի միտ անդամ՝ անկանի նորաձայն ընկերութեանցդ՝ ընծայել անձանց։ Քանզի և հիմն այս է սկզբանց նոցա, եթէ՝ Եկեղեցի չէ անսխալ։ Այլ ուրեմն անձամբ զանձանց խոստովան լինին նոքա՝ եթէ չեն անսխալ։

ՆՈՐԱՂԱՆԴԻՆ

Թէպէտ և մատենիւք չափ ընդդէմ՝ բանս եդին այսոցիկ մերքն, սակայն պատասխանի արժանահաս և հաստատուն տալ բանիցդ՝ ինձ թուի անաչառապէս՝ եթէ ոչ երբէք յաջողեցաւ նոցա։

ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Ամէն անսա և վայրիկ մի, քանզի և երրորդն իմ՝ հաւատիւք՝ եթէ եկեղեցի ուղղափառաց է միայն եկեղեցի Քրիստոսի՝ բոլորապտուղ տայէ քեզ հաւանել ճշմարտութեանս այսմիկ։ Քանզի յայտ յանդիմանութեամբ ցուցցէ քեզ, եթէ անհնար է ունել զճշմարիտ հաւատս՝ բայց 'ի ծոցի նորա։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ե·

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Ամբողջութիւն և Սուրբութիւն հաւատոյ, կնիք և սեպհականք միայն եկեղեցւոյ ուղղափառաց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ոգացուցեալ իսկ է իմ քեզ 'ի նախընթաց հրահանգս, եթէ եկեղեցի ուղղափառաց միայնոյն ընդ Հռովմայ է միայն եկեղեցի Քրիստոսի, քանզի նա միայն հիմնեցաւ 'ի Քրիստոսէ, և նորա հովիւք 'ի նմանէ ունին զառաքելութիւն իւրեանց։

Յուցի դարձեալ Ճշգրտիւ, եթէ նա միայն է ընկալուչ քառից նշանացդ, և երից յատկութեանցն, յորոց և Ճանաչի եկեղեցի Քրիստոսի։ Նս դու ինքնին ծանեար զապացոյցս իբրու անհրաժեշտս։ Տայ քեզ այժմ և զերրորդն հաւաստիս, այն է՝ եթէ չէք հնար ունել հաւատս Ճշմարիտս, բայց եթէ յեկեղեցւոջ ուղղափառաց։ Ոչինչ երկարեցից քեզ բանս առ 'ի ցուցանել՝ եթէ հարկաւոր են հաւատք առ 'ի փրկիլ։

Ամն ինչ զգայ մարդ անձին իւրում՝ և ճանաչէ և տրամաբանէ, 'ի նոյն և Աստուած արարիչ նորա պահանջէ 'ի նմանէ երկրպագութիւն և գնութիւն անձին յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ նորա, և 'ի վեր քան զամենայն կամի ազատութեամբ հպատակել հաւատոյ զվիտս իւր։ Գեղեցիկս յոյժ ճշգրտաբանէ երանելին Աւգոստինոս 'ի խօսել անդ իւրում յաղագս իմանալի շինուածոյն շնորհաց։ Յոյսն ինքնին՝ ասէ՝ բարձրացուցանէ զ շինուածն զայն իմանալի. իսկ սէրն կատարեալ գործէ, սակայն հաւատքն է հիմն հաստատութեան նորա։ « Հաւատով հիմնի, յուսովն կանգնի, սիրովն յանգի »։

Օրանեան զայս սկիզբն՝ նաև նորաձայնութեան քարոզիչքդ ձեր, զոր 'ի տրամախօսել մեր անդ յաղագս արդարացուցման մարդոյ յայտ յանդիմանութեամբ ցուցից քեզ, եթէ ոչ միայն հաւատոյ, այլ և հաւատոյ միայնոյ ընծայեն նոքա զայդ։

Արդ այս հաւատ պարտի լինել ամբողջ, և միանգամայն ստոյգ։ Եւ ամբողջ՝ այնչափ իմն, զի այր քրիստոնեայ ծանիցէ և հաւատացէ առհասարակ զամենայն մասունս հաւատոյ, որ միանգամ կարևորք իցեն նմա 'ի փրկութիւն. իսկ ստոյգ այնչափ իմն, զի և զամենայն տարակոյս միանգամայն 'ի բաց քեցիցէ և զամենայն խէթ երկիւղն զնաբանայն. ապա թէ ոչ՝ ոչ ևս իցէ այնուհետև հաւատք, այլ կարծիք։

Եւ արդ յեկեղեցւոջ ուղղափառաց ունին հաւատք զկրկին զայս կնիք զամբողջութեան և զստուգութեան։ Իսկ առ 'ի յուցանել քեզ զայս առաջարկութիւն կարևոր՝ լի և պատարուն, տրամախօսեսցուք այսօր զամբողջութենէն միայն, և յայլ նուագ զստուգութենէ նորա։

Եւ արդ ասեմ, եթէ հաւատք ամբողջ են միայն յեկեղեցւոջ ուղղափառաց։ Իսկ ընդէր արդեօք, քանզի եկեղեցիս այս Ճանաչէ և դաւանի աղբիւրս իմն կրկին գոյութեանցն՝ զոր միանգամ յայտնեաց Աստուած հաւատացելոց. այս են՝ Գիրք սուրբք և միանգամայն Աւանդութիւն։

Եւ Աւանդութիւնս այս, զոր երբէք ոչ ընդունին Լութերեանք և Կալվինեանք, անհրաժեշտ օրինակաւ հարկաւոր է մեզ առ 'ի գտեղին ընդ զգրոց, և խնամուտ լինել բազում ինչ էական Ճշմարտութեանց կարևորաց առ փրկութիւն, զորոց Գիրք սուրբք չասեն ինչ։

Ո՞ երբէք ժխտեցէ, եթէ Գիրք սուրբք բազմագոյն մասամբ ուսուցին մեզ զՃշմարտութիւն, զոր հաճեցաւ Աստուած յայտնել, սակայն չուսուցին մեզ զամենայն։ Անշուշտ, Գիրք են գլխաւոր աղբիւր յայտնութեանցն. այլ չեն միակ. են են Ճշմարտութիւնք՝ զոր տէր մեր Յիսուս Քրիստոս ուսոյց առաքելոցն, որք և ըստ նմանէն հաղորդեցին իւրեանց աշակերտացն, որ ոչն գտանին ուրեք 'ի գիրս։ Այս Ճշմարտութիւնք գանձեալ պահեցան յեկեղեցւոջ Քրիստոսի Յիսուսի յազգէ յազգ և 'ի դարուց 'ի դարս, և ընկալեալ եղեն միշտ իբրև մատունք հաւատոյ։ Այս է գանձ և մթեր վարդապետութեանն փոխանցեալ 'ի մեզ կենդանի բարբառով և ոչ միջնորդաւ գրոց, զոր մեք անուանեմք Աւանդութիւն. այս է՝ Բան Աստուածոյ անգիր։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Բաբէ, և զինչ այդ անուն նոր « Աւանդութիւն ».

բնաւ իսկ նորաշուր է վարդապետութիւնդ, զոր խոսմա այսօր։ Եմ՝ հանապազ լուեալ իսկ էր ի հովուաց մերոյ, եթէ ամենայն իսկ Ճշմարտութիւնք կարեւորք ի փրկութիւն գտանին ի գիրս. և որ ինչ միանգամ արտաքոյ կայ նորա, իբրև գիւտս ոմանս մարգկայինս պարտ է համարել զայնոսիկ։ Ուստի եթէ չծանրասցի քեզ, փաստաբանութիւն Ճշգրիտ ինդրեմ վայր մի տալ վասն Աւանդութեանդ այդորիկ, և յայտ յանդիմանութեամբ ցուցանել զկարեւորութիւն դորա, և տալ Ճանաչել և զնա իբրև Ճշմարտապէս աղբիւր Յայտնութեան։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Աւանդութիւնն՝ զոր ասացի՝ է Բան Աստուծոյ, որ առանց դրոշմելոյ ի գրի, Ձայնիւ միայն բարբառոյ հրատարակեցաւ յառաքելոց անտի սրբոյ, և ի նոցուն աշակերտաց, և այնպէս ապա յաւերժացաւ մնաց յեկեղեցւոջ։

Ապաքէն անտերկուանալի է, զի յամենայն իսկ ի ժամանակս եթէ յառաջ քան զՀաստատութիւն եկեղեցւոյ, և եթէ զկնի, կացին ինչ ինչ մասունք հաւատոյ կարեւորք առ փրկութիւն, որ ոչն գրեցան։

Վայր մի ի քնին առցուք զերրեակ հոլովմունս մեծամեծս զժամանակայ, որ եղեն յաշխարհի. նախ՝ որ անդստին ի ստեղծմանէն ընդ օրինաքն էր բնութեան. երկրորդ՝ որ յետ այնորիկ ընդ օրինաքն Մովսիսի. և երրորդ՝ որ ընդ օրինաք շնորհացն Քրիստոսի։

Ա. ՅԱդամայ անտի մինչև ի Մովսէս կացին ինչ ինչ վարդապետութիւնք հաւատոյ, յորս պարտ էր հաւատալ ի փրկութիւն. ըստ որում են՝ գոյութիւն

Աստուծոյ որ արար զերկին և զերկիր. կարևորութիւն երկիրպագանելոյ նմա և պաշտօն հարկանելոյ, ճշմարտութիւն հանդերձեալ կենացն, և հաւատք հանդերձելոյ դատաստանին, այլովքն հանդերձ։ Բանզի և անշուշտ չգոյին յայնժամ գիրք, ուստի և այս մասունք հաւատոյ ծանօթք էին յաւանդութենէ անտի. այս է՝ ծանօթութեամբ փոխանցեալ դարուց 'ի դարս 'ի սերնդոց անտի առաջին մարդոյն հետզհետէ յորդւոց յորդիս։

Բ. Իսկ ապա յետ Մովսէսի ժողովուրդն ընտրեալ Աստուծոյ դաւանէր զնոյն վարդապետութիւնսն հաւատոյ, թէպէտ և բաղումք 'ի մասանց անտի չէին 'ի Մովսիսէ գրոշմեալք 'ի գիրս, քանզի և համարեալ իսկ էր զայնոսիկ իբրու ճշմարտութիւնս շատ ինչ արդէն ծանուցեալս։ Նա արդ միտ դիր, զի հինգ են թուով գիրք Մովսէսի, Օնտունդքն, և Նշէքն, և Ղևտականք, և Թուք, և Նշկրորդ օրէնքն, որ ճառեն զպատմութիւն ժամանակացն, զթիւ համարոյ ժողովրդեանն Իսրայէլի, և զօրէնսն խստականն. այլ ոչ յառաջեն ճառել և վասն խնդրոյ կրօնի։ Նա թէ յետ Մովսէսի Դաւիթ և մարգարէքն դապ առաւել մեկն և յայտնի խօսեցան վասն այնոցիկ, ապա ուրեմն 'ի Մովսիսէ մինչև ցմարգարէսն ճանապարհ փրկութեան բաց էր առաջի արդարոց և սրբոց արանց հնոյ կտակին. և գիտէին նոքա ուրեմն զմասունս հաւատոյն զկարևորսն 'ի փրկութիւնն. և սակայն և ոչ մի ինչ յայնոյ մասանց դրոշմեալ կայր ուրեք 'ի գիրս։

Գ. Բայց մեք 'ի գլխաւոր մեր նպատակ մատուցեալ, այս է՝ յեկեղեցի շնորհայն Քրիստոսի, անշուշտ գիտեմք՝ զի ոչ միջնորդաւ գրոց սրբոց անդստին 'ի սկզբնէն հաստատեցաւ քրիստոնէութիւնն, և ոչ նո-

վին տարածեցան հաւատք ընդ ամենայն աշխարհ։ Նա է մեկ Աշկրտել զայս 'ի քաջայայտ ասպայուցիչ։ Բան զի 'ի սկզբանէ անտի քարոզութեան աւետարանին ոչ ևս կային զիրք նորոյ կտակարանին. և զրեցան այնոքիկ հետզհետէ և 'ի զանազան տեղիս, և ոչ 'ի մի մարմին ժողովեցան նոքա։ Օրինակ իմն՝ աւետարան սրբոյն Յովհաննու գրեցաւ յառաքելոյն 'ի խոր ծերութեան նորա բազում ժամանակս յետ մահու և յարութեան Տեառն մերոյ։ Թուղթք սրբոյն Պաւղոսի և այլոց առաքելոցն կային 'ի ձեռս նոցա՝ առ որս առաքեցանն։

Եւ անդստին 'ի քարոզութենէ հաւատոյն Քրիստոսի՝ ևս և 'ի հեռաւոր սահմանս աշխարհի, 'ի վեր եղին ընդ իմամարտք. դարձեալ՝ և անհաւատք 'ի լուր բանիցն, նաև հերձուածողք յամառք և կամակորք. ըստ որում և ՅԱՅԹԻՆ՝ օրինակ իմն՝ 'ի ժամանակի անդ առաջին քարոզութեան սրբոյն Պաւղոսի յարիսպադին։ Եւ այլուր դարձեալ՝ ըստ որում վկայեաց սուրբն Յոհաննէս յայտնապէս 'ի Թուղթսն. ուր և սաստիկ կշտամբէ զԴիոտրիփէ. և արգելու ևս՝ մի ինչ հաղորդութիւն առնել ընդ հերձուածողս։

Ընդ սէտք ուրեմն էին անդստին 'ի ժամանակաց անտի առ ձեռն պատրաստ և աներկևան իմն Հրահանգի 'ի հաստատութիւն հաւատոյ նորահաւատ քրիստոնէից, որոշիչ հերձուածոցն և ճշմարտութեան. իսկ այլում՝ որոշիչ հրահանգի անմարթ էր լինել, (որովհետև հերձուածողք թիւրէին և կամակորէին զամենայն գրեալսն, որպէս վկայեաց առաքելապետն. բ. Թղթ.). բայց եթէ աւանդութեան՝ աներկևան ստուգութեամբ, եթէ վարդապետութիւն հաւատոյն իւրեանց յայս ինչ և յայն ինչ խնդիր՝ զարմ հակա-

ռակորդք պայքարին, է անշուշտ այն ինչ՝ զոր ուսան յառաքելոյ անտի կամ թէ 'ի նոցուն աշակերտայ։

Դարձեալ առ այս՝ թէպէտ և գիրք սուրբք լեալ էին անդստին 'ի ժամանակայ անտի, և 'ի մի մարմին ևս ժողովեալ (որ ապա ուրեմն 'ի յետագայ դարս եղ 'ի գլուխ), 'ի վերայ այսր 'ի գրոյ անտի հնոյ և նորոյ կտակին չէր տակաւին քաղեալ մանաւոր և սահմանաւոր բովանդակութիւն ինչ հաւատալեացն 'ի հրահանգ հաւատացելոցն՝ իբրու Քրիստոնէական վարդապետութիւն՝ որ այսօր յածի 'ի ձեռս։ Այլ արդեօք գիրք պատմականք գրեալ բազմագոյն մասամբ յաղագս պատմութեան վարուց Տեառն մերոյ, և զանազան թուղթք առաքելոցն, յորս մասունք վարդապետութեան հաւատոյ չէին 'ի մի հաւաքեալ։ Արդ ո՞ր բաւական էր յայնժամ 'ի լոյս ընծայել զայս բովանդակութիւն Աշխարհիս ամենայն պատգամաց հաւատոյ սփռելոց 'ի գիրս՝ ունել առ ձեռն զլիակատար սահման հաւատոյն։ Դարձեալ՝ թէպէտ և 'ի մի մարմին ժողովեալ էին ամենայն մատեանք գրոց սրբոց, քարոզքն և հրատարակիչք յայնժամ՝ աւետարանին չբնեալք և սփռեալք ընդ ամենայն աշխարհ՝ վարեալք յաստուածային աշխուժից հոգւոյն, ոչինչ դիւրին էր նոցա յամենայն տեղիս ունել ընդ իւրեանս զսրբազանն զայն հաւաքումն գրոցն. և թէ՝ ունէին ևս, ապագ խուժադուժք և բարբարոսք և այլազգիք՝ առ որս քարոզէին, ոչ կարէին ընել և հասկանալ զլեզուն. և թէ և հասկանային ևս՝ անուսմունք և առանց դպրութեան գոլով գոգցես առհասարակ՝ ոչ կարէին ընթեռնուլ։

Այսպա ուրեմն 'ի նախնի դարս անդ առաւել միջնորդաւ աւանդութեան, այս է՝ բարբառոյ ձայնի՝ քան

եթէ զրուածոյ պէտք էին հրահանգաց հաւատացելոց 'ի լսել, 'ի ճանաչել և 'ի դաւանել զմասունս ճշմարտութեան հաւատոյն։ Այս անշուշտ վասն այսորիկ երանելի առաքեալն Պաւղոս գրելով առ Թեսաղոնիկեցիսն. բ. 2. յայտնապէս նշանակէ զայն ինչ՝ զոր պարտէին ուսանել 'ի նմանէ կրկնակի ճանապարհաւ գրով և անգիր. և պատուիրէ ամենայն հաւատարմութեամբ պահել ողջոյն. « Կոչեաց զձեզ Աստուած, ասէ, աւետարանաւն մերով 'ի փրկութիւն։ » Այսուհետև եղարք հաստատուն կացէք, և պինդ » կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք, եթէ » բանիւ, և եթէ թղթով մերով »։

Այլ քեզ առ այս յաւելից և խորհրդածութիւն մի յոյժ կարևոր։ Յետ անցանելոյ առաջին դարուցն եկեղեցւոյ, ամենայն մատեանք իւրաքանչիւր գրոյ սրբոյ 'ի մի մարմին հաւաքեցան և սահմանեցան այնպէս 'ի նոյն կարգ 'ի հրամանէ իշխանութեան եկեղեցւոյ, մինչ զի չէր իսկ մարթ այլ ինչ յաւելուլ 'ի նոսա կամ նուազեցուցանել։ Իսկ յորժամ դէպք լինէին սահմանել որոշել խնդիր մի 'ի վերայ մասանց հաւատոյ, որ յայտնապէս ոչ գտանէին յառաջնում անդ աղբեր յայտնութեանցն, այսինքն՝ 'ի Գիրս, դիմին յայնժամ անվեհեր յերկրորդն՝ այն է Աւանդութիւն։

Ահաւասիկ քեզ և անհրաժեշտ հարկաւորութիւն Աւանդութեանս այսորիկ, զոր յընդհանուրս ծանեաւ ողջոյն եկեղեցի Քրիստոսի անդստին 'ի ժամանակայ անտի առաքելոցն մինչև ցաւուրս մեր։ Այս առ այս երաշխաւոր մեզ կան մատեանք հարց սրբոց, և վկայեն և յայտ յանդիմանութեամբ ևս ցուցանեն մեզ զայս։ Յամենայն իսկ 'ի նուազս յորժամ պայքարք

և խնդիրք յուղեցան 'ի մասին ինչ հաւատոյ, սահմանաւ յայնժամ վճռեաց եկեղեցի՝ ոչ միայն ըստ պատգամի գրոց սրբոց, այլ և՝ Աւանդութեանն. նաև 'ի հաղորդութենէ իւրմէ նզովեալ 'ի բաց որոշեաց զայնոսիկ՝ որ ոչն կամեցան հպատակել սահմանի վճռոյն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Այլ մաքթ ինչ իցէ ձեզ 'ի ներքս մեզ բերել մասն ինչ հաւատոյ, որ ոչն գուցէ 'ի գիրս սուրբս, և որ մեզ ծանօթ իցէ միայն 'ի ձեռն Աւանդութեան։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Եւ կարի իսկ քաջ. յառաջ քեզ բերիցս յայտնապէս զայն ինչ իրս, յորս և ձեր իսկ հովիւքդ և քարոզիչք միաձայնին ընդ մեզ. և ինչ մի ամենևին չուներցին ընդդիմաբանել։

Ա. Հաւատան դոքա աւադիկ ընդ մեզ, եթէ գրեալքն վաւեր է մկրտութիւնն տուեալ տղայոց։ Եւ արդ զիաւրդ հնար իցէ ստոյգ լինել բանիդ, եթէ երախայն այն ինչ ծնեալ, անմասն տակաւին 'ի վարելոյ զլոյս բանին, և անբաժ գլխովին յաղատութենէ, բաւական իցէ ընդունել զթողութիւն սկզբնական մեղայն և զսրբարար շնորհս. և որ գերին է սատանայի, դարձցի և եղիցի որդի Աստուծոյ։

Ոչ աւադիկ խորհուրդ իցէ բանդ այդ՝ անհասանելի մարդկային մտաց։ Արկնակնունքդ ահա՝ անուանեալ հերձուածողք, զհակառակն սնդեցին յայտնապէս. զէն 'ի ձեռս առին զսան աւետարանին, եթէ «Որ հաւատասցէ, ասէ, և մկրտեսցի, կեցցէ»։

Այնպէս լմն ուրեմն է լմաստասիրել 'ի բանէս, եթէ հաւատք ներգործական՝ որում անընդունակք են երա-խայքդ, պատրաստութիւն հարկաւոր իցէ յընդունե-լութիւն մկրտութեան։ Արդ աւադիկ առանց Աւան-դութեան զէթ յերկրայանաց կարգի մնայր այդ մանն հաւատոյ։

Բ. Բառդ Մկրտել, (յն. Վ աբդիզօ) նշանակէ՝ ընկղմել. և ապաքէն Մկրտիչն Յոհաննէս, և ըստ նմանէն առաքեալք, զնորհուրդ զայս կատարէին ըն-կղմամբ յառաջին դարս եկեղեցւոյ. այս է սուզանե-լով 'ի ջուր անդր զմկրտելին։ Իսկ ապա յանցանել հարուստ ժամանակաց փոխեցաւ սովորութիւնն, և առ 'ի մկրտութիւն բաւական համարեցաւ ջուր սակաւ հեղուլ 'ի գլուխ մկրտելոյն, և կոչեցաւ այս « Մկրը-տութիւն հեղմամբ »։

Բայց կրկին այդ արարողութիւնքդ ընկղմամբ և հեղմամբ մեծապէս տարբերեալ են 'ի միմեանց։ Արդ թւ իւիք ստոյգ իցէ, եթէ Աւանդութիւն չէր 'ի միջի, եթէ հեղումն սակաւ ջրոյ 'ի վերայ գլխոյն կատարեսցէ զկարևոր խորհուրդ մկրտութեանն վաւերաբար իբրու զընկղմումն։

Դարձեալ նաև ձեր քարոզիչքդ նորաձայնութեան դաւանին ընդ մեզ, եթէ չեն ինչ պարտականք քրիս-տոնեայք պահել զօրինական պահպանութիւնսն ըզ-Մովսիսեան օրինացն. Օրինակ լմն՝ հրաժարել 'ի մնոյ հեղձուցելոյն կենդանեայ։ Զիրք ուրեք երբէք՝ ոչինչ վարդապետեն մեզ վասն այսոցիկ. նա՝ Գոա-քեալքն սուրբք ընդհակառակն յայտնապէս արգելին ուտել 'ի հեղձուցելոյ. ըստ որում՝ 'ի գործս առաքե-լոց. գլ. 15։ Նա արդ մեք առանց Աւանդութեան ուստի՞ կարասցուք գիտել, եթէ արգելումնդ այդ սահ-

մանեցաւ իբրու տարաղ առ ժամանակ մի տարբերիչ նորածին եկեղեցւոյ՝ որ 'ի հրէիցն հաւատացելոց. և թէ՝ արգելումնդ այդ չունէր սեռել մինչ իսպառ։ Եւ ո՞ որ կարասցէ երբէք սահմանել զժամանակն դաղարելոյ պարտուցն այնոցիկ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ա՛յլ գուցէն արդեաք և այլ ևս մասունք հաւատոյ, զոր մեր նորաձայնութեան քարոզիչք պարտական իցեն ճանաչել և դաւանել իբրու կարևորս ոմանս յամբողջութիւն հաւատոյ. և սակայն ուրեք երբէք 'ի գիրս սուրբս չիցեն գրեալ այդոքիկ։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ի վերջէ պահեցի ես քեզ մասունս երիս գլխաւորս և տիրականս առաւել քան զայլսն՝ գէթ ըստ կարծեացդ նորաղանդիցդ. քանզի են իսկ դոքա հիմն գրութեան նոցա վասն քրիստոսական հաւատոյն։ Իսկ երբեակ այդ մասունք ոչ գտանին գրեալ ուրեք 'ի գիրս. և դոյն այդ աւադիկ մեծ ևս ապացուցանէ՝ եթէ գիրք ուրեմն միայնակ չեն բաւական ևս և ըստ նոցուն սկզբանցն՝ 'ի բովանդակել յինքեան միանգամայն զամենայն մասունս զհաւատոյն։

Եւ ահա քեզ առաջինն. Վարդապետք ուղղափառաց 'ի Ճառել իւրեանց վասն խնդրոյն այնորիկ՝ զոր կոչեն Հիմնական, կնքեն և հաստատեն իբրև գլխաւոր մասն հաւատոյ զայս ինչ, եթէ՝ Հեղինակութեան եկեղեցւոյ միայն է անկ սահմանաւ կանոնել զհաւատս հաւատացելոց վասն ամենայն ճշմարտութեանցն յայտ-

նելոց առ Աստուծոյ. իբրև զի եկեղեցին միայն է թարգման անսխալ և անխաբ խմացուածոյ գրոց սրբոց և Աւանդութեան։ Իսկ նորաձայնութեան քարոզիչքդ ընդ հակառակն պնդեն, եթէ՝ Գրոց միայն է կանոնաւ սահմանել զհաւատս՝ միջնորդաւ քննութեան և հետազօտութեան առն առն 'ի քրիստոնէից ըստ աառանձին լուսոյ բանին դատելով և կնքելով յաղագս Ճշմարիտ խմացուածոյ իւրաքանչիւր բանից գրոց։ Այս է նոցա առաջին և տիրագոյն մասն վարդապետութեան. որովհետև այդ առանձին հետաքննութիւն առն առն իւրաքանչիւր բերէ ընդ իւր միանգամայն զայլ ամենայն վարդապետութիւնս նոցա։

Ոչ լինիմ ձեռնամուխ աստանօր աստուածաբանօրէն հերքել զայս. քանզի և արդէն իսկ վՃարեցաւ այդ յառաջնում՝ անդ Տրամախօսութեան մերում։ Զատ է զարդիս զայն ինչ տալ յուշ ածել, եթէ յորժամ ուղղափառաց վարդապետք 'ի հաստատութիւն այդր հիմնական վարդապետութեան իւրեանց անբաւս իմն յառաջ ածեն վկայութիւնս 'ի գրոց սրբոց, անդուստ նոր աղանդոցդ քարոզիչք տակաւին ոչ կարացին 'ի հաստատութիւն այդմ իւրեանց հիմնական վարդապետութեան՝ և ոչ մի վկայութիւն գտանել 'ի գրոց սրբոց, յոր միայն ապաւինեալքն են։ Ո՞ւր ուրեք 'ի գիրս գրեալ իցէ, եթէ առն առն իւրաքանչիւր մարթ է իւրով դատմամբ սահմանել զհաւատս իւր 'ի փրկութիւն անձին իւրոյ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Զեռն տամ հաւանութեան բանիդ. որովհետև չիշեմ ամենևին լուեալ երբէք 'ի մերոց քարոզչաց՝

ցուցանել զՀիմնական զայս գրութիւն իւրեանց 'ի բանից ինչ գրոց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Որդ ուրեմն մասն վարդապետութեան քիզ աւագիկ յոյժ մեծ և յոյժ կարևոր յառաջին կարգի. զոր ամենայն ոգւով իւրեանց խոստովանին և հռչակեն այդ նորաձայն քարոզիչքդ, և սակայն (ընդդէմ իւրեանց սկզբանց) ոչ կարեն երբէք ցուցանել զայն 'ի գրոց արբոց։

Տաց քեզ այժմ և զերկրորդն, ոչինչ նուազ նախամեծար և կարևոր 'ի խորհրդածել։

Յորժամ Լութեր և Կալվին և Զուինգլիոս հերձան 'ի Հռովմայ և յամենայն եկեղեցեաց ուղղափառաց, գտին նոքա այնուհետև զինքեանս բաժանեալս և հերձեալս 'ի միմեանց յայլ և այլ կարծիս և 'ի բազմադէմ վարդապետութիւնս անմանս միմեանց 'ի բազմաթիւ մասունս հաւատոյ. ուստի ըստ նոցանէն և աշակերտք նոցա բաժանեցան 'ի խումբս խումբս այլ և այլ աղանդոց։ Եւ էր այս անհնարին հերձուած նոցա անհրաժեշտ հետևանք սկզբանց նոցա։

Քանզի յորմէ հետէ ձեռն արկին նոքա սահմանել որոշել զհաւատս իւրեանց ըստ առանձին հետաքննութեան՝ զոր այր իւրաքանչիւր առնէր 'ի վերայ իմացուածոց բանից Գրոց, ինքնին այնուհետև իշխանաբար մեկնէին բացատրէին զգիրս և կանոնեալ սահմանէին զհաւատս այր այր ըստ մտաց և ըստ քմաց իւրեանց. և չունէին ևս նոքա իրաւունս առ միմեանս ածել խոնարհել զկարծիս միոյն 'ի միւսն. զի ինքնիշխանք էին ամենեքեան։

Նա սակայն մեծապէս զզուելիգն այն էր Նոյա միա-
ձայն միախորհուրդ լինել ընդ միմեանս, և իբրու
խումբ մի և մարմին մի գալ միանալ առ 'ի զգէմ
ունել քաջադէպ ելիւք եկեղեցւոյ ուղղափառաց, որ 'ի
գլուխ իւր զՔրիստոսն՝ այնչափ բիւրուք բիւրուց
հաւատացելոց այնպէս մեծամեծ և անբակտելի միա-
ւորութեամբ միակրօն 'ի դիմի կայր Նոյա։

Այլ զինչ գործեցին. դրութիւն իմն նոր նիւթե-
ցին նոքա. այլ հետևանք նորագիւտ դրութեան 'ի
վայր փլուզեալ կործանեցաւ 'ի վերայ Նոյա դղրդմամբ
և գնոսա առ հասարակ ճնշեաց։ Բանզի նստան և հր-
նարեցին նոքա զանազանեալ մասունս ինչ հաւատոյ,
զորս կոչեցին Քրիստեական, իբրու տիրապէս կարևորս
յոյժ 'ի հաւատալ առ 'ի հասանել փրկութեան։
Նոցին 'ի մէջ և այլ մասունս հաւատոյ, զորս և կո-
չեցին Ոչ Քրիստեական, իբրու ոչ նոյնպէս կարևորս,
և յորս մարթ էր լինել այլ և այլ կարծեաց և պայ-
քարաց՝ առանց 'ի վտանգ արկանելոյ զփրկութիւն
հոգւոյ։

Յարեան յայնժամ ընդդէմ վարդապետք ուղղա-
փառաց և 'ի դիմի հարան նորահնար զանազանու-
թեանս այսոիկ. իբրու որ չունէր ինչ հիմն հաստա-
տութեան 'ի վերայ Ճշմարիտ սկզբանց, քանզի (որ-
պէս յայտ յանդիմանութեամբ ցուցաւ յառաջնում՝
մերում Տրամախօսութեան) եկեղեցւոյ միայնոյ է իշ-
խանութիւն կանոնել զհաւատս հաւատացելոց, և ոչ
առանձին հետազօտութեան մարդոյ 'ի գիրս սուրբս։
Զատն այսորիկ յորժամ՝ եկեղեցի վճիռ մի սահմանաւ
'ի գուրս տայ 'ի խնդիր հաւատոյ, անհրաժեշտ պարտք
են հաւատալ վճռոյն. քանզի պարտ է հպատակել
իշխանութեան եկեղեցւոյ։

թէպէտ և իցեն ևս անշուշտ մասունք ինչ հաւատոյ զոր պարտ է ամենայն հաւատացելոց հաւատալ որոշ և յայտնի հաւատով. և իցեն ևս դարձեալ՝ զոր շատ է տպիտաց ոամկին հաւատալ լռելեայն հաւատով. այս է՝ դաւանելով ընդհանրապէս զայն ամենայն զոր միանգամ դաւանի կաթողիկէ եկեղեցի. սակայն որովհետև պարտք են հնազանդել իշխանութեան եկեղեցւոյ, ուստի և անմարթ է յերկուանալ ընդ վարդապետութիւն ինչ հաւատոյ կաթողիկէ եկեղեցւոյ՝ առանց լինելոյ հերետիկոս և առանց վտանգելոյ ըզփրկութիւն հոգւոյն։

Բայց 'ի վեր քան զամենայն յաւէտ լիմն ձգնեցին ուղղափառաց վարդապետք զկողմն նորազանգիցդ անխուսափելի փաստիւ ցուցանելով նոցա՝ եթէ ընդ վայր և յանօգուտս գտին նոքա զզանազանութիւնդ զայդ զմասանց հաւատոյ. քանզի և քնաւ երբէք ոչ կարէին նոքա ձշգրտիւ որոշել սահմանել, ոյք 'ի մասանց այսոր հիմնականք իցեն և ոյք ոչ։

Այլ այսպէս այս նորագիւտ դրութիւն նոցա 'ի մեծապէս տապնապ և յանդերձ կնճիռն առեալ վարմեայ գնոսա։ Ալ որովհետև յոյժ կարևոր էր նոցա բազմաժողով լիմն ընկերութիւն միաձայնութեամբ հաստել յիւրեանս, վասն այսորիկ գրդեալ 'ի շահախնդրութենէ աստի ջանացան ձշգել զթիւ զհիմնականն զայն իւրեանց մասանց հաւատոյ և 'ի նուազն ամփոփել. որպէս զի միաձայնաբար այնպէս խումբ աղանդոյ առաւել բազմաթիւ նոյնահաւատ ցուցցեն յաշխարհի։ Բայց սակայն և վասն նորոն իսկ պատճառի 'ի բազմագոյն ևս յառաջս բաժանեցան ընկերութիւնքն, և առաւել հրէշալիք և առաւել անճոռնիք երևեցան նոքա, 'ի բազմահոյլ կուտակութենէ

անտի կարծեայ կարծեայ, որ առաւել ընդդիմա-
մարտք և տարբերեալ գտան 'ի միմեանց։

Մեծ էր տագնապ նոցա 'ի միոյ կողմանէ, զի ոչ
իշխէին և չէր իսկ մարթ 'ի բաց հանել 'ի խմբէն իւ-
բեանց զ՝ ուղիղս զմեծն զայն հիմնադիր նորաձայ-
նութեան իւրեանց և ընդ նմա զժողով միանդամայն
զ՝ ուղիղսն, որ պնդապէս ունէին և դաւանէին
զհաւատ զկրական ներկայութեան մարմնոյն Քրիստո-
սի 'ի խորհուրդ հաղորդութեան։ Դարձեալ և չէր
մարթ միաբանել ընդ նոսա 'ի կցորդութիւն եկեղե-
ցական զ՝ Խորհրդականն անուանեալ՝ հերձուած, որ
զր ըստ օրէ առաւել ևս ահէր և բազմանայր, (իբրև
զի և մարդկային ոգւոյ առաւել յոյժ հեշտին է ոչ
հաւատալն քան զհաւատալն այսմ՝ անճառելի խոր-
հրդոյ հաւատոյս մերոյ)։ Եւ իբրև այնպէս այս ան-
միաբան և այլահաւատ ընկերութիւնք երթալով եր-
թային և տարաձայնէին 'ի միմեանց, անդուստ և այլ
ընկերութիւնք նորաձայնութեանն զայն յաղն արկեալ
մեծապէս կորանոք ընդ անձինս իւրեանց ոգորէին։

Եւ թէպէտ և 'ի կատարել զհանդէս Ս՝ նթրեայն՝
(որպէս կոչեն նոքա զխորհուրդ հաղորդութեան), միա-
բանէին իմն 'ի գլխաւոր ինչ վարդապետութիւն, իբ-
րտ 'ի մատակարարութիւն անճառահրաշ խորհրդոյ
եկեղեցւոյ և իբրու 'ի սրբազնակատարնշան միաւորու-
թեան հաւատացելոց, 'ի վերայ այսր՝ զինչ քան զայն
միաբանութիւն իցէ երբէք ծաղրելի, յորժամ էր տե-
սանել 'ի համախումբ նստոցս նոցա առընթեր մի-
մեանց 'ի մի և նոյն սեղան և 'ի մի և 'ի նոյն դասա-
ւորութեան՝ կիսոց 'ի նոցանէ հաւատալ առնուլ 'ի
նմին սեղանոյ զմարմին Յիսուսի Քրիստոսի, և կիսոց
առնուլ լոկ զվայրապարտ պատատ մի հացի։

Իսկ և 'ի միւս կողմանէ մեծ ևս էր տագնապն, զի Սոկինեանք խաղաւ քանդէին զՀիմունս քրիստոնէութեան գլխովին, մարտ եղեալ ընդդէմ նոցին իսկ անձառ խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեանն, և մարդեղութեան բանին Աստուծոյ, և յաւիտենականութեան դժոխոց։ Եւ յայս մարտ իւրեանց բուն զօրավիգն ասին իւրեանց գնորագիւտ զանազանութիւն զայն « զ՝Հիմնական մասանց հաւատոյ և զՈչ Հիմնականացն »։ Սոկինեանք ասէին այսպէս. « Կալվինականք պնդեն, եթէ դէթ Հիմնական անուանեալ » մասունքդ հաւատոյ են պարզ և մեկին բացայայտ » տեալ 'ի գիրս սուրբս. պարտ է ուրեմն զհետ բերել՝ » ասէին Սոկինեանք՝ եթէ աստուածութիւն Յիսուսի » Քրիստոսի, և մարդեղութիւն նորա, և աստուա- » ծութիւն Հոգւոյն սրբոյ, և յաւիտենականութիւն » դժոխոց, և որ այլ ևս, չկան մասունք հաւատոյ » Հիմնականք. քանզի՝ թող զայն՝ զի չեն պարզ և մե- » կին բացայայտեալք 'ի գիրս, նաև մեծաց պայքա- » րաց և վիճից 'ի ներքոյ անկան այդ մասունք հա- » ւատոյ »։

Արդ 'ի լսել զայս Կալվինեանց, և այլոց ևս նորաձայնից, պարտ էր նոցա այնուհետև ամբել ողբել զՍոկինեանս. քանզի և էր իսկ ոչա կողմն հզօրայեալ յոյժ, որպէս և այլոց հերձուածոցն, որք յօրայեալ և զօրացեալ էին 'ի բազմութեան իւրեանց և 'ի համբաւն։

Յայս տագնապ տարակուսի անկեալ նոքա, կէսք աՀեցուցին զմիւ մասանց հաւատոյ, երբ անդուստ և կէսք ձեռն արկին նուազեցուցանել զնոյն։ Կաև նորին հիմնադիրք նորաձայնութեանդ Լութեր և Արեան թոն ըստ սէ սպիտութեան ժամանակացն և ըստ շա-

հանդրութեանն պիտոյից փոփոխեցին. իսկ Կալվին այր վայրագ և անողոքելի նաև մասունս բազումս հաւատոյ հիմնականս ընդ թիւ արկանէր։ Իսկ Յանքիոս աշակերտ Զուինկլիոսի ընկալաւ միայն զայն մասունս հաւատոյ՝ որ միանգամ կային 'ի հանգանակի անդ առաքելոց։ Ալաւդիոս քարոզիչ 'ի նորաձայնից չորս միայն 'ի մասանց հաւատոյ հիմնականաց հաշուէր. այս է՝ զարդարացուցումն, զսպասուն սրբոյ, զնորհուրդ հաղորդութեան, և զիշխանութիւն զհայրապետին Հռովմայ։

Իսկ ապա 'ի վերջ միանգամայն ամենայն հերձուածք նորաձայնութեանդ միաբանեցան իբրև 'ի հիմնական վարդապետութիւն՝ ընդդէմ միայն հակառակամարտ կանգնել Հայրապետին Հռովմայ։

Զրդ այժմիկ ոչինչ մանրամասին ձեռնամուխ եղեալ յայսոսիկ առ 'ի ներքս ընծայել զմեծասէս շահ և զյաղթութիւն ուղղափառաց 'ի պատճառս այսչափ աղմկեալ և բազմադունակ տարաձայնութեանց նորաղանդիցդ, դարձայց ես 'ի նպատակ տրամախօսութեանս մերոյ, և ահա փաստաբանեմ օրինակ զայս։ Զառաջինն և մի միակ կարևոր խնդիրն առն նորաղանդի՝ որ ջանայ և ձգնի ըստ իւրոց սկզբանցն սահմանել կանոնել և ստուգել զհաւատ իւր առանձին հետազօտութեամբ իւրով 'ի գիրս, է առ 'ի քաջիկ որոշել ընտրել զհիմնական մասունս հաւատոյ յոչ հիմնականացն. բայց սակայն անհնար է նմա 'ի գլուխ հանել զայս զանազանութիւն միջնորդաւ գրոց։ Զաջայայտ է պատճառն. քանզի գիրք ոչինչ խօսին զայնմանէ։

Ցախ'ուրեք երբէք ոչինչ ազգեն գիրք, եթէ գուցեն մասունք ինչ հաւատոյ հիմնականք, զոր այր այր

'ի հաւատացելոց պարտիցի տիրապէս գիտել և դա-
ւանել 'ի փրկութիւն հոգւոյն. և թէ՝ գուցեն և այլ
մասունք ոչ հիմնականք, որոց հաւատք ոչինչ այն-
պէս կարևորք իցեն առ 'ի փրկութիւն։

Երկրորդ անգամ՝ ոչ ուրեք խեղամուտ առնեն զմեզ՝
յառաջ բերելով ինչ ոմն 'ի Ճշմարտութեանցն յայտ-
նելոց, թէ այդ ահա 'ի մանաւորի իցէ ոմն յերկուց
տեսակաց անտի, հիմնական կամ՝ ոչ հիմնական։ Այլ
ուրեմն այր ոք նորաղանդ չմարթի գնդել, եթէ կայ-
ցէ՞ն 'ի գիրս ամենայն կարևորքն 'ի կանոնել զհաւատս
իւր։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ընդիմամարտելի է Ճշմարտութիւնդ, եթէ կրկին
այդ սկզբունք մերոյն չգտանիցին 'ի գիրս։ Ուստի
և փաստքդ թուի թէ 'ի հիմանց տասալեն զդրութիւն
սկզբանցն։ Յորժամ՝ 'ի միոյ կողմանէ գնդեն՝ եթէ
այն ամենայն որ կարևորն է 'ի սահմանել զհաւատս
առն իւրաքանչիւր, գտանի 'ի գիրս. և 'ի միւս կող-
մանէ՝ առ 'ի սահմանել զհաւատսն ընդունին սկզբ-
բունս երկուս, որ ոչն գտանին 'ի գիրս։

Այլ որ այն իցէ և երրորդ սկիզբն, զոր և մեք ինք-
նին 'ի դաւանելն, չկարիցեմք հաստատել երբէք 'ի բա-
նից սուրբ գրոց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս յոգուած բանի է առաւել ընդհանրական քան
զերկուս առաջինսն. քանզի 'ի դէպ դայ միանգամայն
և նորաղանդից և ուղղափառաց։

Յառաջին դարս եկեղեցւոյ պայքարք մեծամեծք և

գ ժուարինք յուղեցան յաղագս ստուգելոյ և սահմանելոյ զմատեանս Գրոց, եթէ ո՞յք ոմանք 'ի նոցանէ իցեն ճշմարիտ աստուածաշունչք և վաւերականք, և ո՞յք ոչ։ Բազումք 'ի հերձուածողաց առին մուծին բանս և տողս կուսակիցս մոլորութեանց իւրեանց 'ի գրուածս ինչ զոր հրատարակեցին իբրև շարագծածս առաքելոյ, թէպէտ և էին իսկ այնոքիկ գրեալք յայլոյ մատենագրաց։ Եւ ըստմտնեայ ընծայեցան սրբոյն Պաւղոսի թուղթք, որ չէին 'ի նմանէ գրեալք։ Եւ զատամէ մի ոմն 'ի նախնի հարց, եթէ յոլժամ 'ի պաշտօնէից ոք եկեղեցւոյ ըմբռնեցաւ իբրև գործօն բանին, թէպէտ և ոչ 'ի սատարել ինչ մոլորութեան, սակայն և անկաւ 'ի կարգէն։

Արդ յայնժամ Եկեղեցի առ 'ի սահմանել զայս վէճ և պայքար ըստ իշխանութեանն զոր էառ 'ի քրիստոսէ, ընտրեալ որոշեաց զգիրսն, որ 'ի մի մարմին ժողովեալ անուանեցան Գիրք սուրբք և աստուածաշունչք. և կոչեցան Կանոնականք. և մերժեալ հերձեցան այլք իբրև անվաւերք և անկանոնք։

Բայց հիմնադիրքդ նորաձայնութեան իբրև հերձան յեկեղեցւոյն Հռոմայ և ամենայն ուղղափառաց, ոչ ևս պարտականս համարեցան զանձինս 'ի հպատակել իշխանութեան եկեղեցւոյ։ Արդ հարցցուք մեք ցնոսա. իսկ արդ յո՞ր հիման վերայ համարիք դուք հաստատեալ զընտրութիւն զայս զգրոց սրբոյ, և ո՞յք ստուգապէս իցին գիրք կանոնականք և ճշմարտապէս աստուածաշունչք. և մարթ էր մեզ քաջիկ ևս պնդել զայս ինդիր և զհարցումն, եթէ էր նոցա միաբանեալ ընդ միմեանս յայս առաջարկութիւն։ Քանզի ուր կէսք 'ի նոցանէ ընդունին իբրև արդարև աստուածաշունչս զայն ինչ գիրս, այլք 'ի նոցանէն մերժեն զայնոսիկ։

Ընդ պատասխանի եռուն հարցմանս մերում 'ի դաւանութեան անդ հաւատոյ, տպագրեալ 'ի Շա-ռէնդոն յամին 1667. օրինակ զայս. « Դանաչեմք » մեք և դաւանիմք զգիրս զայսոսիկ լինել կանոնս » հաւատոյն մերոյ, ոչ այնչափ վասն ընդունելութեան » և միաբան հաւանութեան եկեղեցւոյ, որչափ վասն » վկայութեան և ներքին ազդեցութեան Հոգւոյն » սրբոյ, որ տայ մեզ որոշել ընտրել զգիրս զայսոսիկ » յայլոց անտի »: Զոգցես զնոյն հրատարակումն նոցա ընթեռնումք և յայլում ևս դաւանութեան հաւատոյ նոցա, որ իբր 'ի նմին ժամանակի տպագրեցաւ 'ի Վիանտրա:

Ընդ քաջայայտ է եթէ գլխովին մատցածինդ այդ ազդեցութիւն ներքին՝ միջնորդ իմն է յոյժ ապիկար և ոչինչ աներկեան 'ի կանոնել զմատունս հաւատոյ: Ձլենիմ ես ժամալաճառ վասն խնդրոյս այսորիկ. քանզի և խօսեալ իսկ է իմ վասն այսորիկ շատ ինչ յառաջնում անդ Տրամախօսութեան մերում՝ որ վասն հաւատոյ: Բայց դառնալով այժմ 'ի խնդիր մեր առաջիկայ, աղէ դու վայրիկ մի զմտաւ ած, եթէ նորա-զանդք ինչ մի երբէք կարացին գտանել 'ի գիրս սուրբս առ 'ի ընտրել ճանաչել զնոսա, ոչք 'ի նոցանէն իցեն ճշմարտիւ աստուածաշունչք և կանոնականք, և ոչք ոչ: Քանզի և արդարև գիրք սուրբք երբէք 'ի խորշս ուրեք երբէք չունին ինչ ցանկ մի կամ ցուցակ մի գրոց կանոնականաց կամ անկանոնից. ուստի և միշտ երերեալք տատանին նորա յայս խնդիր յոյժ մեծ և առաջին կարևոր, մինչև ոչ ապաւինեցին յընդհանուր եկեղեցի որ ճշգրտիւ և անսխալ ընտրութիւն արասցէ գրոցն՝ միայն 'ի ձեռն Աւանդութեան:

Այս ուրեմն յամբողջութիւն հաւատոյն հարկ անհրաժեշտ է յաւելուլ և ունել ընդ գրոց սրբոց և զերկրորդ աղուիւր յայտնութեանցն՝ զԱնդուրթիւն։ Ու փաստաբանութեանս այսմիկ՝ թուի անշուշտ՝ եթէ չիք ինչ հաստատիմն և արժանահաս պատասխանի։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Ամլ որ այն լոյն և օրինակք քաջածանօթք յանցս և 'ի դէպս եկեղեցւոյ, յորս վճռաւ սահմանեալ լոյէ եկեղեցի խնդիրս ինչ էականս զվարդապետութեան հաւատոյ, հիմնեալ ոչ 'ի գիրս սուրբս, այլ պարզապէս միայն Աստուածայ։ Որով և անթերի այնուհետև վարժեսցես՝ եթէ կարևոր ուրեմն լոյէ անհրաժեշտ օրինակաւ և այս երկրորդ աղուիւր յայտնութեանցն Աստուծոյ. և կարձեսցես զերգիծանս բազումս զմերոցն և զայսպանս վասն Աւանդութեանդ՝ զոր համարին իբրև արդարև գիւտ լոկ մարդկային։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Բազում են օրինակք յայս խնդիր յառաջ բերել քեզ, այլ զերկուս միայն 'ի գլխաւորացն ընտրեցից ասել, որ առաւել հոչակաւորք կացին յեկեղեցական պատմութեան։

Ի դարուն երկրորդի երկրայութիւն եղև յաղագս վաւերականութեան մկրտութեանն զոր տային հերետիկոսք։ Այս վէճ և խնդիր դարձաւ եղև 'ի յոյժ կարևորաց եկեղեցւոյ յայնժամ. քանզի 'ի ժամանակին բազմութիւն յոյժ քրիստոնէից ծնելոց 'ի մէջ բազմաթիւ ընկերութեանց հերձելոց 'ի կաթողիկէ եկեղեցւոյ,

խնդրէին դառնալ անդրէն 'ի ծոց եկեղեցւոյ։ Բրդ խնդիր մեծ յուզեցաւ յայնժամ գիտել ճշգրիտ. եթէ սաՀրտ էր արդեօք կրկին մկրտել զՀերձեալն զայնոսիկ և զդարձեալն։ Մ'խաբանեցան առՀասարակ, եթէ սարտ էր կրկին մկրտել զնոսա, եթէ արդեօք Հերետիկոսք 'ի մկրտելն զնոսա այլայլեալ իցեն զձև բանից մկրտութեանն։ Բայլ դժուարութիւն խնդրոյն էր 'ի սահմանել անդ, եթէ զինչ արդեօք սարտ էր գործել եթէ ճշգրտիւ ըստ ձևոյ մկրտութեանն կատարեալ իցէ խորհուրդն 'ի հերետիկոսաց։ Բրդ 'ի պէսպիսութեան այլ և այլ կարծեաց՝ մեծապէս զօրավիգն կրկնանկնութեան եկաց սարաղլուխ այրն այն մեծ և երևելի 'ի ժամանակին. որոյ և դատաստան և կարծիք յինքն առՀասարակ ձգեաց զեկեղեցիս Բիրիկոյ։ Սա ինքն էր սուրբն Կիպրիանոս եպիսկոպոս Կարթագինոյ. Հայրապետ՝ որչափ նախանձախնդիր Հաւատոյ, այնչափ և քաջուս. որ և ապա զկեանս իւր սրակեաց փառաւոր մարտիրոսութեամբ։ Սակայն մնալաստակ լինէին յայնժամ կողմանքն 'ի խնդրել անդ 'ի գիրս սուրբս ինչ մի սահմանաւոր վասն մեծի խնդրոյս. քանզի գիրք սուրբք միայն քարոզեն զանՀրաժեշտ Հարկաւորութիւն մկրտութեան. որպէս և կնքեաց իսկ ինքնին տէրն, եթէ « Որ ոչ է ծնեալ վերստին 'ի » ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն » երկնից »։ Դարձեալ և զձև մկրտութեանն աւանդէ ինքնին տէրն. « Մ'կրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ »։ Իսկ վասն կրկնութեան կամ անկրկնութեան մկրտութեանն՝ որ 'ի հերետիկոսաց, չիք ինչ բան 'ի գիրս անդ։

Բրդ զմեծ զայն խնդիր 'ի ներքոյ արկին և յայնժամ դատաստանի սրբոյն Ստեփաննոսի Հայրապետ-

տին Հռոմայ, որպէս և անյեղլի սովորութիւն էր ընդհանուր եկեղեցւոյ դիմել 'ի գլուխն՝ 'ի մեծամեծ և 'ի դժուարին դէպս։ Յայնժամ սուրբ հայրապետն զօրավիգն իւր առեալ զանյեղլի աւանդութիւնն եկեղեցւոյ 'ի խնդիրս յայս, յայտնապէս վճիռ հրատարակեաց եթէ չէ պարտ կրկնել զմկրտութիւնն տուեալ 'ի հերետիկոսաց, միայն եթէ մատակարարեալ իցէ այն ըստ ձևոյ սահմանելոյն 'ի Քրիստոսէ։ Նա զնոյն վճիռ ընկալաւ կաթողիկէ եկեղեցի և ընդունի ցայսօր. և այնպէս վճար եղև խնդրոյն։

Բայց և խնդիրն այն երևելի Պատկերամարտիցն զայլ օրինակ յուզեցաւ և խաղաղացաւ։ Ա՛յս պայքար բազմաշրջուկ մեծապէս խռովեաց զեկեղեցի, և բռնութիւնս ևս բազմադիմակ գործեաց 'ի նմա։ Կայսերք կրկին Կոստանդնուպօլսի Լէոն Իսաւրիկոս և Կոստանդին Կոպրոնիմոս յարեան կացին պարագլուխք այնոցիկ, որք թէպէտ և հաւանեալ էին եթէ չկք խափան յարգելոյ զսուրբս և բարեխօս ևս կարդալոյ զնոսա յօգնականութիւն, այլ տակայն զպատկերս նոցա և զարձանս չէ պարտ հաւատացելոյ պահել 'ի տաճարս կամ ունել առ իւրեանս, երկուցեալք եթէ 'ի մնասաշտութիւն կռամոլութեան դարձցի բանն։ Նա այսպէս ապա առհասարակ զամենայն արձանս և զպատկերս զսրբոց, նաև զտեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի վայր առեալ կործանեցին և առ ամենուր հարեալ փշրեցին։

Լուր գուժեաց յարևմուտս, և եկեղեցիք արևմտից ընդ Հայրապետին Հռոմայ դատապարտեցին զյանդգնութիւնն և զմեծապէս գայթակղութիւնն։ Իսկ անդուստ և կայսերք սպառնալիս ահագինս գրեցին առ նոսա, և բանակ ևս զօրաց կազմեցին խաղալ ընդդէմ

Հայրապետին։ Եւ յայնժամ ժողովք բազումք գումարեցան եպիսկոպոսաց վասն խնդրոյս, մանաւորք 'ի Հռոմ, 'ի Գաղղիա և յայլ ևս կողմանս արևելից. մինչև 'ի վերջ յետ յիսնամեայ խռովութեանցն քահանայապետ Հռոմայ ժողով ընդհանրական գումարեաց յարևելից և յարևմտից իբրև 'ի վերջ եօթներորդ դարու 'ի Նիկիա Բիւթանացւոց. և եղև այս եօթներորդ ժողով ընդհանուր եկեղեցւոյ։ Պատապարտ արար յայնժամ ժողովն և նզովեաց զմոլորութիւն պատկերամարտիցն, և զյամառեալսն 'ի նոյն եհատ 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ։

Եւ արդ քաջայայտ է, եթէ սատար և պատճառ վճռոյս ընդհանուր եկեղեցւոյ ընդդէմ պատկերամարտից եկաց Աւանդութիւնն միայն և զեղեցիկ սովորութիւնն հասեալ առ նա անդստին յառաքելոյ հետէ։ Քանզի 'ի գիրս սուրբս չկք ինչ բան վասն խնդրոյս, և չէր իսկ մարթ լինել. քանզի զիաւրդ արդեօք մատենագիրք սուրբք առաջին դարուն գրէին վասն խռովայոյզ հերձուածոյն եօթներորդի դարուն. և խընդիրն էր վասն պատկերաց սրբոց ննջեցելոց 'ի յետագայ դարս։

Բայց և քաջայայտ է, եթէ եկեղեցի վասն բազմապատիկ այլ խնդրոց 'ի ժողովս ընդհանուրս և 'ի մասնաւորս միշտ շարժեցաւ տալ զվճիռս իւր գլխաւորաբար 'ի բանից գրոց սրբոց. սակայն և յորժամ պէտք եղեն՝ էառ իւր զօրավիգն զԱւանդութիւնն իբրև երկրորդ աղբիւր աստուածային յայտնութեանցն՝ կարևոր յամբողջութիւն հաւատոյ հաւատացելոց։

Օրինակ իմն՝ 'ի նիւթ ամենասուրբ խորհրդոյ հաղորդութեան պայքարք մեծամեծք յուզեցան ընդ եկեղեցին Յունաց, որ զխմորոնն վարէր՝ ոչ համարելով

յատկապէս հայց զանխմբին, և ընդ եկեղեցի Հռով-մայեցւոց՝ որ միշտ զբաղարջն 'ի կիր առնոյր։

Ընդ և յայնժամ՝ ժողովք բազումք, և տիրապէս երկրորդ ընդհանուր ժողովն Լիոնի, սահմանաւ վճռ-ռեցին՝ զօրավիգն առեալ զաւանդութիւն եկեղեցւոյ, եթէ երկոքին ևս խմորոնն և բաղարջն են ճշմարիտ նիւթք խորհրդոյ սեղանոյն։

Նոյնպէս և միայն յաւանդութենէ ունին առհա-սարակ ամենայն եկեղեցիք քրիստոնէից խառնել սա-կաւիկ մի ջուր 'ի բաժակ խորհրդոյն։

Մարթ էր ինձ և այլ ևս օրինակս յառաջ բերել քեզ. այլ արդեօք այսոքիկ շատ թուեսցին քեզ։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Նս կարի քաջ շատ իսկ են. որ այդպէս մանրա-մասին հանդերձեցեր մեզ զճառդ, յայտ յանդիման ցուցանել զգոյութիւն և զանհրաժեշտ կարևորութիւն զԱւանդութեանն։ Ոչ ասն որոյ և քաջիկ ևս խորհրդ-ածեալ ոք այսուհետև՝ յայսոսիկ, և խելամուտ եղեալ ասացելոցն, անշուշտ եմ՝ եթէ անդրդուելի մնասցէ 'ի ծանուցեալ ճշմարտութեան։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Բ.

ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Անհնար է նորաղանդին գտանել զստուգութիւն հաւատոյն իւրոյ յառանձին հեռագօսութենէ իւրմէ 'ի գիրս։ Անհրաժեշտ պէտք են հեղինակութեան եկեղեցւոյ 'ի ստուգել զհաւատս հաւատացելոց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ի նախընթաց տրամախօսութեան մերում ակնարկ ցուցի քեզ բարեկամ, եթէ միայն 'ի ծոցի ուղղափառ եկեղեցւոյ մարթ է ունել զամբողջութիւն հաւատոյ. քանզի այս եկեղեցի 'ի մի շարաւծեալ ունի ընդ գրոց ոգւոյ և զԱւանդութիւնն, զերկրորդ աղբիւր յայտնութեանցն՝ զոր ետ Աստուած եկեղեցւոյ իւրում։ Նոր մեք Աւանդութեանս այսմիկ շնորհապարտ զանձինս դաւանեմք 'ի ծանօթութեան բազմապատիկ մասանց հաւատոյ, զորս չգտանեմք ուրեք 'ի գիրս սուրբս։ Նոր ինձ թուի՝ եթէ շատ ինչ գոհ հանդերձեցի ես զքեզ 'ի պատճառս ապայուշիցն՝ զոր յառաջ քերի յայնժամ. և արդ հարցանեմ, քաջիկ ես խորհրդածեալ

քս յայնոսիկ, որպէս ասացեր, մնայ ինչ խնդրել քեզ յինէն և այլ ևս բացայայտութիւնս։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Որչափ առաւել խորհրդածեմ, այնչափ և առաւել թուի ինձ (անաչառ խօսելով) Ճանաչել զԱնդուրթիւնն իբրու երկրորդ աղբիւր յայտնութեանցն Աստուծոյ։ Քանզի և մնասունս բազումն զհաւատոյն յուշ ածեր ինձ, որոց գիտութիւնն է կարևոր և սակայն չգտանին 'ի գիրս. վասն որոյ և ասեմ՝ չէ մարթ ուրեմն հաւատոյն լինել ամբողջ միայն 'ի ձեռն գրոց։ Բայց գու ինձ խոստումն արարեր ցուցանել այսօր, եթէ առանձին հետազօտութիւն մարդոյ 'ի գիրս վասն հաւատոյն իւրոյ (յոր միայն ապաւինեալ եմք նորա զանդք անուանեալքս 'ի ձէնջ) չէ բաւական նաև ըստ Աստուգութեան զգրոշմն տալ հաւատոյն։ Եւ այս երկրորդ մասն ինձ թուի առաւել կարևոր քան զառաջինն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Եւ ես ինքն մտադիրագոյնս և ճշգրտագոյնս ճառեցից քեզ վասն այսորիկ։

Ապաքէն պարտ էր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խնամ ունել եկեղեցւոյ իւրում և միջնորդ իմն տալ նմա 'ի ստուգութիւն հաւատոյն։ Ի հասարակի՝ անժխտելի է սկիզբնս։

Եւ զմիջնորդ այսպիսի պարտի ընդհանրապէս ունել եկեղեցի, զի կարող լինիցի սահմանել զինդիրս յուզեալս 'ի ծոցի իւրում 'ի բանս հաւատոյ. դար-

ձեալ և 'ի մանաւորի՝ այր որ հաւատայեալ 'ի ստուգել զհաւատ իւր։

Արդ սուրբ գիրք չմարթին լինել միանակ մինչորդ 'ի յաջողել յերկուս յայսոսիկ։ Այլ նախ առաջին յայտ է, եթէ գիրք միանակ չեն բաւական սահմանել զանդիրս 'ի բան հաւատոյ։ Անդիրք այսպիսիք յուզեցան միշտ յամենայն 'ի դարս, և յուզեսցին միշտ անպակաս. և խոովայոյզ երկպառակութեանց պատճառք եղեն այնոքիկ 'ի մէջ հաւատացելոց, դրդեալք 'ի ջերմագին կրից և 'ի կամակոր յամառութենէ և 'ի դիմագրաւ անձնահաճութենէ, որովք վարակեցան առաւելապէս 'ի յետին դարս այդ առաջնորդք նորա-զանդիցդ. է զի և 'ի սանձակոտոր յանդգնութենէ և 'ի խօլամիտ կուրութենէ անխնամտ կուսակցայն նոցա. և այսպէս ոգիք ջերմացեալք բորբոքեցան, հաւատք նուազեցին, սէրն ցամաքեաց, այլովքն հանդերձ։ Ինչ-շուշտ ուրեմն պէտք էին մինչորդի ուրուք երրորդի յեկեղեցւոջ վախճան առնել բազմաշրջուկ երկպառակութեանց 'ի ձեռն կանոնափակ վճռոց և սահմանել զոր հաւատալն պարտ էր աներկիւղն ստուգութեամբ։ Ուստ որում և գործեալ միշտ եկեղեցի վճռովքն իւրովք ըստ իշխանութեանն՝ զոր էառ 'ի Քրիստոսէ։

Այլ սակայն նոցաղանդքդ որ դատապարտեցան 'ի նմանէ, յաւակնեալ ժոեցին բառնալ 'ի նմանէ զիշխանութիւնն զայն. քանզի ոչ կամեցան խոնարհել հպատակել դատաստանի նորա, և սկսան սնդել եթէ գիրք սուրբք միայն պարտին սահմանել զանդիրս։

Արդ տեսեմ եթէ այդ յաւակնել գոյա է գլխովին վայրապար, նա և զի անմտութեամբ. ընդէր. քանզի գիրք սուրբք են մատեան անբարբառ և առ 'ի սահմանել զպայքարս և զանդիրս՝ անհրաժեշտ պէտք են

բարբառոյ մարդոյ, պէտք են ատենի, պէտք են դա-
տաստանայ, որ երկոցուն կողմանցն մատուցեն զլսե-
լիս, որ 'ի քնին առցեն զնաստս նոցա, որք և ապա
վճիռ հատանիցեն դատաստանաւ, որ հարկ 'ի վերայ
դիցէ անսասանցն 'ի հնազանդել։

Այս մանաւանդ 'ի դէպս յայսոսիկ պէտք են այսո-
ցիկ. քանզի ոչ միայն անբարբառ են գիրք, այլ և
աղօտահայեաց է տեսութիւն նոցա, ուստի և տեղի
յայ բազմապատիկ պայքարաց և խնդրոց։ Քանզի
միտք գրոց 'ի բազում մեկնին. և այր իւրաքանչիւր
ըստ քմայն ընտրէ զմին. և բոլանդակ ոյժ և էութիւն
պայքարացն յածի 'ի վերայ հարազատ իմացուածոյն։
Պէտք անհրաժեշտք են ուրեմն իշխանի ուրուք ար-
տաքոյ գրոյն, որ տիրաբար վճիռ հատցէ վասն ճըշ-
գրիտ իմացուածոյն։

Գիտցուք եթէ վէճ անհնարին յուզեցի 'ի մէջ եր-
կուց հակառակորդ օրէնսգիտաց յաղագս դժուարին
ինչ խնդրոյ։ Այրկոքին ևս կողմանք 'ի զօրավիգն կար-
ծեաց իւրեանց զօրէնսն 'ի ներքս արկանեն, ընդ նմին
և զայլ ևս յօդուածս օրինացն։ Այր այր ասէ զնաստս
իւր և ըստ այլևայլութեան կարծեացն սպասեալ
մնան դատաւորին վճռոյ։ Յայնժամ մի ոմն յօ-
րէնսգիտաց անտի ձայն արձակեալ, « Ձեզ պէտք,
» ասէ, չեն պէտք վճռոյ. թող լռեցէ ատեանն,
» կացցէ դատաստանն. ինքնին օրինաց միայն պարտ
» է դատաստան առնել. նմա չեն ինչ պէտք ոչ օրէնս-
» ուսուցաց, ոչ դատաւորի, ոչ մեկնչաց. շատ է
» ընթեռնուլ զօրէնս, և նա սահմանեալ որոշեսցէ
» զամենայնն »։ Այս արդ հարցանեմ բարեկամ, զինչ
խորհուրդք իցեն քո վասն բանի օրէնսգիտիդ այդո-
րիկ. աղէ ասա։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Վաշ, ումպէտ են բանքդ և առ ոչինչ գրելիք։ Այսր իսկ է, եթէ գիրք օրինացն չէ ատեան. և յորժամ աղստահայեաց է տեսութիւն նորա և պայքարք երկուստեք յուզին 'ի վերայ իմացուածոյն, անհրաժեշտ պէտք են ուրեմն յայնժամ երրորդի ուրուք օրէնուսոյց մեկնչի։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այս ուրեմն գիրն չէ բաւական միայնակ սահմանել զինդիրս յուզեալս 'ի վարդապետութիւնս հաւատոյ։

Այլ կամիմ զարդիս ապացուցանել քեզ, եթէ նա չէ բաւական միայնակ նաև 'ի սահմանել զառանձին հաւատ հաւատացելոյ ուրուք անձին։ Զի խօսելով նախ զԹուոյ հաւատացելոյն, տեսանեմք զի բազմագոյնք թուով են նոքա որք ասիկք և տգէտք. իսկ զմանաւարն փրկութեան երայ նոցա Քրիստոս անշուշտ որպէս գիտնոյն. ուրեմն և միջնորդն՝ որ զհաւատն նոցա բաւական է ստոյգ գործել, պարտի 'ի դէպ զալ զնձակի հաստատութեան նոցա, և ամենեցուն առհասարակ ծանօթ լինել։ Իսկ արդ առանձին հետազօտութիւնն 'ի գիրս սուրբս՝ զոր նորաձայնքդ քարոզեն՝ չէ այնպիսի։

Քանզի ոչ ամենեքին գիտեն ընթեռնուլ. և թէ գիտասցեն ևս՝ ոչ ամենեքեան կարող են ստանալ զմատեանն Աստոյ. և թէ ստասցին ևս՝ ոչ ամենեքեան բաւական են յիմանալ զայն։

Եւ ո՞ր աներկեւանութեամբ վստահ վասն այսոր-
ոիկ երբէք լինիցի յանձն իւր։ Հարք սուրբք ինքնին
և մեկնիչք և թարգմանք գրոց սուզեալ ընկղմին յան-
հասանելի խորս նորա։ Բազմահատոր մատեանք մե-
կընչաց անբաւք են. և խորհուրդք և կարծիք այնչափ
զանազանեալք, մինչ զի 'ի մի բան գրոց է գտանել
խմացուածս բազումս՝ թուով քսան և երեսուն և քա-
ռասուն. նա և յէականն։ Օրինակ իմն 'ի բանն
յայն յէական՝ 'ի քառից կազմեալ բառից. «Այս է
մարմին իմ». քանի՞ խմաստք կամակորեցան առ նոր-
աղանդսն։

Ընդհասարակ որեարն առանց և գիւղից, անդուստ
և աղջկունք և կանայք և ռամիկք անուսմունք, ժը-
տեսցին արդեաք ասել համարձակաձայն, եթէ «Այս
ինքնին առանձին քաջիկ խմանամ զգիրս»։ Եւ
զիարդ ոչ յետին յանդգնութիւն լցէ բանդ։

Բայց ես յառաջ ևս ընթացեալ 'ի բանս ասեմ.
եթէ առանձին հետաքննութիւնդ այդ 'ի գիրս՝ կա-
րևորն 'ի ստուգել զհաստատ առն հաստատելոյ, է տի-
ղատպէս անկարելի, ոչ միայն տգիտաց ռամկին, այլ և
գիտնականաց, նա՛ և նոցուն իսկ գերիմաստ մտաց։
Բանզի՝ քաջ միտ դիր խորհրդածութեանս որ 'ի յոյժ
կարևորայն է. եթէ չգուցէ իշխանութիւն յեկեղեցւոջ
սահմանել ընտրել զճշմարիտ խմացուածս գրոց, ապա
և ոչ 'ի մարդոյ յուսեալ հնար է այնմ լինել և ոչ
յընկերութենէ իմեալ։

Դու ո՞վ Լուսեր չունիս ինչ իշխանութիւն 'ի վե-
րայ հաւատոյն Կալվինի. և ոչ դու Կալվին 'ի վերայ
հաւատոյն Օսինկլիոսի. և ոչ ոք 'ի ձէնջ և ոչ դուք
համախումբ ամենեքին ունիք ինչ իշխանութիւն 'ի վե-
րայ հաւատոյն մարդոյ՝ որոյ և լցէ։

Պէտք են ըստ դրութեան ձերոյ՝ զի իւրաքանչիւր հաւատացեալ անձամբ անձին հետազօտեսցէ զգիրս սուրբս 'ի փրկութիւն հոգւոյ իւրոյ ըստ ամենայն մասանց հաւատոյ։ Արդ ինդեմ՝ եթէ անհնար է բանդ բացարձակապէս ոչ միայն հաւատացելոց առ հասարակ, այլ և զումմէ և ասիցես 'ի քաջագէտ արանց։

Քանզի և արդեաք պարտ էր նախ՝ զի առհասարակ ծանիցեն ճշգրտիւ որ իցէ ճշմարիտ իմացուած գրոյն. երկրորդ՝ զի և ստուգեալ յապահովի կացցեն վասն ճշմարիտ իմացուածոյն։ Այլ արդ երկոքին ևս են անհնարինք։

Նախ՝ անհնար է յապահովել միայն 'ի ձեռն աստուածաշունչ մատենի, ոյք իցեն գիրքն առանձինն յորոց միանգամայն կազմիցի այդ մատեան։ Այս գլուխս դժուարութեան ունի յինքեան և զերիս այլ դժուարութիւնս. որ են՝ գիրքն ինքնին. մանաւոր հատուած գրոյն. և թարգմանութիւն նորա։ Արդ նորաղանդ ոք որ զհետ երթալով սկզբանց իւրոց վարդապետաց պարապեսցի 'ի լուծանել զտարակուսանս իւր հետազօտութեամբ գրոյն, և գտանիցէ հատուածս բանից յաղագս գլխաւոր ինչ մասին հաւատոյ, և առ 'ի գիտել եթէ հնարք իցէ նմա աներկմիտ հաստատիլ 'ի վերայ հատուածոյն, հարկաւորապէս զերծեակ զայս հարցումն հարցանէ ցանձն իւր. « Արդեաք գիրք՝ որ » գտանեմ ես զայս հատուած իցէ 'ի թուոյ սրբազան » գրոց։ Արդեաք այդ հատուածդ իցէ ինչ երբէք այլ » այլեալ։ Արդեաք և թարգմանութիւն նորա իցէ հա » ստատիմ։ Այլ ահա տարակուսելն միայն ընդ վին յերից այսր մասանց վեր 'ի վայր տապալէ ողջոյն զհեղինակութիւն հատուածոյն այնորիկ։

Այլ առ ուղղափառս չկք ինչ երկմտութիւն յերեսին 'ի դոսա. զի և չունին ինչ նոքա պարտս հետաքրքրելոյ անձամբ 'ի գլուխ. եկեղեցի ինքնին մթերեալ պահէ 'ի գանձի իւրում զսրբազան գլուխ, նա ինքն յասպահովի առնէ զորդիս իւր վասն ամբողջութեան հատուածոյն, և ինքն ընծայէ նոցա թարգմանութիւն հաւատարիմ զընկալեալն 'ի կաթողիկէ եկեղեցւոյ:

Բայց նորաղանդ ոք յանհնարին տագնապի կայ. հաւանականութիւնս միայն և հաստատութիւնս իմն խարխուլս ունի վասն վաւերականութեան գրոցն, վասն ամբողջութեան և անարատութեան հատուածոյն, և վասն հաւատարմութեան թարգմանութեանն, որովհետև սակաւք 'ի գիտնոց ծանօթք են արև ելեան լեզուաց: Ո՞ւստ ուստեք ծանիցէ նա, եթէ հատուածք գրոցն չիցեն այլայլեալք: Նա որ առաւել զտագնապ նորա յաճախէ, այն է՝ զի 'ի բազմագոյնս 'ի հատուածոց գրոց գտանին այժմիկ պէսպիսութիւնք բազումք, այս է՝ բազմադիմի եղանակք գրութեան 'ի զանազան գրչագիրս, կամ թէ 'ի նախընթաց տպագրութիւնս զանազանեալս:

Ո՞չ արդեօք պէտք իցեն նմա դիմել 'ի հեղինակութիւն կաթողիկէ եկեղեցւոյ, յորմէ հիմնադիրք նոցուն առին զգիրս սուրբս: Նա եթէ հարցանիցեմք, եթէ ընդէր ապա ոչ ճանաչէք զհեղինակութիւն զայս եկեղեցւոյ՝ նաև յայլ մասունս վարդապետութեան, զինչ ունիցին պատասխանի:

Քանզի գլխաւոր դժուարութիւնն հիմնեալ կայ 'ի վերայ նոցուն իսկ գրոցն, ոմք 'ի նոցանէ իցեն արդեօք սրբազանք և կանոնականք, և ոմք ոչ: Զինչ կարասցէ ոք պատասխանի առնել հարցմանցս, յորժամ յէականն ընդունի զհեղինակութիւն եկեղեցւոյ, և

յայլն՝ մերժէ։ Ու քաջայայտ է յեկեղեցական պատ-
մութենէ, զի գիրք հնոյ և նորոյ կտակին ոչ ծանու-
ցան առհասարակ ամենեքեան յամենայն 'ի դարս եկե-
ղեցւոյ իբրև կանոնականք, և զի՝ և ոչ զարդիւք ճա-
նաչեն զայնոսիկ ամենայն խումբք հերձելոցն, որպիսի
են գիրք Իմաստութեան, Մակաբայեցւոցն, Թուղթք
սրբոյն Յովհաննու աւետարանչի, և Թուղթ սրբոյն
Յուդայի առաքելոյն։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Բայց վարդապետն մեր Կղոդիոս հնարս գեղեցիկ
իմաստութեամբ 'ի վեր եհան զերծանել 'ի վարանաց
տագնապին, հոչակ իրաւապէս հարեալ՝ եթէ « Գիրք
» սուրբք անդստին 'ի բնէ նշոյլս իմն ճառագայթից
» ունին յինքեանս զաստուածայնութեան, որ անդէն
» հեշտեաւ տան ճանաչել զինքեանս »։ Ու այս և
'ի գիրս ինչ Հրահանգաց նորաձայնութեան տպա-
գրեալ 'ի Շէոէնդոն յամին 1667. (և անշուշտ հա-
մարին այդ գիրք իբրու հանճարով մեծաւ շարա-
գրեալ), ընթեռնումք վասն խնդրոյս զայս ինչ.
« Օրբաղնութիւն գրոց գիտեմք մեք 'ի վկայութենէ
» անտի և 'ի ներշնչութենէ Հոգւոյն սրբոյ, որ տայ
» մեզ ճանաչել զայնոսիկ »։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Ալ ոչ արդեօք յայտնապէս վայրապար և փուտ
իսկ պատասխանիդ։

Քանզի եթէ նշոյլք ճառագայթից Կղոդիոսին էին
արդեօք այնչափ փայլակնացայտք, որպիսի ինքն կամի

տալ Ճանաչել զնոսա, զի է զի յամենայն դարս եկեղեցւոյ 'ի վերայ էական խնդրոյս այնչափ վարանք յուզեցան և խէթք։ Իսկ և դիմելդ այդ 'ի ծածուկ ներշնչումիւն Հոգւոյն սրբոյ, է յայտնապէս անկանել 'ի կոկոզանս սուտս և 'ի մտախաբ կիրս։

Այլ որ յայտնի ապացուցանէ զստուգիւն գրութեանս այսորիկ, այն է. զի եթէ արդարև այս ներշնչումիւն գայ 'ի Հոգւոյն սրբոյ, ապա պարտէր միօրինակ լինել 'ի ներշնչեալս առհասարակ։ Այլ ապադիկ որ ըստ կարծեաց հերձելոցդ առ 'ի մէնջ առաւել իմն լուսաւորեալք անուանեցան՝ Լուսեր և Կալվին՝ զի է զի ոչ նոյնօրինակ ներշնչութեամբ վարեցան, և ոչ նմանատիպ Ճառագայթիւք լուսաւորեցան։ Բան զի Լուսեր մերժեաց և չընկալաւ ընդ Կանոնականս զթուղթ սրբոյն Պաւղոսի առ Եբրայեցիս. զթուղթ կաթողիկեայց սրբոյն Յակոբայ, և զՅայտնութիւն սրբոյն Յոհաննու աւետարանչին։ Իսկ անդուստ Կալվին զերեսին զայդոսիկ առ ընկալաւ իբրև կանոնականս։

Բայց մեք չեմք կարօտ. ոչ Կղոդեան նշուլից Ճառագայթիցդ այդոսիկ 'ի խնդիր ելանեմք, և ոչ գերբնական ծածուկ ներշնչութեանդ այդմիկ։ Գիտեմք, զի հերձուածողք 'ի բաց մերժեցին զայն գիրս, որ անհաճոյք գտան նոցա. քանզի յայտնի դիմամարտք զինէին վարդապետութեան նոցա։ Օրինակ իմն՝ Լուսեր մերժեաց զԳիրս Մակաբայեցւոց. քանզի յիշատակ առնեն այն գիրք աղօթից և խնդրուածաց վասն ննջեցելոցն։ Իսկ զթուղթ սրբոյն Յակոբայ, քանզի անպատրուակ գրէ անդ առաքեալն վասն վերջին օծման հիւանդաց, այլուքն հանդերձ։ Ընդուշտ ապա եթէ վասն գոյութեան Գրոց, եթէ վասն ամբողջութեան հատուածոց, և եթէ վասն հաւատարմութեան

թարգմանութեանն, անստուգութիւն գլխովին տի-
բեալ է առ նոսա։ Եւ եթէ այս այսպէս, զիաւրդ ապա
և ոչպիսի ինչ ստուգութիւն երբէք եղեցի հաւատոյն
նոցա։

Երկրորդ՝ որ առաւել ևս մեծ է, զի չիք հնար եթէ
հաւատացեալ ոք յապահովի կացցէ վասն ճշմարիտ
իմացուածոյ բանիցն միջնորդաւ գրոց միայն. պէտք
են հաւատոյն՝ որպէս ասացի՝ լինել այնչափ ստոյգ,
որչափ և հպատակ և հլու։ Եւ այս ստուգութիւն՝
բաց 'ի վկայութենէ զգայութեանցն մարդոյ և 'ի դա-
տաստանէ նորա պարտի ունել և զդատաստան աս-
տուածաբանից։ Եւ այս աներկևան հաւատոյն ստու-
գութիւն պարտի այնպիսի իմն յարդարել զմեզ ճըշ-
մարտութեամբ, զի եթէ և պէտք իցեն, միշտ պատ-
բաստք իցեմք և զրովանդակ զարիւն և զկեանս տալ,
ըստ որում բիւրք բիւրուց մարտիրոսաց քաջացան ա-
բիւրեամբ։ Եւ զայս ստուգութիւն աներկևան պարտ
է ունել միանգամայն յամենայն խորհուրդս հաւատոյ,
'ի միութիւն աստուածութեան, յերրորդութեան ան-
ձանց, յաստուածութիւն բանին, միով բանիւ՝ յա-
մենայն ճշմարտութիւնս՝ զոր ուսուցանէ Եկեղեցի։

Արդ զստուգութիւն այսպիսի անհնար է ունել 'ի
Գրոց միայն, և աւասիկ քեզ պատճառքն։ Քանզի
իմաստ բանի գրոյն, որ աղագաւ պայքարին երկոքին
կողմանք, աղօտ է և երկբայելի. և վասն այսորիկ է
պայքարն. քանզի 'ի վերայ յայտնեացն չիք պայքար։
Եւ պայքարին, ոչք ոմանք. վարդապետք իմաստունք
և արք քաջուսմունք։

Եւ եթէ զհանճար և զգիտութիւն չպարտիմք զլա-
նալ արանց քաջուսից եկեղեցւոյ, որ զինեցան ընդ-
դէմ աշխարհագոյժ հերձուածողացն, ըստ որում են

Աբիս, և Աստոր, և Լոմիր, և Կալլին, նման-
եալն հանդերձ, ոչ ինչ արդեալ ժտեցին այս հերձուա-
ծողք իբրև ապուշս և յետսամիտս համարել առհա-
սարակ զամենայն վարդապետս ուղղափառաց և զա-
մենայն զՀարս։

Այլ առ այս դարձեալ, պայքարին յաղագս գլխա-
ւորաց են և տիրականաց, յորս առ 'ի զառաջս ունել
զՀերձուածոյն և առ 'ի սանձել նուաճել և արմա-
տաքի խլել արձանագրեցան այնչափ ճառք և մա-
սեանք, յառաջ եկին այնչափ խորհուրդք և զրուցատ-
բութիւնք և գումարեցան այնչափ ժողովք եկեղեցւոյ,
զի և պարտ իսկ է խոստովան լինել եթէ ամենայն
հասուն խորհրդով՝ որչափ և մարթ ի՛ր՝ հետաքննեցան
խնդիրքն. և 'ի վերայ այսր ամենայնի ոչ յաջողեցաւ
միաձայնութիւնն 'ի վերայ իմացուածոյ գրոյն, յոյր
վերայ հաստատեալ պնդէին ջատագովք հակառակ
կարծեացն. ապա ուրեմն ոչինչ յստակատեսք են իմա-
ցուածք գրոյն. ուստի և ոչ առանձին լուսով բանի
մարթիցին երբէք սահմանիլ։

Այն զի և մեծամեծ մոլորութիւնք 'ի մթին բանից
անտի գրոյն 'ի վեր բուսանին, քանզի և անդանօր
միայն զանազանեալ հակառակին կարծիք. որպէս և
վէճք և աղաղակք 'ի բազմապայքար դատս աշխար-
հական ատենից բարձրանան։ Ապա ուրեմն յայնչափ
դժուարին հակաճառութիւնս առ 'ի լոյս հանել զՀրշ-
մարիտ իմացուած գրոյն պէտք են անշուշտ սահմանի
և ստուգապատում կանոնի. և ո՞ւր ապա մարթ իցէ
գտանել զայն, յորժամ երկոքին կողմանք պնդեալ
յիւրաքանչիւր կարծիս և զիւրեանցն հաստատեսցին
միայն։

Այլ նորին աղագաւ ստիպեալ և նոքա 'ի յայտ յան-

գիմանումենք իրացն՝ ձայնակիցք մեզ գտան 'ի վերջէ, եթէ միտք մարդոյ միայնակ չէ բաւական սահմանել ստուգութեամբ զճշմարիտ իմացուած գժուարին բանից գրոցն. և թէ՝ պէտք են անշուշտ ընթերակայումեան Հոգւոյն սրբոյ. և զնոյն խոստովան եղեն յայտնապէս. այլ այս անհրաժեշտ խոստովանութիւն ոչ այլ ինչ գործեաց, բայց եթէ առակել զտագնապ տարակուսի նոցա առանց յանդգնելոյ զնոսա։

Բանզի կէսք 'ի նոցանէ համարեցան ընդ Աղդիոսի քարոզչին ձերոյ՝ որպէս ասացի, եթէ այս ընթերակայութիւն կայանայ 'ի ճաշակ իմն մտաւոր կամ յազգումն շնչեալ 'ի Հոգւոյն սրբոյ առ 'ի խելամուտ լինել ճշգրիտ իմացուածոյ գրոցն։

Իսկ և կէսք այլք ընկալան ներշնչութիւն իմն անմիջական հեղեալ 'ի Հոգւոյն սրբոյ, եթէ՝ առ ամենեսեան առհասարակ որ միանգամ անկեղծութեամբ խոնարհեցեն զճշմարտութիւն, և եթէ առանձին առ հաւատացեալ ոք, կամ՝ առ նախասահմանեալս միայն։

Այլ սակայն քաջայայտ փուտ են բանքն և տարապարտ զրոյցք և վայրապար պատճառք են։ Ուստի և յաւէտ ևս զգալի յարդարելով զերսդ, դիցուք եթէ 'ի սկզբան անդ չորրորդի դարուն, և նախ քան զսահման վճռոյ ժողովոյն Նիկիոյ մի ոք յարիանոսաց և մի ոք դարձեալ յուղղափառաց 'ի պայքար մտեալ իցեն վասն աստուածութեան բանին։ Արիանոսն պնդեալ կայ 'ի վերայ բանի գրոյն, եթէ « Հայր իմ մեծ է քան զիս ». յորմէ և զհետ բերէ եթէ Հայր և Որդի չեն ուրեմն նոյն և մի Աստուած։

Իսկ և անդուստ ուղղափառն զնոյն բան մեկնէ վասն մարդկային բնութեանն, որով և փոքր իսկ է որդին քան զհայր։

Բայց Արիանոսն պնդէ դարձեալ եթէ զլան զայն պարտ է իմանալ ոչ վասն մարդկային բնութեան որդւոյն, այլ վասն բոլոր որդւոյն՝ որ զերկուս ունի բնութիւնս զաստուածային և զմարդկային. քանզի բացարձակ և առանց բաժանելոյ ասաց Քրիստոս. « Հայր իմ մեծ է քան զիս »։

Բայց և ուղղափառն կայ ընդդէմ, և զայն ևս բան տեառն յառաջ բերէ, զոր ասաց, « Ես և Հայր իմ մի եմք »։

Իսկ և ընդդէմ արիանոսն թարգմանէ զնոյն բան ոչ վասն միութեան բնութեանն, այլ վասն միաձայնութեան և համաշնչութեան կամայն, քանզի իսկ յայն միտս զոր ասէր տէր մեր աղօթելով առ Հայր վասն աշակերտացն, « Հայր սուրբ պահեա զնոսա, զի եղիցին մի որպէս և մեք մի եմք ». այս է՝ զի եղիցին միշտ միաբանք և միակրօնք։

Եւ արդ մարթ էր նոցա և այլ ևս շատ հակառակել և երբէք ընդ միմեանս չմիաբանել, դարձեալ և երկոցուն կողմանցն կալ միշտ 'ի վարանս և յանստուգութեան, եթէ չէր ընդհանուր ժողովոյն Նիկիոյ գումարեալ յամին 325 և սահմանաւ որոշեալ զինդիրն։

Այլ յառաջ մատուցեալ մնա՛ 'ի մեր ժամանակս, տայուք այժմ 'ի պայքար մտանել առն միում Լութերականի, որ դաւանի զկրական ներկայութիւն Յիսուսի Քրիստոսի 'ի խորհուրդ Հաղորդութեան, դարձեալ և միում ումեք 'ի Խորհրդական անուանեալ աղանդաւորացն որ ժխտեն զնոյն և յուրաստ լինին։ Լութերականն հաստատէ և յուցանէ զիւրն նովին իսկ սրբացուցիչ բանիւք խորհրդոյն զոր սահմանեաց Քրիստոս ասելով « Այս է մարմին իմ. Այս է արիւն իմ »։ Պատասխանի ընդդէմ առնէ Խորհրդականն,

եթէ որովհետև յանհնարին է իրն, յայլաբանական միտս ուրեմն պարտ է իմանալ զբանն. ըստ որում և զբանն զայնոսիկ զոր ասայ ինքնին տէրն վասն իւր « Ես եմ դուռն, ես եմ Ճանապարհ, ես եմ որթն » :

Եւ այնպէս ասա յետ երկայնագոյնս պայքարելոյ առանց ճշդրտագոյնս ինչ 'ի վեր բերելոյ, 'ի վարանս տարակուսի կացցեն մնասցեն երկոքին կողմանքն :

« Հաւատամ ես, ասասցէ վարանեալ յանձն իւր » Լուսերականն, զի զբառն զայն զոր սահմանեաց » տէրն վասն խորհրդոյ հաղորդութեանն, պարտ է » առնուլ 'ի նկարագրական միտս : Այս էր կարծիքն » Լուսերի. բայց և զայն գիտեմ. զի Օնինկլիոս » յայլ կարծիս եղև. և կարծիք նորա տիրացան այժ- » միկ յեկեղեցիս վերանորոգութեան մերոյ : Բայց և » արդեամբք ոչ ոք 'ի նոցունց էք արդեօք անսխալ, » և ոչ ես ինքն եմ ինչ այնպիսի. վասն որոյ 'ի վա- » ղանս կամ. հակամիտեալ եմ այո 'ի կարծիս յայս. » բայց չեմ անշուշտ և յասպահովի » :

Իսկ և Խորհրդականն անուանեալ՝ զնոյն խօսեսցի ընդ անձին վարանոք. « Այո՛ կուսակից եմ այլաբա- » նական մտաց բանից խորհրդոյն. 'ի վերայ այսր » գիտեմ քաջ զի Լուսեր մերն հիմնադիր երբէք ոչ » հաճեցաւ ընդ այն. և զի՝ Լուսերեանք ևս բազմա- » թիւք են յոյժ. և զի՝ անշուշտ և դասք ուղղափա- » ռաց երբէք ոչ փոփոխեցան 'ի հաւատ հաղորդու- » թեանն, և զնոյն դաւանութիւն յայտ յանդիման- » նութեամբ յուցանեն կացեալ անարատ անդստին » յառաքելոց անտի մինչ առ Խորհրդականս առ » մեզ. ուստի և յասպուշ հարեալ կամ և վարանիմ. » թէպէտ և զնոյն կարծիս ուսուցին ինձ իմս վար- » ժապետք » :

Նա թէ դու յերկոցուն դոցա 'ի վարանան՝ կամիս
աներկեան լինել 'ի խնդիրդ, կայո՛ հանդէպ Խոր-
հրդական անուանեալ նորաձայնիցդ զոմն յուղղափա-
ռաց. թող հարցցէ նմա Խորհրդականն այսպէս.
« Ա՛ղէ ասա՛, հաւատաս դու եթէ մարմին և արիւն
» տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իցէ ճշմարտա-
» պէս 'ի խորհրդեան հաղորդութեան». Պատաս-
խանի արասցէ ուղղափառն. « Ա՛յո՛ խոստովանիմ և
» հաւատամ»: — « Նա ընդէր հաւատաս զայդ »:
— « Վասն զի գտանեմ զայն 'ի սուրբ գիրս. Ա՛յս
» է մարմին իմ, Ա՛յս է արիւն իմ»: — « Նա զինչդ
» յայտնի գիտիցես, եթէ զբանդ պարտ է առնուլ
» 'ի նկարագրական միտս և ոչ յայլաբանական». —
« Ա՛յո՛ յայտնապէս գիտեմ զայս, վասն զի կաթողի-
» կէ եկեղեցի ուսուցանէ այնպէս. և զի յայտնի սահ-
» մանեցաւ այնպէս և յընդհանրական ժողովն Տրի-
» դենտեան: Ոչք ինձ 'ի բանիդ անստուգութիւն, և
» ոչ 'ի յերկուանաց ինչ վարանեալ պատրիմ այսու-
» հետև. և քաջալինդ հաստատեալ կամ 'ի վերայ
» բանիցն Աստուծոյ զոր մեկնեաց եկեղեցի, որում
» միայն յանձն եղև սահմանել զիմաստ բանիցն Ա-
» ստուծոյ. որում և խոստացեալ իսկ է զյաւերժաբար
» ընթերակայութիւն իւր մինչև 'ի կատարած աշխար-
» հի: Պատրաստ եմ այսուհետև 'ի վերայ հաւատոյս
» այսորիկ տալ զարիւն իմ. իսկ դու անշուշտ ոչ քա-
» ջասցիս յայս 'ի հաստատել զդրութիւն այլաբանա-
» կան իմաստիդ. և ոչ քոյ եղբայրակցիցք Լութե-
» րականք 'ի հաստատութիւն իրական ներկայութեանն:
» 'Այս զի՝ և զլսողին չէ իսկ պարտ ձեզ առնել զայդ.
» քանզի ըստ ձեզ կարծիք միայն վարանականք են
» այդոքիկ, որ ոչն զօրեն հաւատս ներդործել աներ-

» կեանս. և ըստ նմանէն՝ ոչ և զհաւատն զայն զոր
» սահմանեաց Աստուած լինել սկիզբն արդարացու-
» ման հաւատացելոց և փրկութեան նոցա։ Այլ եթէ
» յայս մասն հաւատոյ այսպէս, ասա և յայլ ամե-
» նայն մասունս. զի ոչ դաւանիք զհեղինակութիւն
» կաթողիկէ եկեղեցւոյ 'ի սահմանել զճշմարիտ խմաստ
» բանիցն Աստուծոյ։ Ապա եթէ չունիք դուք հա-
» ւատս զկաթողիկէ եկեղեցւոյ, կամ թէ մանաւանդ
» չկամիք ունել, զինչդ մարթի լցեալ փրկութիւն գտա-
» նել ձեզ, եթէ ոչ 'ի խնդիր ելանիցէք այնմ՝ միա-
» բանեալ ընդ կաթողիկէ եկեղեցւոյ »։

Այլ արդ աղէ բարեկամ զինչդ թուի քեզ. իրաւա-
ցի՞ լցեն բանք և փաստք ուղղափառիդ. և զի՞նչ ար-
դեօք գտանիցէ՞ք տալ պատասխանի։

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Թէպէտ և իրաւացի ևս թուեսցին բանքդ, եթէ
միայն 'ի հեղինակութենէ ասսի եկեղեցւոյ մարթի լցեալ
ունել հաւատս ստոյգ և աներկեան և կարևոր 'ի փրկ-
կութիւն, այլ սակայն առ 'ի հաստատել զկարևորու-
թիւն հեղինակութեան կաթողիկէ եկեղեցւոյ մանրթի լցեալ
.քեզ, նաև վկայութիւնս յառաջ բերել 'ի նոցուն իսկ
'ի գրոց։ Զնա թուի՝ եթէ յայնժամ վճարեալ է ամե-
նայնն ընդդէմ մեր՝ որ դաւանիմք՝ եթէ գրոց միայն
է անկ սահմանել զհաւատս հաւատացելոց։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այլ կարի .քաջ. վկայութիւնք բազմապատիկ գոն-
վան բանիդ 'ի գիրս սուրբս։ Աւասիկ մարգարէ.ք

սուրբք առհասարակ կանխապատուվք եղեն վասն եկե-
ղեցւոյ Քրիստոսի. եթէ յաջորդել հանդերձեալ է
զհետ օրինացն Մովսէսի. և թէ յաւերժաբար կացցէ
մնասցէ և զհաւատացեալս իւր ածցէ յերկինս վիճնոր-
դաւ հաւատոյն, և նա եղիցի իշխան սահմանադիր ստու-
գութեան հաւատոյ։ « Ի սիոնէ ելեսցէ փրկիչ, ասէ
» Եսայի. 'ի գլ. 19... և աւասիկ ուխտն զոր եդից
» ես ընդ մարդկան, ասէ տէր։ Հոգի իմ որ է 'ի
» ձեզ, և բանք իմ զոր ետու 'ի բերանս ձեր, ոչ ևս
» պակասեսցին երբէք 'ի բերանոյ ձերմէ, և ոչ 'ի բե-
» րանոյ որդւոց ձերոց և ոչ 'ի բերանոյ որդւոց որդ-
» ւոց ձերոց մինչև ց յաւիտեան »։ Դարձեալ և 'ի
գլ. 54. ողջոյն, խստի վասն եկեղեցւոյ Քրիստոսի, և
յետ խոստանալոյն շինել զնա՝ բանիւքս այսոքիւք,
« Աւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս
» քո, և զհիմունս քո շափիղայ... և արդարութեամբ
» շինեսջիր... զի աւասիկ եկք առ քեզ վասն իմ
» մերձեսցին », գլխաւորէ զբանն զայս օրինակ հրա-
շապէս, « Ամենայն անօթ վնասակար 'ի քեզ ոչ յա-
» ջողեսցի, և զամենայն բարբառ որ յարիցէ 'ի վերայ
» քո 'ի դատաստան պարտեսցես. և ամենայն դա-
» տախազք քո 'ի նմին »։

Աւասիկ քեզ եկեղեցի Քրիստոսի սահմանեալ յու-
սուցանել, և աներկևան 'ի պահել զբանն Աստուծոյ
յանարատութեան իւրում մինչև 'ի կատարած աշ-
խարհի, և հաստատեալ 'ի դատաւոր ամենայն բար-
բառոյ և վարդապետութեան։

Բայց 'ի նորոյս կտակէ բազմաթիւ յոյժ են վկայու-
թիւնք։ Սուրբն Պետրոս 'ի հիմանց տապալէ զդրու-
թիւն զայն զուտ, եթէ գիրք ինքնին պարտին աներ-
կևան գործել զհաւատս մեր։ Նա են ասէ, 'ի թուղթս

Պաւղոսի սիրելի եղբօր մերոյ « Ինչ ինչ դժուարի-
» մացք, զոր յողդյողդքն և անուամունք կամակո-
» րեն, որպէս և զամենայն իսկ գիրս առ իւրեանց ան-
» ձանցն կորուստ » . ք . Պետր . Յ : Աղօտահայեաց
ուրեմն են գիրք և մարթ է սխալել յիմացուածս նոցա .
պէտք են ուրեմն հեղինակութեան իմիք որ հաւաստեաւ
սահմանեսցէ զմիտս նոցա : Եւ քաջ միտ դիր . զինչ
յայտ առնէ նոյն իսկ պատմութիւն հիմնարկութեան եկեղե-
ցւոյ, զոր բազում անգամ յառաջ բերի քեզ . « Գնա-
» ցէք, ասէ տէրն խօսելով առ առաքեալսն իւր և 'ի
» նոցա դէմս առ նոցուն յաջորդսն, Գնացէք այսու-
» հետև աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտե-
» ցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբ-
» բոյ . ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն զոր ինչ պա-
» տուիրեցի ձեզ » :

Ոչ ասէ տէրն . Գնացէք այսուհետև, տարայք
տուք նոցա զգիրս իմ . այլ թէ՝ Գնացէք աշակերտե-
ցէք, ուսուցէք նոցա : Որդ ա՞ղէ նոյն ինքն էութիւնն
ուսուցանելոյ ո՞չ ահա հաստատեալ է 'ի մեկնել 'ի
բացայայտել զուսուցեալն, 'ի պարզել 'ի լուսաբանել
և սահմանաւ որոշել զճշմարիտ իմացուած բանին :
Եթէ վարդապետք ուսուցիչք առաջի արկցեն աշա-
կերտելոց գիրս իմն յորում իցեն ինչ ինչ դժուարի-
մացք, ո՞չ արդեօք 'ի դէպ իցէ նոցա մեկնաբանել
զնոյն :

Այլ տեսցուք վայր մի . զի՞նչ ինչ վարդապետեցին
այս վեհագոյն քարոզիչք և նոցուն հետևողք և յա-
ջորդք : Ճշմարտութիւնս բարձրագոյնս, խորհուրդս
հաւատոյ անճառելիս և 'ի վեր քան զամենայն զմիտս :
Եւ ոչ ոմանց քարոզեցին . ստարայ, անծանօթիչ,
վայրենեաց, բարբարոսաց, խօլայ և տգիտաց . Եւ

ապա յայտնեաց ասել թմ խմբք ապատեալ մնային. Յայտ է, եթէ ընդդիմադրութեանց նոցա 'ի բաղում մասունս քարոզութեան, պայքարաց, և հարցաքննութեանց: Եւ զիարդ արդեօք ընդաձրեցին գնասա և լուծին զնոսին. զիարդ հաստատեալ կնքեցին զհաւատս զաշակերտելոյն Խրեանց. զիարդ, բայց եթէ անբողոքելի հեղինակութեամբ եկեղեցւոյ:

Օրինակ իմն՝ դիցուք եթէ ոք 'ի քարոզչաց բանին յետ դարուն չորրորդի գնացեալ էր առ կռապաշտ ազգինս քարոզել զքրիստոնական հաւատս. «Զինչ » բանք էին զոր դուք ասես, բաբէ դու պաշտօնեայ » Աստուծոյ բարձրելոյ, (պատասխանի ընդդէմ տա- » ցին նմա անդէն յառաջին քարոզութեանն հեթա- » նոսք,) զինչ բանք էին. մի միայն Աստուած քա- » րոզես և կամիս զմեզ մկրտել յանուն երից. Հայրդ » այդ ուրեմն և Որդիդ և Հոգիդ սուրբ զորոց ձառ » արկեալ պատմես, ի՞նչ նոցն և մի իր, են մի և նոյն » Աստուած»: — Այո՛ ամենայն իրօք, պատասխանի » տայէ քարոզիչն. այո՛ այս երեք անձինք զանազա- » նեալք՝ են մի միայն, և նոյն մի Աստուած. Յիսուս » Քրիստոս զայս այսպէս քարոզեաց 'ի վերայ երկրի. » զկնք սուրբք՝ զոր մեզն աւանդեաց՝ զնոյն հաստա- » տեն. և ինքնին եկեղեցի՝ զոր նա հիմնարկեաց և » զինքն նմա յաւերժաբար ընթերակայ խոստացաւ՝ » զայս այսպէս յայտնապէս սահմանեաց»: Եւ արդ այս պատասխանի ոչ ահա 'ի վարանոյ ազատ կա- ցուցեալ և սահմանաւ կնքեալէ զհաւատս նոցա:

Ապա եթէ յանկարծ ընդհակառակն ասացէ ինչ այսպիսի առ նոսա. «Հարցանէք ինձ ասել, եթէ » արդեօք Հայր և Որդի էին ամենևին մի և նոյն » Աստուած. բայց խնդրոյդ այդմիկ չէ մեզ անկ ու-

» ծումն շնորհել։ Պայքարք անհնարինք յուզեցան
» վասն այդորիկ, և այդ խնդիր հերձեաց զտիեզերս
» ամենայն։ Եւ ահա Հանապարհ զայս ցուցանեմ՝ի
» լուծումն խնդրոյդ։ Յիսուս Քրիստոս գիրս իմն ա-
» ռանդեալ եմոդ եկեղեցւոյ իւրում. և կամի զի հա-
» ստատեալք՝ի վերայ նոցա հիմնեցուսցեն զհաւատս
» իւրեանց. Թէպէտ և Թուեսցին ևս լինել՝ի նոսա
» բանք միմեանց ընդդիմամարտք և՝ի կարծիս կրկին
» բաժանեսցին զընթերցանելիսն, Այն գիրս բազմա-
» հատոր տայ ես ձեզ, և դուք ձիգն Թափեալ վար-
» ժեսջիք՝ի նոյն, հետաքննեցէք զգրեալսն, և դուք
» անձամբ անձին տահմանեցէք ինչ մի՝ի հաւա-
» տալ»։ Այն ինչ լուեալ նոքա զայս անդէն պա-
տասխանի արասցեն, «Վաշ, և բնաւ իսկ ընթեռ-
» նուլ մեք չգիտեմք, և Թէպէտ և գիտացեալ ևս էր
» մեր. զինչ կարասցուք մեք հասկանալ՝ի բազմա-
» քանակ մատենէդ. այլ դու ինքնին մեկնեա մեզ
» զնոյն։ Ոչ ահա հաւատս իմն հաստատուն պա-
» հանջես դու՝ի մէնջ՝ի նորոգ աշակերտելոցս. դու
» ինքնդ տահմանաւ կանոնեա զինչ պարտ իցէ մեզ
» հաւատալ»։ Այս անշուշտ պատասխանի արաս-
ցեն նոքա։

Այլ ես վկայութիւնս բազում և քաջայայտս ար-
դէն յառաջ բերեալ եմ քեզ, որովք զանխախտութիւնն
խոստացաւ Քրիստոս եկեղեցւոյ իւրում։ Գիտես իսկ
քաջ, զոր ասաց առ երանելին Պետրոս. «Դու ես
» վէմ, և՝ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և
» դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն»։ Արդ
եկեղեցի Քրիստոսի շինեալ՝ի վերայ վիմի երբէք ոչ
անկցի՝ի մոլորութիւն. քանզի և երբէք զնա ոչ յաղ-
թահարեսցեն դրունք դժոխոց։ Քանզի և հիմնարկե-

ցաւ նա առ 'ի ուսուցանել մարդկան զՀշմարտութիւն. և քանզի Յիսուս Քրիստոս Ճշգրտիւ հաւատարմացոյց նմա զանխախտութիւնն, կամեցաւ զի 'ի վարժից նորա կալցեն զսահման հաւատոյն քրիստոնեայք, և ոչ յառանձին հետազօտութենէ իւրեանց 'ի գիրս։ Եւ վասն նորուն պատճառի ասէր առ աշակերտսն. «Որ » ձեզ ընդ, ինձ ընդ, և որ զձեզ անարգէ, զիս անար- » գէ. և որ եկեղեցւոյն ոչ ընդ, եղիցի քեզ իբրև ըզ- » հեթանոսն»։ Եւ զնոյն հաստատեաց դարձեալ, յորժամ ասաց. «Ուրաքեցից ձեզ զհոգին Ճշմար- » տութեան, որ ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան»։

Ըստ նմանէն և երանելի առաքեալն ասէր զայս Ճշմարտութիւն. է զի առ եպիսկոպոսունս դարձուցեալ զբանն ասէ, Յեկեղեցւոջ «Եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ տեառն զոր ապրեցոյց արեամբն իւրով»։ Եւ նպատակ տեսչութեանս ոչ արդեօք էր անարկեանութիւն հաւատոյ ժողովրդեանն Աստուծոյ։

Եւ է դարձեալ զի առ Եփեսացին գրէր, եթէ Յիսուս Քրիստոս եդ յեկեղեցւոջ իւրում «Ուրաքեալս և հովիւս և վարդապետս», առ ինչ արդեօք, «Ի հաստատութիւն սրբոց, զի մի յայսմ հետէ էջեմք » տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոց » վարդապետութեան խաբէութեամբ մարդկան». զլ. 4։ Ապա ուրեմն 'ի վարժից անտի հովուաց և վարդապետացն եկեղեցւոյ, և ոչ յառանձին ինչ հետազօտութենէ գրոց կամեցաւ առաքեալն զտուգութիւն անարկեանութեան հաւատոյն մերոյ։

Եւ յորժամ կամեցաւ խօսել յաղագս վարժից վարդապետութեան եկեղեցւոյ, քանզի միտ դիր զինարդ 'ի նշանակ անվանելի զօրութեանն բացայայտեաց զան-

սխալութիւն. « Օէն զինուորութեան մերոյ, ասէ,
» զօրաւոր Աստուծոյ առ 'ի քակելոյ զամուրս, զկար-
» հուրդս քակեմք, և զամենայն բարձրութիւն հպար-
» տացեալ 'ի վերայ գիտութեանն Աստուծոյ. և գե-
» ռեմք զամենայն միտս 'ի հնազանդութիւն Քրիստո-
» սի » բ. Կորնթ. 10: Նա հուսկ ուրեմն առ 'ի քա-
ջայայտ ևս ցուցանել զիշխանութի եկեղեցւոյ 'ի սահմա-
նել զհաւատս, գրէր առ Տիմոթէոս. ա. Յ. « Գիտաս-
» ցես զինքդ պարտ իցէ քեզ 'ի տանն Աստուծոյ շրջել,
» որ է եկեղեցի Աստուծոյ սիւն և հաստատութիւն
» ճշմարտութեան »: Քանզի և քաջայայտ է եթէ
ճշմարտութիւնն միշտ ընդդէմ արձանացեալ կայ սը-
տութեան և մոլորութեան, արդ զեկեղեցին կոչէ
« Հիմն և խարիսխ ճշմարտութեան ». զի 'ի նմանէ
ունիմք զճշմարիտ հաւատն և զաներկեանն:

Նա արդ շատ իցէ արդեօք այս ամենայն, և կամի-
ցիս այլ ևս յառաջ քեզ ածել վկայութիւնս 'ի գրոյ,
եթէ իշխանութեան եկեղեցւոյ պէտք են 'ի սահմանել
զհաւատս մեր, և ոչ հեղինակութեան գրոց միայն:

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Նա բնաւ իսկ շատ են, և ստուգութեամբ ասելով՝
ազդոյք են վկայութիւնքն և սահմանիչք. Այլ մնայ
ինձ և ինչ մի այլ 'ի հարցանել, և քեզ 'ի լուսաբա-
նել: Ինձ թուի իբրև անշուշտ, եթէ յանհնարից է
մարդոյ, թէպէտ և քաջուս առն և հանճարեղի՝ մինչ-
նորդաւոր միայն առանձին հետազօտութեանն 'ի գիրս՝
ստանալ անձին հաւատս իմն ստոյգ և աներկեան, 'ի
տեսանել իւրում զկարծիս իւր դատապարտեալ 'ի կա-
թողիկէ եկեղեցւոյ:

Ալ իմ առ քեզ այժմիկ այս է հարցումն 'ի լուսաբանել ինձ և ես։ Արդեօք այդ դրութիւն մերոյ քարոզչայ՝ միայն իբրև դրութիւն իմն իցէ 'ի տեսութեան, թէ արդեօք և 'ի գործադրութեան։ Առաջի դնեն դոքա մեզ այո՝ առնել զառանձին հետաքննութիւնդ զայդ 'ի գիրս սուրբս։ Ալ արդեօք և ինքնին նոքա առնեն զնոյն։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Զայդ և ես ինքնին կամիմ ասել քեզ, և այնպէս ապա վախճան առնել տրամախօսութեանց մերոյ։

Զնայք և քաղաքավարութիւն նորաձայն քարոզչայդ այդոցիկ յայտնապէս իսկ հակառակամարտ զինեալ կան իւրեանց իսկ սկզբանց, որպէս զի և սաստիկ ամօթ հասանէ նոցա՝ վասն այնորիկ։ Թէպէտ և այնչափ փաստս կցկցեն նոքա և այնչափ ճառս կոտորեն վասն սկզբանցն այնոցիկ 'ի տեսութեան, 'ի վերայ այսր 'ի գործածութեան անդ զան և միանան նոքա ընդ դրութեան նոցուն իսկ ուղղափառացն. քանզի և անհնար է նոցա հեռի կալ յայնմանէ։

Ու 'ի վախճան առնել հրապարակական պայքարաց 'ի խնդիրս կրօնի, և առ 'ի սահմանել զհաւատս առն առն իւրաքանչիւր ոչ այլ ճանապարհ և օրինակ վարեն նոքա քան թէ զհեղինակութեան և զիշխանութեան, 'ի բաց թողեալ յայնժամ զհամբաւեալն իւրեանց ճանապարհ զառանձին հետաքննութեանն 'ի գիրս սուրբս։

Ու արդ 'ի քնին առցուք մի առ մի զիւրաքանչիւր 'ի կրկին մասանցս։ «Յաղագս հրապարակական պայքարացն 'ի խնդիրս հաւատոյ»։ Ամենայն քեզ կա-

նանքն, զոր վասն այնոցիկ սահմանեցին նոքա 'ի գիրս անդ Հրահանգին Իւրեանց տպագրեալ յամին 1667. կարգեցին եդին նոքա ատեանս իմն և ժողովս, որոց պարտ էր դատել և հետախուզել զպայքարսն զայնոսիկ: Ատեան ժողովոյն պարտէր բաղկանալ 'ի հոլովայ նոցա և քարոզչաց. դարձեալ և յերկոցագունեցն իւրաքանչիւր թեմին: Երրակի էին ատեանքն. Համախմբութիւն. Սինհոդոս գաւառական. և Սինհոդոս ազգային: Ի համախմբութիւնս գային ժողովէին քարոզիչք բազումք 'ի մերձակայ վայրացն: Ի գաւառական Սինհոդոսն քարոզիչք ողջոյն գաւառին: Ի Սինհոդոսն ազգային հոլովք և քարոզիչք ողջոյն ազգին առհասարակ:

Յատենին պայքարս երկուց ոմանց 'ի քարոզչաց նոցա 'ի խնդիրս ինչ կրօնի, մարթ է 'ի դատաստանէ անտի ունկնդրացն բողոքել 'ի դատաստան ժողովոյն Համախմբութեան, խոստանալով չափ՝ ոչ հրատարակել գրով ժողովրդեան զկարծիս իւրեանց մինչև 'ի ժամանակ գումարելոյ Համախմբութեանն: Իսկ 'ի մէջտեղ անդ խնդրոյն 'ի դատաստանէ ժողովոյն Համախմբութեանն, եթէ ոք 'ի քարոզչայն ընդդէմ զինեցի այնմ, վաղվաղակի ասցէ զպատիժ Կախման. ապա եթէ հրատարակեսցէ ժողովրդեան զկարծիս իւր, 'ի բաց վտարեն զնա յայնժամ յեկեղեցւոյ:

Եւ կանոնք վարդապետութեանս այսորիկ քաջածանօթք են. քանզի յայտնի ընթեռնումք այսպէս 'ի սահմանադրութեան նոցա. Յօդուած 30. « Պայ-
» քարք, ասէ, 'ի խնդիրս հաւատոյ սահմանեալ որո-
» շեսցին 'ի բանէն Աստուծոյ, եթէ մարթ ինչ լինի,
» 'ի պայքարել անդ երկուց ընդ միմեանս. ապա թէ
» ոչ՝ առեալ տարցեն զինդիրն յատեան Համախմբու-

» թեանն, և 'ի նմանէ դարձեալ 'ի Սինհոդոսն գա-
» ւառական, և 'ի վախճանի առ Սինհոդոսն ազ-
» գային, ուր և եղեցի ամբողջ և վախճանական լու-
» ծումն վասն բանին Աստուծոյ։ Ապա եթէ ոք ընդ-
» դէմ դարձցի այնմ և ոչ կամեսցի հանդարտել այ-
» նուհետև յն և լցէ խնդիրս հաւատոյ հրաժարելով
» յայտնապէս 'ի մոլորութենէ իւրմէ, 'ի բաց հատցի
» յեկեղեցւոյ »։ Աւասիկ քեզ դատաստան յաղգային
Սինհոդոսի նոցա, ըստ նմանէն և դատակնիք եկե-
ղեցական պատժոյ. ըստ որում է տեսանել և 'ի կա-
թողիկէ եկեղեցւոջ ուղղափառայ։

Բայց Սինհոդոսն նոցա գումարեալ 'ի Վ. Լիդրի
յամին 1617, սահմանադրութիւն մի ևս այլ 'ի դուրս
եհան առաւել նշանաւոր։ Սահմանեայ զի 'ի տանել
անդ զպայքար խնդրոյն 'ի Սինհոդոս անդր ազգային
առ 'ի վճռել զդատն, պարտիցին յառաջագոյն ապա-
հովել զհպատակութիւն երկոցուն կողմանցն պայքա-
րողաց, և տալ նոցա կռել զերդումն օրինակ զայս.
« Խոստանամք առաջի Աստուծոյ հպատակել զան-
» ձինս յամենայնի զոր սահմանեսցէ Սինհոդոսն մեր
» սուրբ. քանզի և հաւատամք եթէ Աստուած ինք-
» նին նախաթող նստցի անդ և առաջնորդեսցէ մեզ
» Հոգւովն իւրով 'ի ճշմարտութիւն և յիրաւունս
» ըստ կանոնի բանին իւրոյ »։

Վասն որոյ և Սինհոդոսն Շարէնդոնի գումա-
րեալ 'ի 1647. դատապարտեայ զվարդապետութիւն
զՆեսխիցն և զՆեսատիցն, « Որք յաւանեալք,
» ասէ, ոչ կամին ճանաչել զհեղինակութիւն զՀա-
» մախմբութեանցն և զՍինհոդոսացն 'ի գնայս իւ-
» րեանց և 'ի բանս, քանզի և յայտնապէս այս աղանդ
» վնասակար զոյ որչափ ինչ սահմանայ Տէրու-

» թեանն, այնչափ և եկեղեցւոյ. քանզի դուռն բանայ
» անարգել ամենայն անկարգութեանց և ստահակու-
» թեանց. և զի միանգամայն զամենայն հնարս զդե-
» ղոյ դարմանոց կարձէ 'ի մէջ. և թէ վայրիկ մի
» տեղի գտցէ յընդարձակի, այնչափ կրօնք և այնչափ
» հաւատք 'ի վեր երևեսցին, որչափ և ժողովրդապե-
» տութիւնք »:

Եւ այսպէս ասա որ միանգամ ընդդէմ կացեալ ոչ հպատակէր վճռոյ Սինհոդոսին, նզովեալ էր: Բայց, միտ դիր քաջ, զի՞նդ արդեօք մարթ ի՞նչ նզովից նոցա 'ի միասին կալ ընդ սկզբանց նոցա հետաքննութեան 'ի գիրս զոր շնորհեն նոքա առն առն իւրաքանչիւր առնել առանձինն:

Եւ եթէ այս այսպէս, որոմ իրաւամբք, աղէ ասա, հիմնադիրքդ նորաձայնութեան Լուտերը և Կալվին ժտեցան ընդդէմ դառնալ դատաստանի կաթողիկէ եկեղեցւոյ, որ էր յայնժամ մի միայն եկեղեցի Քրիստոսի 'ի վերայ երկրի, և զի՞նդ նոցուն հետևողք համարձակեցան յետ այնորիկ սահանջել սնոտի զայսչափ հպատակութիւն դատաստանի Սինհոդոսայն իւրեանց:

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Այլ ասա. 'ի Սինհոդոսն յայնոսիկ՝ զոր ասես՝ ամենայն կանոնական սահմանի ըստ բանիցն Աստուծոյ. որպէս և դաւանին իսկ նոքա, և անդանօր դատաստանն և դատաւորն է առաւել բանն Աստուծոյ, քան թէ հոլովք և քարոզիչք:

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Այդպէս ասեն նոքա, գիտեմ քաջ։ Այդպէս ասէ և եկեղեցի ուղղափառաց. այլ սա ճշմարտապէս վկայ ճիւս իւր և զսահման, որպէս յառաջագոյն ցուցի, հանէ 'ի գանձէ անտի գրոց սրբոց և Աւանդութեան։ Նա ասէ նա այդպէս աներկեան հաստատութեամբ. իբրև զի 'ի զօրութենէ խոստմանցն Քրիստոսի ինքն է միայն անսխալ թարգման և մեկնիչ կրկնակի աղբերացն Յայտնութեան, Գրոցն ասեմ և Աւանդութեան։ Իսկ Սինհոդոսդ զուր և տարապարտ ասէ զայդ, զի չկարէ ասել յաներկմիտս. քանզի չեղեն առ նա խոստմունքդ քրիստոսեան։

Ո՞ւր թողցուք զայն, զի զայդ ասելով և միանգամայն ընդ յանդուգն ասացուածոյդ դատաստան սահմանական 'ի դուրս տալով ընդ դատակնքաւ նղովից, նովին իսկ Սինհոդոսդ այդ յերկիր կործանէ զսեպհականեալն իւր դրութիւն հիմնական։

Քանզի խնդիր անուանի 'ի գիտել, այս է. եթէ արդեօք գիրք սուրբք բաւականն էցեն միայնակ առանց այլոց իւիք հեղինակութեան և առանց այլոց ուրուք դատաստանի արտաքոյ գրոց։ Նորաձայն քարոզիչքդ ասդելով ասդեն, եթէ նա միայնակ բաւական է։ Եւ այսպէս յորժամ յետ այնորիկ սահմանեցին 'ի մէջ իւրեանց Խօսարանս իմն և Համախմբութիւնս և Սինհոդոս և դատաստանս, նովին գործով զդրութիւն սկզբանց իւրեանց տապալեցին և ինքնին նոքա ծանեան զտութիւն սկզբանցն։

Այլ սակայն քաջայայտ ևս ծանեան նոքա զնոյն յերկրորդում մասին խնդրոյն. որ վասն ժամ է ասել այսուհետև։

« Յաղագս մանաւոր և առանձին հրահանգաց նոցա »։

Ինն և սկիզբն նորաշանդիցդ այս է, եթէ այր իւրաքանչիւր պարտի սահմանել զհաւատս իւր 'ի ձեռն առանձին հետաքննութեան իւրոյ 'ի գիրս սուրբս։ Զոր արդ հարցանեմ. իցէ՞ն արդեօք 'ի նոսա բազումք ոմանք, կամ թէ իցէ՞ արդեօք մի ոք միայն որ ճշմարտապէս արարեալ իցէ զհետաքննութիւնդ զայդ։

Զոր եթէ արարեալ ևս իցեն, յոչինչ արդեօք պիտանացու լեալ իցէ. քանզի և չիք հնար առանձին հետաքննութեանդ այդմիկ լինել միջնորդ 'ի ստուգութիւն և յաներկեւանութիւն հաւատոյն։

Այլ թողեալ զայս, մարթացա՞ն երբէք նոքա առնել զայն։ Արդեօք յաջողեցա՞ն ինչ նոքա յորոշել ըստ կանոնական գիրսն յանկանոնիցն, եթէ 'ի ձեռն նշուլից ճառագայթից որ 'ի նոցուն գրոցն ինքնին փայլատակեն, որպէս ասացին. եթէ 'ի ձեռն տնկակից ախորժակին իւրեանց, եթէ 'ի ձեռն ներքին ազդման կամ՝ ներշնչութեանն, զոր քարոզեցին։

Զի՞թէ միջամուխ ինչ եղե՞ն նոքա 'ի քննել զկնդիր զայն երևելին և 'ի գիտել, թէ արդեօք հեղինակութեանն Զկեղեցւոյ՝ եթէ հեղինակութեան գրոց անկ իցէ աներկեան գործել զհաւատս։ Զերբէք թափեցի՞ն նոքա ինչ ճիգն յերեան ածել, ո՞չ իցեն հիմնական մատունք հաւատոյ, զոր հնարեցին նոքա. և ո՞չ ոչ, ըստ քմաց ընտրութեան իւրեանց։ Իսկ ապա խորհուրդ քննողաբար երբ հարցին 'ի գրոց կամ թէ ընթերցա՞ն ինչ ուշով զմեկնիչս նոցա 'ի վերայ մասանց ինչ հաւատոյ 'ի մանաւորի (և բաբէ, քանիսն իցէ թիւ նոցա), և մանաւանդ յաղագս հանգանակին, յաղագս վինչութեան վերնջուց բազմադէմ հերձուա-

ծոյն, յաղագս աստուածութեան Բանին, յաղագս աստուածութեան Հոգւոյն սրբոյ, յաղագս վարդապետութեան խորհրդոյ, և յաւիտենականութեան սաստժոյն հանդերձելոյ, և քաւարանի, և արդարացուցման, և արդեանցն, և յաղագս շնորհացն, այլովքն հանդերձ։ Նա միով բանիւ՝ յաղագս միոյ միոյ 'ի մասանց անտի հաւատոյ եբր հետաքննեցին նոքա զգիրս կամ զնոցուն թարգմանս։ Ընդարձն զայս, կամ թէ մի ոք 'ի նոցանէն արաբ զայն։

Բաւ. չարարին երբէք, կան մնան այնպէս առհասարակ 'ի կարծեցեալն իւրեանց վերանորոգութեան հաւատոյ. կան մնան այնպէս 'ի բազմագիմակ հերձուածս նորաձայնութեան իւրեանց, Լութերեանք, Կալվինեանք, Ընդվլիականք, Ընրիվինեանք, Սոկինեանք, և ո՞ կարասցէ թուել զնոսա։ Կան մնան այնպէս 'ի նոյն կայս. և վասն այսորիկ միայն կան մնան այնպէս, զի այնպէս ծնան 'ի նոյն հերձուած. և ոչ այլ խիզ յետ այնորիկ փոյթ ինչ կալան նոքա 'ի քննել։ Ի պատանութեան իւրեանց առին 'ի քարոզչաց իւրեանց հրահանգս ինչ ինչ վասն հաւատոյն իւրեանց. և զայն միայն բաւական համարեցան նոքա, որպէս եթէ ուղղափառ ծնեալ էր նոցա. այս է՝ որպէս եթէ պարտք անհրաժեշտք իցեն նոցա յանձն լինել ողջոյն 'ի դատաստան քարոզչաց իւրեանց, որպէս ուղղափառքն 'ի դատաստան կաթողիկէ եկեղեցւոյ։ Ընդ սու օրինակաւ կեցին նոքա և կեան և կեցցեն 'ի յայտնի իմն և 'ի հանապազորեայ հակասութեան ընդ անձանց իւրեանց։

Սակայն և հոգիւք նոցա և քարոզիչք՝ որոց պարտ էր գիտել ինչ առաւել քան զաշակերտեալսն, արդեօք ուսուցին նոցա զկրօնն համաձայն ընդ սկզբանց ան-

հրաժեշտ հարկաւորութեան առանձին հետաքննութեանն այնորիկ 'ի գիրս սուրբս, Նա բնաւ իսկ ամենևին ոչ։ Այլ հրահանգեցին զնոսա, իբրու արդէն հաւանութիւն բերեալ ներհակակիր իմն սկզբան, այս ինքն՝ հարկաւորութեան հեղինակութեան իմիք, որ Ճշգրտիւ սահմանեսցէ զմիտս և զիմաստ գրոց։

Ի Ղինեվրա՝ օրինակ իմն՝ մի ոմն 'ի նոցուն քարոզչաց 'ի վարժել անդ իւրում զպատանիս 'ի քրիստոնէական վարդապետութեան, և 'ի պատրաստել զնոսա զայն առաջին նուագ յընդունելութիւն խորհրդոց Հաղորդութեան (զոր նոքա Ընթրիք տեառն կոչեն), այն ինչ քարոզէր և ուսուցանէր նոցա եթէ տէրն մեր Յիսուս Քրիստոս ոչ է 'ի հաղորդութեան անդ՝ բայց եթէ իբրև ձևով և օրինակաւ, զհետ երթեալ սկզբանց դրութեան Խորհրդական անուանեալ աղանդոյն, և պատանիքն ունկն եդեալ լսէին, անդուստ յանկարծակի ելն եհաս 'ի վայր անդր պատանի ոմն գերմանացի 'ի քաղաքէն Աւսպուրկայ՝ ուր մեծաւ Սինհոդոսիւ սահմանեցաւ վարդապետութիւն Լուտերի յաղագս Հաղորդութեան խորհրդոյն։ Համարձակեցաւ այս պատանի ասել յայնժամ առ Ղինեվրայ քարոզիչն այսպէս. « Տէր, մինչև իմ աստ ե-
» կեալ առ ձեզ, վարժեցին զիս մերս քարոզիչք և
» ուսուցին հաւատալ եթէ մարմին տեառն մերոյ Յի-
» սուսի Քրիստոսի իցէ Ճշմարտապէս ներկայ 'ի հա-
» ղորդութեան։ Իսկ որ վարժէրն զմեզ յայս վարդա-
» պետութիւն, այր էր իմաստուն և էր իսկ համբա-
» ւեալ իբրև այր ներհուն և հանճարաւոր։ Արդ
» պարտ իցէ ինձ, ոչ գիտեմ, նախապատիւ զձերդ
» դասել հեղինակութիւն քան զնորայն, կամ թէ
» զնորայն քան զձերն։ Պարտ իցէ արդեօք ձեզ՝

» փաստս բանականս և զօրաւորս յառաջ բերել, ո-
» րով և ուղղասէս ընտրութիւն առնել ինձ 'ի մէջ
» երկուցդ » ։

Պատասխանի ետ յայնժամ Ն՚ինեվրայ քարոզիչն
և ասէ. « Բաւ, չէ դատաստանի մարդոյ որոշել
» ընտրել 'ի բանիդ յայդմիկ ։ Ահաւասիկ քեզ սկիզբն
» ընդհանուր քոյին քարոզչին որ վարժեաց զքեզ 'ի
» Ա՚ւասպուրկ, ահա և խմն ։ Զիք հեղինակութիւն
» այլ՝ որում՝ անկ իցէ յապահովել զմեր հաւատս յայս
» խնդիր, ըստ որում և յայլ ամենայն խնդիրս հա-
» ւատոյ, բայց միայն բանն Աստուծոյ, զոր պարտ է
» առն իւրաքանչիւր հետաքննել առանձինն խուզ-
» զական հանճարովն իւրով ։ Իսկ դրութիւնդ այդ
» հեղինակութեան առ 'ի սահմանել զհաւատս, է
» գործ հոգեմտական եկեղեցւոյ և ամենայն ուղղա-
» փառաց, զոր մերն հարք լքին թողին. այն զի՝ տի-
» բապետութիւն իմն անարդար 'ի գործ վարէր նա 'ի
» վերայ ոգւոյ և հանճարոյ մարդկան ։ Ունիմ՝ առիս
» պաստուածաշունչ մատեանն, տայ քեզ զայն, ըն-
» թերցիր ուշի ուշով. անդ գտցես դու փաստս յընդ-
» դիմադրութիւն և 'ի ջատագովութիւն ։ Եւ թէ
» Լ՚ութեր և Օ՚ուինկլիոս, թէպէտ և երկոքեանն ևս
» հանճարաւորք՝ ոչինչ մարթացան զօրութեամբ գրոցն
» միաձայնիլ 'ի խնդիր յայս հաւատոյ, համայն և այն-
» պէս ցանկ դու պարապեսց յընթեռնուլ. քանզի
» այս է միջնորդն սահմանեալ 'ի Քրիստոսէ 'ի կնքել
» զհաւատս. և նա ինքն օգնեսցէ քեզ և դու առցես
» 'ի քեզ ազդումն իմն փրկաւէտ. և մարթ է եթէ և
» յայտնութիւն ինչ ծագեսցէ 'ի քեզ » . Օ՚այս այս-
» պէս պատասխանի ետ Ն՚ինեվրեան քարոզիչն ։ Ա՚յլ
սակայն ես ոչչափ ինչ տեղեկացեալ եմ՝ քոյ, ոչ զք

այլ 'ի քարոզչացդ նորաձայնից երբէք զայդ օրինակ լեղու 'ի գործ վարեաց, և ոչ վարեսցէ երբէք։

Քանզի և անշուշտ ոչ ոք 'ի հոլուաց այտի նորաձայնութեանդ առ 'ի վարժել զհօտ իւր պատրաստեսցի յառաջագոյն առնուլ ժողովել առ իւր, առ ձեռն պատրաստ եղեն կամ՝ ուղիղ հարիւր աստուածաշունչ մատեանս, և յետ առաջի դնելոյ նոցա պարզ և մեկին զգլխաւոր մասունս հաւատոյ զտարբերիչս ուղղափառաց 'ի նորաղանդից, ըստ որում են՝ հաւատք արդարացուցման, կոչումն և բարեխօսութիւն սրբոց, հաւատք քաւարանին, անձառ խորհուրդ հաղորդութեան, խորհուրդ ապաշխարութեան, նախագահութիւն յեկեղեցւոջ Քրիստոսի հայրապետին Հռովմայ իբրու յաջորդի առաքելապետին Պետրոսի, անսխալութիւն եկեղեցւոյ, այլովք բազմաք հանդերձ, յետ առաջի դնելոյ նոցա՝ ասեմ՝ զայս ամենայն՝ բաշխեսցէ նոցա զմատեանսն և սկսանիցի ասել ցժողովուրդ իւր այսպէս. « Ահաւասիկ ձեզ մասունքդ այդ հաւատոյ » դժուարիմանալիք. իսկ 'ի սահմանել որոշել ինչ » գնոցանէ մի ակն ունիցիք դուք առ յինէն։ Զիք 'ի » վերայ երկրի հեղինակութիւն որ զայդ կարասցէ առ- » նել. եկեղեցիք մեր վերանորոգեալք չեն առ այդ » բաւական, ոչ և Հռովմայ եկեղեցի և առհասարակ » եկեղեցիք ուղղափառաց։ Գիրք սուրբք են միայնակ, » զոր ընտրեաց Քրիստոս առ 'ի սահմանել զհաւատս. » և զայս գիրս ոչ պարտի ոք մեկնել, բայց եթէ մեք ինք- » նին. որովհետև այր իւրաքանչիւր պարտի վաստա- » կել վասն անձին իւրոյ։ Ահաւասիկ ձեզ աստուածա- » շունչ մատեանքս՝ զորս ժողովեցի բաշխել ձեզ, ուշի » ուշով պարապեցէք յընթերցումն նոցուն, և դուք » ինքնին ապա սահմանեալ որոշեցէք զհաւատս ձեր »։

Եւ արդ բարեկամ, ինձ թուի եթէ որչափ ինչ արժան և պարտն էր տրամախօսեցաք մեք աւադիկ 'ի վեցեակ գլուխս։ Եւ կամիմ զարդիս ծայրաքաղ համառօտել քեզ զայնոսիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՎԵՑԵԱԿ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ

Վ ախճան տուեալ զրուցատրութեանցս, արդ հարցանեմ. կացա՞ք մեք 'ի խոստման մերում. արդեօք ըրումն փափաքանաց ձերոց տուա՞ք ըստ կարի։ Ա՛հա քեզ և բովանդակութիւն ամենայնին։

Ա. « Եթէ պարտ է միանալ ընդ Եկեղեցւոյ ընդ այնմիկ, որ է միայն եկեղեցի Քրիստոսի »։ Այս եղև առաջին առաջարկութիւն իմ, զորմէ ճառեցի. և ճշմարտութիւն ճառին այնչափ իմն հաւատարմացաւ քեզ, մինչ զի և ոչ կամեցար այլ աւելի ճշգրտել ինչ զբանն։

Բ. Օ՛հետ բերի եթէ, « Եկեղեցի Ուղղափառաց միացեալն ընդ Հռովմայ է միայն Եկեղեցի Քրիստոսի »։ Եւ 'ի հետաքննութեան այսր երկրորդ առաջարկութեանս դեգերեցաք մինչև ցայժմ։

Յառաջ բերի քեզ վասն այնր երրեակ պատճառս. Առաջին՝ եթէ այս եկեղեցի ընդ տիեզերս՝ է նոյն ինքն հիմնարկեալն 'ի Քրիստոսէ. և թէ՝ կառավարեալ առաջնորդի նա 'ի նոցուն իսկ 'ի հովուացն որ առաքեցան 'ի նմանէ. և թէ՝ անմարթ է հաստատել զայս յաղագս նորաձայնութեան եկեղեցեացդ։ Երկրորդ՝

եթէ եկեղեցիս այս ժառանգէ զկնիքն զայնոսիկ գնշանաւորս և զյատկութիւնս քրիստոսեան Եկեղեցւոյ։

Իսկ 'ի հաստատել զայնոսիկ 'ի զօրավիճն ինձ կալոյ զանսխալ և զանսասանելի հիմունսն. այս է՝ զգիրս սուրբս, և զկրկին Հանգանակս քրիստոսեան հաւատոյն։

Եւ ապա 'ի հանգանակսն յայնոսիկ ետու խելամուտ լինել չորից գլխաւոր նշանաց եկեղեցւոյ Քրիստոսի. որ են՝ Միութիւն, Սրբութիւն, Կաթողիկէութիւն կամ Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն։ Եւ ապա զմի մի 'ի նշանաց աստի խնդրեցի մերձեցուցանել յեկեղեցի ուղղափառաց և յեկեղեցիս նորաղանդիցդ։ Եւ յայտնի ապացուցի, եթէ քառեակ նշանքդ միանգամայն անվթար 'ի դէպ գան միայն եկեղեցւոյն ուղղափառաց, և ոչ մի ինչ յայնց նշանացն երբէք մարթի պատշաճիլ նորաձայնութիւնք եկեղեցեացդ։

Եւ զնոյն դարձեալ քաջիկ ցուցի յերից անտի յատկութեանց, զոր գիրք սուրբք ընծայեն եկեղեցւոյ Քրիստոսի. այս են՝ Ընդակասելիութիւն, Երևելիութիւն, և Ընսխալութիւն։

Եւ զհետաքննութիւն մեր զայս դու ինքնին կնքեալ հաստատեցեր անկեղծ խոստովանութեամբդ, եթէ անշուշտ անդիմադրելի է՝ զոր միանգամ ասացի վասն խնդրոյն այնորիկ։

Իսկ 'ի վերջէ ապա 'ի ներքս արկի քեզ զերրորդ ցուցակութիւն վասն նորոն Ճշմարտութեանն։ Եւ 'ի վեր հանի զնա 'ի կրկնակի կնքոյ անտի՝ որ տպաւորագոյնքն են քրիստոսական հաւատոյն, առանց որոյ անհնար է լինել վասն մեր սկիզբն արդարացուցման առ 'ի գտանել զփրկութիւն. այս են « Ընդ մեղջութիւն հաւատոյ, և աներկեան ստուգութիւն հաւա-

ասց։ Եւ ցուցի քեզ յայտնապէս եթէ կրկին այս կնիքք սեպհականք են միայն հաւատոյ եկեղեցւոյն ուղղափառաց. և գլխովին անբաժ են 'ի նոցանէ կարծեցեալ հաւատք նորաղանդիցդ, որովհետև ոչ ճանաչեն նոքա ոչ զԱնդրութիւնն աստուածային և ոչ զԵկեղեցւոյ իշխանութիւնն աստուածատուր։ Եւ դու ինքնին հաւաստի վկայեցեր զի քաջ իսկ հաւատարմացան քեզ այս կրկին կնիքք ճշմարտութեան հաւատոյն ուղղափառաց. և զի միայն իշխանութիւն եկեղեցւոյ և Անդրութիւնն մարթի ընծայել հաւատոյս մերոյ զաներկևան ստուգութիւն և զանվթարն ամբողջութիւն »։

Եւ արդ անյեղլի մտաք հաւանեաք իցէ քո 'ի բանս, ասէ ասա. և արդեաք բաւական թուիցի՞ն քեզ այդոքիկ 'ի դաւանել ողջմտութեամբ, եթէ « Եկեղեցի » ուղղափառաց ընդ տիեզերս միացեալ ընդ Հռովմայ » իցէ միայն եկեղեցի Քրիստոսի »։

Քանզի և այլ ևս 'ի վերայ այնոցիկ մարթ էր ինձ փաստս և ցուցակութիւնս տալ քեզ առաւելութեամբ. բայց ես 'ի տիրադունիցն ընտրութեամբ առաջի եղի քեզ...

ՆՈՐԱՂԱՆԴՆ

Քաջ բաւականք են այդոքիկ։ Ահա կրկնեմ զնոյն խոստովանութիւն յանկեղծ սրտէ հանդերձ մեծաւ շնորհապարտութեամբ. հաւանեալ եմ ճշմարտութեանդ զոր ցուցեր ինձ քաջայայտ բանիւք։ Մտախորհ եղէ բաղում անգամ 'ի նոյն, և աղաչեցի ևս զԱստուած յամենայն սրտէ լուսաւորել զիս։ Եւ չկամ իմ այլ տարակոյս 'ի բանիդ. և մեծապէս գոհութեամբ սրտի ճանաչեմ ես այսուհետև զեկեղեցի ուղղափառաց մի միայն եկեղեցի Քրիստոսի։

ՎԱՐԴԱՊԵՏՆ

Խնդամ և ես 'ի բոլոր սրտէ։ Պարտ է Աստուծոյ միայնոյ շնորհս ունել և գոհանալ հանապազ։ Ամենայն փաստք բանականք և զօրաւորք ներգործեն և ոչինչ, յորժամ շնորհքն 'ի վերուստ մերձ ոչ իցեն, որ լուսաւորեսցէ զմիտս և ազդեսցէ 'ի հոգին։ Բայց դու հանապազորդեայ աղաչել միշտ զԱստուած յամենայն սրտէ։

Այլ արդ որովհետև Ճշմարտութիւնն ինքնին անսահման բարութեամբն շարժեաց զքեզ, և այլ ևս երկայնագունից բանից և քննութեանց ասես չունել քեզ պէտս այսուհետև առ 'ի Ճանաչել զեկեղեցի ուղղափառաց իբրև միակ եկեղեցի Քրիստոսի, ապա զկրկին զայս հետևանս անհրաժեշտս հանցես դու 'ի վեցեակ Տրամախօսութեանց մերոց։

'Նախ՝ եթէ չար ուրեմն գործեցին և չար մեծ յոյժ հիմնադիրքդ այդոքիկ նորաձայնութեան հաւատոյն Լութեր և Կալվին 'ի թողուլ իւրեանց զեկեղեցի ուղղափառաց յորում ծնեալ և սնեալն էին. որովհետև չգոյր նոցա փաստ բանաւոր 'ի թողուլ զքանել զմիակ եկեղեցին Քրիստոսի։

Երկրորդ՝ ապա ուրեմն հարկ է Լութերեանցն և Կալվինեանցն և որոց ընդ նոսա՝ դառնալ վերստին 'ի նա. քանզի միայն 'ի ծոցի եկեղեցւոյս այսորիկ՝ յորմէ անանջրպետ է Քրիստոս ըստ անսուտ խոստմանն, մարթ է նոցա աներկևանութեամբ ակն ունել յաւիտենական փրկութեան։

ՑԱՆԿ

ՎԵՑԵԱԿ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ

ՑԱՌԱՋԱԲԱՆ 3

Ա. Հիմնարկութիւն եկեղեցւոյ. Հաստատութիւն նորա. Կարգ տեսչութեանն 'ի խնդիրս հաւատոյ ընդդէմ հերձուածողաց, և ըստ մասնեայ՝ 'ի վեշտասանեորդ դարուն ընդդէմ Լութերի և Կալվինի և արբանեկաց նոցա 9

Բ. Պարտ է և հարկ է նորաղանդից թողուլ զժողովս իւրեանց և միանալ ընդ Եկեղեցւոյն ուղղափառաց։ Նախ՝ զի զայս Եկեղեցի հիմնարկեաց ինքնին Քրիստոս, և ինքն եւ նմա գլուխ և Առաքեալս։ Երկրորդ՝ զի զնորաղանդիցն ոչ հիմնեաց Քրիստոս. և Հովիւք նոցա չունին առաքելութիւն 'ի Քրիստոսէ 29

Գ. Եկեղեցի ուղղափառաց է միակ Ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի, քանզի նա միայն է ունակ չորից նշանաց եկեղեցւոյ. որ են՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն. յորոց անբաժ են ընկերութիւնք Լութերեանց և Կալվինեանց 61

Դ. Սրբութիւն Եկեղեցւոյ։ — Եւ երրեակ յատկութիւնք նմա միայնոյ սեպհականք, այսինքն՝ Անպակասութիւն, երևելիութիւն, և անախալութիւն 89

Ե. Աւանդութիւն աստուածային։ — Ամբողջութիւն և Ստուգութի հաւատոյ, կնիքք սեպհականք միայն Եկեղեցւոյ ուղղափառաց 123

Զ. Ստուգութիւն հաւատոյ։ — Անհնար է նորաղանդին գտանել զստուգութիւն հաւատոյն իւրոյ յառանձին հետազօտութենէ իւրմէ 'ի գիրս։ Անհրաժեշտ պէտք են հեղինակութեան Եկեղեցւոյ 'ի ստուգել զհաւատս հաւատացելոց 149

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ